



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

✓-Ltn  
347



ՊՕՔԱԶԻՕԻ

# Տ Ա Ս Ն Օ Ր Ե Ա Կ Ը

ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐ Ա.



ԻԶՄԻՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՄԱՄԼՈՅ

ԵՐԿՈՒ ԽՕՍԻ ՊՕՔԱՉԻՕԻ ՎՐԱՅ

Պօքաջիօի վրայ խօսող իտալացի եւ գաղղիացի կենսագիրները՝ անոր կեանքի դէպքերուն վրայ գրեթէ բան մը չեն ըսեր, բայց թէ 1313ին թօսքանայի Ձերթալտօ պզտի քաղքին մէջ ծնած է պատուաւոր ընտանիքէ՝ եւ հոն մեռած է 1375ին: Ըստ ոմանց շատ ճամբորդութիւններ ըրած՝ եւ Ֆրանսայէն դառնալուն Նաբօլի երթալով՝ վերգիլիոսի գերեզմանին վրայ երդում ըրած է առուսուրէ քաշուելով՝ գրականութեան ասպարէզը մտնել որու մէջ մեծ անուն եւ համբաւ ստանալով արքունեաց մէջ մտած է:

Պօքաջիօ գեղեցիկ սեռին համար ջափազանց համակրութիւն մը ունէր՝ քսանչորս տարեկան հասակին մէջ կրօնաւոր օճուելուն հակառակ՝ եւ պատմագիր մը կը հաւաստէ թէ Նաբօլիի Յովհաննա Թագուհին սիրած է նա:

Պօքաջիօ՝ հեզահամբոյր, զուարթ ու զրօսեցուցիչ մարդ մէր, ինչպէս որ գաղղիացուց մէջ իր հետեւորդներ եղած են Ռայլէ եւ Լա Ֆօնթէն: Մեծ հմտութեան տէր էր նա ա՛յնպիսի դարու մը մէջ ուր տակաւին գրական հարստութիւնը տպագրութեան շնորհիւ չէր տարածուած, իր գրութիւնները յարգի էին մանաւանդ իրենց աննման ոճին համար: Իր *Sauvages* եակէ գտտ՝ որ ազատ ոճ մ'ունենալուն հակառակ Լաբարոյական կը պարունակէ եւ շատ նշանաւոր է, նաեւ յոյն հեղինակներու գործեր Թարգմանած ու խել մը քերթուածներ յօրինած է, որոնք միշտ ախորժով կը կարդացուին:

\*\*  
\*\*



Հանձնաժողովին համեմատ ու հագած՝ Սրբայն Մարիամայ եկեղեցւոյն մէջ իրարու պատահեցան։ Ամենէ տարեորք հաղիւ քսանութ տարեկան կար, ու ամենէ դեռահաւոր տասութէն վար չէր։ Ամենքն ալ կամ բարեկամ կամ ինամի էին իրարու, ազնիւ բնտանիքէ, գեղեցիկ, խելացի, և համեստ։ Անուննին չեմ ուզեր տալ, վասն զի հրատարակած մանրավէպերս անոնց գործերն՝ և մասնաւոր այն ատենի զբօսանքին զուարճութեան օրէնքը այսօրուանէն տարբեր բլլալուն՝ կը վախնամ որ այս անխոհեմութիւնովս ամանց յիշատակը՝ և դեռ ապրողներուն ալ համբաւը կ'արատեմ։ Ասկէ զատ նախանձուներու և չարասիրտ մարդերու ձեռքը չեմ ուզեր զէնքեր տալ որպէս զի զանոնք ծաղրեն։

Ուստի այս տիկիւնները դիպուածով եկեղեցւոյն մէկ անկիւնը հանդիպելով իրարու մօտեցան պատարագէն ետքը՝ և շրջանակ մը կազմեցին։ Նախ ժանտախտին վրայ խօսեցան որ իրենց հայրենիքը աւերակ կը դարձընէր, յետոյ մէջերսնէն մէկը՝ զոր տիկին Բանբինէ պիտի կոչեմ,

— Սիրելի տիկիւններ, բաւ, դուք ալ անշուշտ ինձի պէս լրած էք որ իր իրաւունքը պատուաւոր կերպով գործածողը մէկու մը ֆրաս չտար։ Ամեն շնչաւոր էակներու բնական բան է որ իրենց կեանքը, որչափ որ կրնան պաշտպանեն ու պահեն։ Այս զգացումը այնքան օրինաւոր է՝ որ շատ անգամ սպաննութիւններ բրած են մարդիկ՝ առանց ոճրագործ՝ կամ պատժոյ արժանի դատուելու։ Եթէ այսպիսի պարագայներու մէջ օրէնքը անգամ այսպիսի բնթացք մը կը ներէ, որքան առաւել մենք իրաւունք ունինք առանց մէկին ֆրաս տալու մեր կենաց պահպանութեան համար հարկ եղած միջոցները ձեռք առնելու։ Տարակոյս չունիմ որ ամենքն ինդ ալ ինձի պէս կը մտածէք, և կը զարմանամ թէ ինչո՞ւ մեզ վախցընող առարկային դէմ դարման մը չենք մտածեր։ Կարծես թէ հոս կը մնանք թաղուած մեռելներու հաշիւը բռնելու՝ կամ տեսնելու թէ մեր կրօնաւորները՝ որոնց թիւը սաստիկ քիչցած է հիմայ, որոշեալ ժաման իրենց պաշտօնը կը կատարեն։ Այս եկե-

ՆԵՐԱԾ ՈՒԹԻՒՆ

Երբ կը մտածեմ, գեղեցիկ սեռդ, որ բնականօրէն քնքուշ և կարեկցող սիրտ մ'ունիք՝ չեմ տարակուսիր որ այս ներածութիւնը ձեզ տաղտուկ և զգուանք պիտի պատճառէ, յիշեցնելով այն սոսկալի ժանտախտը՝ որ սոսկալի կոտորածներ բրաւ։ Սակայն լմ նպատակը այդ նկարագրութիւնը բնելով զձեզ այս գիրքը կարգալէ հեռացընել չէ, այլ ձեզ աւելի ախորժելի ներկայացընել այն բաները՝ որ այս տխուր յառաջարանին պիտի յաջորդեն։ Մեծ դժուարութեամբ ժայռոտ ու ցից լեռնէ մը վեր մագլցող ճամբորդ մը՝ աւելի քաղցր հաճոյք մը կ'զգայ երբ անոր գագաթը հասնելով՝ իր առջևն բնդարձակ ու ծաղկալիր դաշտ մը կը տեսնէ։ Այսպէս ես ալ, սեռդ գեղեցիկ, կը համարձակիմ ձեզ խոստանալ որ ներկայ ներածութեանս բնթերցումով ձեր զգացած ձանձրոյթը լիովին պիտի վարձատրուի ետքէն։

Հազար 348ին Իտալիոյ ամենէ գեղեցիկ քաղաքին՝ Ֆլորանսի մէջ՝ ժանտախտը տարածուեցաւ։ Քանի մը տարի առաջ կոտորածներ բրած էր այն արեւելքի զանազան երկիրներու մէջ։ Յետոյ անշուշտ մեր մեզքերէն մինչև Ներոպա եկաւ՝ բնակիչներու և քաղաքապետներու զգուշութեանը՝ հակումներու, աղօթքներու և թափօրներու հակառակ։

Այս բնդհանուր փորձանքին ատենը, երեքարթի առտու մը, եօթը նորատի տիկիւններ՝ պարագայներու պա-



ղեցիէն ելած աստննիս մեռելէ ու հոն հոս տարուած հիւանդներէ ուրիշ բան չենք տեսներ և ուրիշ բան չենք լսեր բայց թէ այսինչին մեռնիք ու այսինչին մեռնելիք: Զգիտեմ թէ դուք ալ ինձի պէս էք, բայց երբ տունս կը մտնեմ և հոն սպասուհիէսուրիշ բան չեմ տեսներ անակ վախ մը կ'զգամ՝ որ բոլոր մտղերս դիտուս վրայ կը ցցուին: Ուր որ երթամ կը կարծեմ թէ մեռնողներու ստուերները կը տեսնեմ, չէ թէ իրենց կենդանութեան ժամանակը ունեցած դէմքովը՝ այլ սոսկալի նայուածքով ու ահուելի կերպարանքով մը՝ որ չգիտեմ՝ ո՞ւր կ'ընկնեն եկեր է . . . :

Միւս տիկիները անոր խօսքը ընդմիջելով ըսին որ իրենց վիճակն ալ նոյնչափ անհաճոյ էր, ան ասեն տիկին Բանբինէ իր խօսքը շարունակելով՝ ըսաւ որ քաղաքէն դուրս ապաստանելու տեղեր ունեցող ամեն անձինք արդէն գացած էին և միայն իրենք սոյն ապաստանները ունենալով հանդերձ՝ չէին գացած. Փլօրանսի մէջ բարուց ապականութիւնը կը տիրէր ընդհանուր անկարգութեան արդիւնք, և այս ապականութիւնն այնքան սաստիկ էր որ հաւատուհի կոյսերը իսկ իրենց ուխտը դրժելով վանքերէ կ'ելլէին և մարմնային հաճոյքներու ետեւէ կ'ըլլային պատրուակելով որ միւս կիներու պատշաճ եղածը իրենց ալ ներելի էր:

— Ուստի գործերնիս ինչ է հոս, տիկնայք, յարեց նա աշխուժիւ: Զո՞վ կ'սպասենք, ինչո՞ւ մեր առողջութեան և պատիւի մասին մեր միւս քաղաքակիցներէն աւելի անհոգ ենք, միթէ մեր կեանքն ալ նոյնչափ անդին չէ, կամ թէ մենք փոխադրութեան դիմացող կազմութիւն մ'ունինք: Մտածեցէք որ մեզի պէս քանի դեռահաս կիներ, քանի սիրուն և կորովի երիտասարդներ այս ժանտախտին զոհ եղած են: Իմ կարծիքս այն է (եթէ դուք ալ յարմար կը դատէք) որ քաղաքէն փախողներու օրինակին հետեւինք և մեր ամառանոցներէն մէկը քաշուելով ինքզինքնիս խնդութեան և զուարճութեանց տանք առանց պատուոյ սահմանէն ելնելու: Հոն թուշուներու գայլայլը կը լսենք, բլուրներու և հովիտներու քաղցրաստեւիլ դաղարիները և

բիւր տեսակ ծաղիներով և պտուղներով լի ծառերու գեղեցկութիւնը կը վայելենք: Գեղի օդը աւելի մաքուր է ու զով և կենաց պէտք եղածները առատօրէն կը գտնենք հոն, հիւանդ կամ մեռնող տեսնելէ կ'աղատինք: Մանաւանդ որ ասկէ մեկնելով մեզի սիրելի դատինք: Մանաւանդ որ ասկէ մեկնելով մենք լքուած ենք մէկը չենք թողուր հոս՝ մինչդեռ մենք լքուած ենք վասն զի մեր ամուսինները, ազգակիցները ու բարեկամները վտանգի առջևէն խոյս տալով առանձին թողուցած են զմեզ իրենց կապող ամեն կապերը մոռնալով:

Բանբինէ Տիկնայ այս խօսքերուն լիօրէն հաւանութիւն տուին իր վեց բարեկամուհիները և մէջերնէն մէկը միայն հետագայ դիտողութիւններն ընելով ըսաւ.

— Թէև մեր բարեկամուհիին ըսածը շատ իրաւացի է, սակայն խոհեմութիւն չէ զայն իսկոյն դորժադրել վասն զի կին ենք և առանց էրիկ մարդու մը հոգատարութեան չենք կրնար ինքզինքնիս կառավարել: Բնութեամբ տկար, կաակածոտ և երկչոտ ըլլալով կը վախնամ որ մեր ընկերութիւնը երկարատե չըլլար եւ մեր առաջնորդ ու պաշտպան մը չունենանք: Ուստի թէ առաջնորդ ու պաշտպան մը չունենանք, եթէ նախ և յառաջ ասիկա դանելու ետեւէ ըլլանք, եթէ կ'ուզենք մեր ընելիքը տեսական ընել:

— Իրաւ է, շարունակեց ուրիշ մը, էրիկ մարդիկ կանանց գլխաւորներն են: Անկարելի կ'ըլլայ մեզ առանց անոնց օգնութեան՝ լաւ ու դիմացկուն բան մ'ընել: Բայց ինչպէս ընենք, քանի որ մեր մեծ մասին ամուսինները մեռած են և չ'մեռնողներն ալ աշխարհք կը պտըտին: Հետեւնիս անձանթ մարդիկ առնուլք անվայել բան է, բայց և այնպէս մեր առողջութիւնը պահպանելու և ձեռքերնէս եկածին չափ ձանձրոյթէ ազատելու համար աշխատիլ պէտք ենք:

Այս խօսակցութեան միջոցին՝ երեք երիտասարդներ եկեղեցին մտան որոնց ամենէ դեռահասը քսանհինգ տարեկան կար: Ժանտախտը և իրենց բարեկամներու ուսզգականներու մահը ու զիրենք պատող վտանգը բաական եղած չէին իրենց սիրային շահերը մոռցնել ալու ասոնց: Երեքն ալ շտրհքով բարեկիրթ էին ու



եկեղեցին եկած էին իրենց սիրուհիները տեսնելու՝ ուրոնք իրօք այս կիներու մէջ կը գտնուէին:

Տիկին Բանբինէ զանոնք տեսածին պէս՝ — Նայեցէք, սիրելի բարեկամուհիներս, բաւ, ժպտելով, ինչպէս բաղդը սատար կ'ըլլայ մեր յառաջագրութեան, և կարծես թէ ապսպրածի պէս՝ երեք սիրուն երիտասարդներ կը զրկէ՝ որոնք անշուշտ իրենց համար բարեբաղդութիւն պիտի համարին մեզ բնկերանալ, եթէ առաջարկենք: Կարելի է ասով քանի մը չար լեզուներու վայրահաշուութեան առարկայ պիտի ըլլանք բայց անոր ասոր բսելիքը ամենեւին հոգս չեմ բներ, բաւական է որ ես պատուովս վարուիմ՝ և խեղճս մաքուր ըլլայ, Աստուած և ճշմարտութիւնը մեզ կը պաշտպանեն ի հարկին, ուստի եթէ այս սիրուն պարոնները մեզ համամիտ գբանուին՝ գոհ ըլլանք Աստուծմէ որ զանոնք մեզի զրկեց:

Միւս տիկինները բոլորովին համաձայն գտնուեցան և իրենցմէ մէկը երիտասարդներուն մօտենալով՝ գործը իրենց հաղորդեց ու աղաչեց որ հաճին ամարանոցը իրենց բնկերանալ:

Երիտասարդները նախ կարծեցին թէ կատակ կ'ընէ նա՝ բայց յետոյ տեսնելով որ այնպէս չէր՝ պատասխանեցին թէ յօժարակամ կ'ընկերանային իրենց ո՞ր որ ուզէին և տիկիններուն մօտենալով՝ երկրորդ օրը մեկնելու համար պէտք եղած կարգադրութիւնները բրին:

Աստու կանուխ ամեն մարդ ժամադրութեան տեղը եկաւ կազմ և պատրաստ, տիկինները իրենց սպասուհիները առած էին հետերնին, ու պարոններն ալ իրենց սպասաւորները: Ընտրած տեղերնին քաղաքէն մէկ մղոն հեռի էր, հազար ու մէկ տեսակ հոտաւէտ բոյսերով պաշարուած բլրի մը վրայ: Բլրին գագաթը բաքանչելի գդեակ մը կար որու սենեակները մեծիակ և պայծառ էին ու գեղեցիկ պատկերներով դարդարուն. գդեակին բոլորտիքը հիանալի դարաստան մը կար՝ ուրկէ բոլոր շրջակայ դաշտը կը տեսնուէր: Գեղեցիկ ջուրերով ոռոգուած պարտէզները ազգի ազգի ծաղիկներով լեցուն էին:

Ընկերութիւնը հոն հասածին պէս՝ ամենէն երիտասարդ պարոնը առաջարկեց որ ամեն ոք իր հոգերն ու մտածումները մտնայ և խնդալու և երգելու պատրաստուի իրեն հետ. թէ ոչ, բ՛աւ՝ ներեցէք որ շուտով Պիօրանս դառնամ ու առաջուան կախ գէմքս առնում:

Տիկին Բանբինէ անոր պատասխանեց թէ շատ լաւ կը խօսէր. թէ իրօք պէտք էր հրճուիլ և զուարթ ըլլալ, բայց որում այս նպատակաւ եկած էին, բայց որովհետեւ չկայ բնկերութիւն մը, որ առանց կարգի կանոնի կարենայ գիմանալ, պէտք էին ամեն որ տեսչութիւն մը ընտրել որ ամեն բան կարգադրէր իրակար իշխանութեամբ քանչորս ժամուան համար:

Ընկերութիւնը այս խորհուրդը ընդունելով նոյն խակ տիկին Բանբինէն տնուչ կամ թագուհի ընտրուեցաւ: Նորընտիր թագուհին խակոյն երեք պարոններու սպասաւորները և իրենց սպասուհիները կանչելով՝ անոնցմէ մէկը տան կամ սեղանի հաղարապետ բրաւ, մէկը գանձապետ, երկու սպասուհի խոհարար ընտրեց, երկու սպասուհի ալ ընդունելութեան սենեակը և ճաշարանը և այլն մաքրելու յատկացուց. և ընդհանրապէս բոլոր բնկերութեան ապսպրեց որ մէջերնէն մէկը ինչ տխուր կամ անհաճոյ բան մը որ լսէ իրենց չ'իմացնէ:

Յետոյ թագուհին հրաման տուաւ միւս տիկիններուն որ երթան պարտէզը շրջին մինչև ժամը իննը, որ ճաշու ժամն էր: Ամեն ոք կը բաժնուի, ոմանք հովասուն անառակներու մէջ երթարով կ'ըրօնուն, ոմանք ծաղիկներ ժողվելով՝ փունջեր կը շինեն և իրարու կը նուիրեն. կը ցատկեն, կ'երգեն, կ'խնդան ու կ'ըրօնուն:

Որոշեալ ժամուն ամենքը գդեակ վերադառնալով ծաղիկներով զարդարուած ճաշարանը մտան ուր սեղանը պատրաստուած էր համադամ կերակուրներով, ընտիր գինիներով: Ճաշէն ետքը ամեն մարդ զուարթացած ըլլալուն՝ թագուհին հրամայեց որ երիտասարդներէն մին քնար մը և տիկիններէն մին ջութակ մը զարնէ ու ինքը բոլոր բնկերութեանը հետ այս նուա-



դարաններու ճային պարեց: Երգին յաջորդեց պարը մինչև որ բարձրագոյն հրամանաւ ամեն ոք հանգչեցաւ իր սենեակը և վարդերով զարդարուած անկողիններու մէջ՝ մինչև ժամը մէկ:

Ժամը մէկին թագուհին զամենքն ալ արթնցուց առարկելով որ շատ քնանալը վնասակար էր. բայց խումբը պարտեղ զնայ և անտառակի մը մէջ ապաստանեցաւ ուր արեւուն ճառագայթները չթափանցելով քաղցր զովութիւն մը կը տիրէր. հոն ամենքն ալ շքեղանակ մը կազմեցին և թագուհին բտաւ.

— Ահաւասիկ այս տեղ սեղաններ ու նարտեր կան խաղալ ու զոյններուն համար. բայց բտա իս լաւագոյն է չխաղալ: Խաղին մէջ զուարճութիւնը փոխադարձ չէ, գրեթէ միշտ խաղացողներէն մէկը կ'ենդանայ ու կ'բարկանայ, որով իր խաղընկերին հաճութիւնը շատ կ'նուազի, ինչպէս նաև հանդիսականներունը: Միթէ աւելի աղէկ չէ պատմութիւններ կամ սիրուն մանրամէպեր պատմել կամ ստեղծել եթէ մէջերնիս չգիտցող կայ: Այս տեսակ զուարճութեանց մէջ թէ խօսողը և թէ մտիկ ընողը գոհ կ'ըլլան. եթէ կ'հաւանիք ամեն մարդ մանրամէպ մը թող պատմէ և յետոյ ուր որ ուզենք կ'երթանք, սակայն այս ալ բտեմ որ այս մասին ինչ որ ձեզ աւելի ակործելի է այն կ'ընեմ:

Տիկիները ու պարոնները միաձայն պատասխանեցին որ լաւագոյն զուարճութիւնն մանրամէպեր պատմելն էր՝ և թէ անկէ աւելի զբօսալի բան չկար.

Ասոր վրայ հետզհետէ հետեւեալ մանրամէպները պատմուեցան տաք օրուան մէջ:

ՀՐԷԻ ՄԸ ՔՐԻՍՏՈՆԷՌՈՅԵԱՆ ԳԱՌՆԱԼՈՒՆ ՀԵՏԱՔՐՔՐԸ

ԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ժամանակաւ Բարիզի մէջ ժանօ անունով հռչակաւոր մետաքսավաճառ մը կար որ իր ուղղութեան և պատուաւորութեան համար ամենուն յարգելի եղած էր: Ասիկա իրեն մտերիմ բարեկամ ունէր խիստ հարուստ հրեայ մը՝ որ իրեն արհեստակից՝ ու իրեն պէս բարի հանգամանքներու տէր մարդ մ'էր, անոր համար շատ անգամ կ'ըսէր ինքնին. «Մեղք որ այս պատուական մարդը հրեայ է և հետեւաբար յախտնական կորուստի դատապարտուած:» Այսպէս մտածելով իրեն պարտք համարեց զան յորդորել որ մովսիսականութիւնը անհիմն ըլլալը իմանայ և քրիստոնէից կրօնն ընդունի.

— Վասն զի, կ'ըսէր, մովսիսականութիւնը սխալ ըլլալով իր հոգւոյն կորստեան պատճառ պիտի ըլլայ մինչդեռ քրիստոնէութիւնը ճշմարիտ կրօն ըլլալով ամեն օր կը յառաջադիմէ:

Հրեան, որ Ավրամ կը կոչուէր, իրեն պատասխանեց թէ յուզայական օրէնքէն լաւագոյն և սուրբ օրէնք մը չէր ճանչնար, և այն օրէնքին մէջ ծնած ըլլալով կ'ուզէր անոր մէջ ապրիլ ու մեռնիլ և բան մը երբէք զինքը իր դիտաւորութենէ պիտի չկրնար դարձնել:

Այս պատասխանը ժանօի եռանդը չմարեց ամենւին և քանի մ'օրէն ետքը դարձեալ իր յորդորները կրկնեց: Նոյն իսկ աշխատեցաւ կարողութեան համեմատ, հաստատել քրիստոնէական կրօնի գերազանցու-



թիւնը, այնպէս որ հրեան այնուհետև հաճութեամբ մտիկ կ'ընէր. ասոր վրայ քրիստոնեան իր ստիպումները հետզհետէ աւելցուց. սակայն մէկ կողմէ յորդոր և միւս կողմէ հաստատամտութիւն միևնոյն ընթացքով շարունակեցին բաւական ասան :

Վերջապէս հրեան իր բարեկամին քարոզներէն խախտուած՝ որ մը հեռակեալ պատասխանը տուաւ անոր :

—Ուրեմն անպատճառ կ'ուզես, սիրելի ժանօ, որ քու կրօնքը ընդունիմ, լաւ, ուզածդ կ'ընեմ, բայց այս պայմանաւ որ նախ անգամ մը Հռոմ երթարով Աստուծոյ երկրի վրայ ունեցած փոխանորդք տեսնեմ, անոր և իր կարգինախնորու բարքն ու վարքը քննեմ : Եթէ անոնց կենցաղապարութիւնէն հասկնամ որ քու կրօնդ իմինէս լաւագոյն է, (ինչպէս որ դրեթէ զիս համոզեցիր) կ'երդնում որ ալ չեմ գեղեկիր քրիստոնեայ բլլալու, իսկ եթէ ասոր հակառակը տեսնեմ, միզարմանար եթէ հրեայ պիտի մնամ և առաջուանէ աւելի եռանդուն :

Բարեմիտ ժանօն այս պատասխանին վրայ շատ ցաւեցաւ, «Աստուած իմ, կ'ըսէր ինքնիրեն, կը կարծէի որ համազուած է այս մարդը, և ահա կը տեսնեմ որ բոլոր այլատանքս ի դերև կ'ելլէ, վասն զի եթէ Հռոմ երթայ, անշուշտ մեր կրօնաւորներու մեծ մասին գայթակղելի վարքը պիտի նշմարէ և այն աստեղ փոխանակ քրիստոնեայ դառնալու առաջուանէն աւելի Յուդայի գաւակ պիտի մնայ» : Յետոյ Ավրամի կողմը դառնարով :

—Բարեկամդ իմ, ըսաւ անոր, ինչ պէտք է մինչև Հռոմ յոգնիլ և ծախք ընել, ճամբան թէ ծովու և թէ ցամաքի վրայ քեզի պէս հարուստ մարդ մը կրնայ մեծ փառանքներու հանդիպիլ. ինչ, միթէ կը կարծես որ հոս զքեզ միրտող մարդ չկայ : Եթէ տակաւին քրիստոնէական կրօնին վրայ տարակոյններ ունիս կը կարծես որ Հռոմի մէջ Բարիզէ աւելի գիտուն աստուածաբաններ կը գտնուին : Ուստի այս ճամբորդութիւնը շատ աւելորդ է : Մտածէ, սիրելի Ավրամ, որ Հռոմի կրօնաւորները այս տեղ տեսածներուդ նման են,

կարելի է աւելի ընտիր, վասն զի սրբազան Քահանայնայապետին քովը ու անոր աչքին տակը կ'ապրին. եթէ ինծի մտիկ կ'ընես ճամբորդութիւնդ ուրիշ անգամի թող և անապէս կաքելի է ես ալ քեզի ընկերանամ :

—Կ'ուզեմ հաւատալ, սիրելի ժանօ, պատասխանեց հրեայն, որ դորձը ըսածիդ պէս է, բայց եթէ կ'ուզես որ միտքս բացայայտ բնեմ, գիտնաս որ աս ճամբորդութիւնը չըրած ես կրօնքս չեմ փոխեր :

Ժանօ տեսնելով որ պիտի չկրնայ հրեան իր դիտաւորութենէն դարձնել, ալ խօսքը չերկարեց, բայց իներքուստ համազուեցաւ որ իր դարձի բերած մարդը Հռոմը տեսածին պէս՝ ձեռքէն պիտի փախեր :

Հրեան ժամանակ չկորսնցընելով ճամբայ ելաւ և Հռոմ հասնելով քրիստոնեայ մայրաքաղաքին հրեաներէն մեծ պատուով ընդունուեցաւ : Հռոմ մտացած միջոցին իր ճամբորդութեան նպատակը մէկու մը չյայտնեց և շատ խոհեմութեամբ ջանաց սրբազան Պապին, կարօնախնորուն և վարդապետներուն ներքին վարքը զննելու : Գործունեայ և վարպետ մարդ մ'ըլլալով՝ շուտով տեսաւ որ ամենէ մեծէն մինչև ամենէ փոքրը, ամենքն ալ յետին ատիճան բարուց ապականութեան հասած՝ ինքզինքնին բնական ու անբնական ամեն տեսակ հաճոյքներու տուած էին անամթօրէն և թէ անատիճանի ցածութեան հասած՝ որ ամենաբարձր պաշտօններ անգամ պոռնիկներու բարեխօսութեամբ ձեռք կ'ձգուէին : Գիտեց նաև որ անասուններու պէս ինքզինքնին կերուխուսի տուած՝ անյագ արծաթասիրութեամբ ամենասուրբ իրերը կը ծախէին և առուտուրի շատ մը նիւթեր ունենալով՝ հոն աւելի միջնորդ կարքան ի Բարիզ, չէ թէ ապրանքներու՝ այլ լոկ աղօթքներու, պատարագներու և ներողութեան թուղթերու համար :

Հռոմի կրօնաւորներու այս անբարոյական կեանքը բաւական էին հրեան գայթակղեցնելու, որու սկզբունքները ու վարքը համեստութեան, չափաւորութեան և առաքինութեան վրայ հիմնուած էին, բայց նա իր



փափաքածք տեսնելով առանց ժամանակ կորսնցնելու  
Բարիզ վերադարձաւ :

Ժանօ անոր գալուստը իմացածին պէս զանի տես-  
նելու գնաց և քաղաքավարական խօսքերէ ետքը դրե-  
թէ դողալով հարցուց թէ սրբազան Պապին, կարտի-  
նալներու և ընդհանրապէս Հռոմի աբղունեաց եկե-  
ղեցականներու վրայ ի՞նչ էր իր կարծիքը :

— Ըրածնին Աստուծոյ գտնեն, սրտասխանեց հրեան  
եռանդով . վասն զի եթէ, ինչպէս որ կ'յուսամ տեսածս  
և լրածս աղէկ կրցայ դատել, Հռոմի մէջ քահանայ  
մը չկայ որ բարեպաշտութիւն ունենայ և ո՛չ իսկ ար-  
տաքին բարի վարք մը, ընդհակառակը բղջախոհու-  
թիւնը, ագահութիւնը, որկրամոլութիւնը և ուրիշ ա-  
մօթալի մոլութիւնները այնքան տարածուած են կղերին  
մէջ որ Հռոմի աբղունիքը ըստ իս աւելի դժոխք է քան  
թէ կրօնին կեդրոնը : Կարծես թէ սրբազան Պապն՝ և  
անոր օրինակին հետեւելով միւս քահանաներն ալ, իրենց  
միակ նպատակ ունին այդ կրօնը խափանելու փոխա-  
նակ անոր պաշտպաններն ու նեցուկներն ըլլալու, բայց  
որովհետեւ կը տեսնեմ որ անոնց մեղալի ջանից հա-  
կառակ այդ կրօնը երթալով աւելի կը պայծառանայ ու  
կը ծաղկի, կը հետեցընեմ որ ամենէ ճշմարիտ, ամե-  
նէ երկնային կրօնն է և հոգին սուրբ յայտնի կերպով  
կ'պաշտպանէ զայն : Ուստի անկեղծօրէն կ'խոստովանիմ՝  
քեզ, սիրելի ժանօ, թէ այն պատճառները որոնց հա-  
մար ես քու յորդորները մտիկ չէի ըներ՝ զիս կ'մղեն  
այսօր քրիստոնեայ ըլլալու : Քալէ ուրեմն ուղղակի ե-  
կեղեցին երթանք, որպէս զի քու սուրբ կրօնի ծէսին  
համեմատ մկրտուիմ :

Բարեմիտ ժանօ որ տարբեր եզրակացութիւն մը  
կ'սպասէր, այս խօսքերը լսելով չափազանց ուրախացաւ .  
և զանի առնելով՝ Նօզր—Տամ եկեղեցին տարաւ ու  
ինքը կնքահայր ըլլալով զանի մկրտեց : Նոր խորայէլը  
այն օրուանէ ՚ի վեր իբր առաքինութեան տիպար մա-  
տով կը ցուցընէին :

ՏԵՐՈՒՆԻՆԵՐՈՒ ՏՕՆԸՅՈՅՅԸ

Ժամանակաւ Բիղայի մէջ խեղացի և ճարպիկ դա-  
տաւոր մը կար, որ տկար ու փափուկ կազմուածք մը  
ունէր : Ասիկա շատ հարուստ էր և Ռիչար Գէնձիգա  
կը կոչուէր : Թէև տարիքն աւած մարդ՝ բայց թիչ մը  
հեշտատէր ըլլալուն՝ միտքը դրաւ ամուսնանալ, յուսա-  
կատարել նոյնքան պատուով որ իր պաշտօնը կը կա-  
տարէր : Ուստի ուղիղ տրամաբանութեան հակառակ,  
դեռահաս և գեղեցիկ կին մ'ընտրեց, թէև պէտք  
էր կրցածին չափ այս երկու պայծաներէն հեռու կե-  
նալ, եկու տես որ այս մարդը ուրիշներու աւելի խե-  
լացի խրատներ կու տար քան թէ ինքը զանոնք կը  
դորձադէր :

Ռիչար Գէնձիգա իր փեսուած աղջիկը գտաւ, որ  
իրօք Բիղայի ամենէ գեղեցիկ օրիորդն էր և անունը  
կատարինէ :

Հարսանեաց հանդէսը խիստ փառաւոր եղաւ միայն  
առաջին գիշերը, վասն զի բարի ծերուկը հեղմը միայն  
հարսը գողուց և ան ալ հազիւ թէ կրցաւ գլուխ հա-  
նել և այնքան յոգնեցաւ որ երկրորդ օրը հարկա-  
դրեցաւ կաղաւորիչ գինիներ, մնի շուրեր և ասորման  
բաներ խմելու, և այս փորձէն տեսնելով որ իր քաջու-  
թեան վրայ փառահելով սխալած էր ու միանգամայն  
իր տկարութիւնը ու անճարակութիւնը ծածկելու հա-  
մար՝ սխաւ շարունակ կրկնել իր կնոջը թէ տարւոյն  
մէջ այնպիսի օրեր կային յորում մարդ պարտաւոր է  
իրբև բարե քրիստոնեայ ամուսնութեան հաճոյքը վա-  
յելիէ զգոյշ մնալ : Այս նպատակաւ՝ Ռափանայի մէջ  
տպուած տօնացոյցերէն հատ մը գնեց : Այս տօնացոյցը



գրեթէ ամեն օր տօն մը կ'ըլլային՝ ՚ի պատիւ որո՞ ծերուկը կ'ըսէր թէ էրիկ կնիկ մէկտեղ պէտք չէին պառկել, կը յաւելոյնէր նաև թէ պարտաւոր էին նոյնք ընելու կեցոյի, նախատօնակի, պահք, ուրբաթ, շաբաթ ու կիրակի գիշերները, ինչպէս նաև բոլոր մեծ պահքի մէջ. վերջապէս մեր ծերուկը կրցածին չափ կը մեծցնէր այն օրերու ցուցակը որոնք իբր թէ բարեքրիստոնեաները կ'արգելէին սո՛ւսնական հաճոյքները վայելելու. իր բոլոր ճարտարախօսութիւնը կ'իծայէր իբր կնիկը համոզելու համար թէ ամուսնական անկողինն ալ գպրոցի մը պէս՝ իր արձակուրդի օրերը ա՛նի. սա. կայն ճշմարիտը բնելու համար բոլոր այս պատրուակները խիստ անհաճոյ կը թուէին նորաստի տիկնոջ: Բայց զարմանալի կէտը հոս է որ ծերուկը խիստ նախանձու բնութիւն մ'ունենալուն և կարծես թէ վախնալով որ իրմէ աւելի կորովի մէկը հասարակ օրերը կը սորվեցնէ իր կնոջը՝ կրցածին չափ զանի դուրս չէր հաներ և ա. նոր վրայ կ'հակէր:

Այլ որովհետև մեր ծերուկ դատաւորը չէր կրնար զանի ամեն բանէ ալ զրկել, կերպով մ'իր կնոջ փոխարինութիւն մ'ընելու համար երբեմն երբեմն զանի Սև լեռին քով ունեցած մէկ ամարանոցը կը տանէր ծովուն մտ:

Օր մը՝ որ օդափոխութեան և ամիտի մը չափ հսն մնալու դացած էին, ուզեցին քանի մը բարեկամներու հետ նաւակով ձկնորսութեան երթալ: Հետերնին ձկնորսներ առին և՛ որպէս զի տիկինը այս տեսարանը լաւ մը տեսնէ՝ իր բարեկամու հինքով ուրիշ նաւակ մը մտաւ: Ախորժելի խօսակցութիւններով և ձուկ որսալով երկու նաւակներ այնչափ յառաջացան անզգայաբար՝ որ ծովեզերքէն մղաններով հեռացան: Անա. տեսները հոչակաւոր ծովահէն մը կար Բակամէն ա. նունով որ ճիշդ այն կողմերը կ'ըլլէր իր նաւովը: Մու. վահէնը՝ նաւակները տեսածին պէս սկսաւ դէպ ՚ի ա. նոնց վրայ գալ, ձկնորսները խեղճ թիերը ձեռք ա. ռին փախուստ տալու համար՝ բայց ժամանակ չունեցան և Բակամէնը շուտ մը հասաւ տիկիններու հեծած նա.

առկին վրայ որ միւսէն աւելի յառաջացած էր, և Կա. տարինէի դեղեցկութիւնը տեսնելով՝ զան առածին պէս՝ իր նաւակը տարաւ գրեթէ ծերուկ դատաւորին աչքին առջևը, որ արդէն ծովեզերքը համոզու վրայ էր:

Աւելորդ է մեր չափէ դուրս նախանձու ծերուկ դա. տաւորին յուսահատութիւնը ու կատաղութիւնը նկա. ըագրել. մոլեգին կ'պուսար ու կ'դոչէր՝ չգիտնալով թէ ինքը ձուկ որսալու ելած առենք իր կնիք որո՞ որս գացած էր, դառնութեամբ կը գանգատէր կառավա. րութենէն որ այսպիսի բաներու առջևը չէր առներ, և եթէ ձեռքէն գար ինքը ծովահէնները հարածելու պիտի երթար:

Բակամէն Կատարինէի դեղեցկութենէն բոլորովին հրապուրուած՝ շատ դո՛հ եղաւ զանի ձեռք ձգելուն համար և որովհետև կարգուած չէր՝ միտքը դրաւ զա. նի իրեն կնիկ ընել: Ասոր համար իր կարողութիւնը ներածին չափ անոր վրայ հոգ կը տանէր և մխիթարե. րու համար իր բոլոր ճարտասանութիւնը կը դործածէր, վասն զի չմոռնանք բնելու որ՝ Կատարինէ մագերը կը փետտէր ու կու ըր շարունակ:

Գիշերը Բակամէն ամենէ փաղաբուշ խօսքերէ ա. լելի ազգու մխիթարութիւններու գիմեց՝ որով իրօք Կատարինէ օրացոյցն ու տօնացոյցը մոռցաւ. ո՛չ տօն մնաց ո՛չ կեցո, ամեն օրերը Աստուծոյ օրերն էին և այս փոփոխութիւնը այնքան աւելի հաճոյ երեցաւ տիկնոջ՝ որ ծովահէնին քաղաքը չհասած՝ դատաւորին օրէնքը ու սուրբերը բոլորովին մոռնէն հանեց: Այս նոր կեանքը իրեն չափազանց սիրելի եղած էր, այնպէս որ ուրախութենէն կը թռէր: Երբ ծովահէնին հեռ. ո. նէկ հասան և տուն տեղ եղան, իր նոր էրիկը միշտ իրեն կը հաւատարէր թէ՛ իր տօնացոյցին մէջ ո՛չ սուրբ կար, ո՛չ տօն, ո՛չ ծով, ո՛չ մեծ պահք և ո՛չ ալ պղտիկ պահք:

Իրայ այս փեճակին մէջ՝ Ռիշար Գէնձիգա իր սիրե. լի կնոջ բնակած քաղաքը իմանալով՝ միտքը դրաւ ծու. վահէնին քովը երթալ՝ կարծելով որ ո՛չ ոք իրմէ ազէկ կրնար բանակցել անոր հետ, և պատրաստ էր նաև իր.



մէ ուզուած տուգանքն ալ վճարել. ուստի ելաւ Մոսկէի դնաց, հոն տեսաւ իր կնիկը և սա ալ զանի տեսնելով՝ Բակամէնին իմաց տուաւ և բնելիքնուն վրայ իրարու հետ համաձայնեցան:

Երկրորդ օրը Ռիշար գնաց ծովահէնը գտաւ որ զինքը քաղաքավարութեամբ բնդունեց: Մերուկը ամենախոնարհ կերպով իր գարուն պատճառները յայտնեցաւ որ աղաչելով որ իր կնիք վերադարձնէ իրեն և թէ ինքը ասոր փոխարէն պատրաստ էր խոկոյն որ և իցէ տուգանք մը վճարել:

— Բարի եկաք, պատասխանեց Բակամէն զուարթ գէմբով մը, իրաւ է որ քովս երիտասարդ կնիկ մը կայ, բայց չեմ գիտեր թէ քովդ է այն թէ ուրիշ մէկու մը, վասն զի զձեզ ճանչնալու պատիւը չունիմ: Բայց որովհետև պատուաւոր արհուական մը կ'երևիք՝ ձեզ կը ցուցնեմ զանի. եթէ իր էրիկն էք՝ խոկոյն պիտի ճանչնայ զձեզ և եթէ ուզէ վերադառնալ՝ սիրով կը յանձնեմ, տուգանքի գումարն ալ որոշելը ձեզի թողլով: Բայց եթէ ձեր կնիկը չէ կամ ձերք բլլալով հանգերձ չուզէ ձեզի հետ գալ, ան ատեն չէք կրնար ստիպել զիս որ ես անորմէ զրկուիմ, վասն զի երիտասարդ և կորովի բլլալով, ես ալ ուրիշներու պէս կնիկ մը կրնամ գոհ բնել, մանաւանդ առ կնիկը, որմէ աւելի գեղեցիկ ու սիրուն մը տեսած չեմ բնաւ:

— Ախ, Աստուած վկայ, պուաց Ռիշար, որ անկեալ իմ կնիկս է, և եթէ զիս անոր քովք տանիք անմիջապէս պիտի համազուիք: Պիտի տեսնէք թէ ինչպէս վիզս պիտի պլլուի:

— Ուրեմն ներս եկուր, բսաւ ծովահէնը, ու ծերուկը առնելով Կատարինէին քով տարաւ:

Կատարինէ հագուած զգուած՝ փայլուն աստղի մը պէս սրահը մտնելով բարեկեց ծերուկը և առաջին անգամ տեսածի մը պէս անոր երեսը նայեցաւ միայն՝ և չչիջաւ բսա մ'անգամ ուզղելու: Մերուկը որ տարբեր բնդունելութիւն մը կ'սպասէր, այս պաղուածեան վրայ յափազանց զարմացաւ. Արդեօք, կ'ըսէր մտքէն ինքզինքը մխիթարելու համար, վիշտերս զիս այնքան ծե-

բացուցեր են որ դէմքս փոխուեր և անճանաչելի եղեր է:» Այս մտքով, — Ախ, սիրելի բարեկամուհիս, պուաց, որչափ զղջացած եմ գրեզ ձկնորսութեան հանելուս, ինչեր քաշեցի զքեզ կորսնցընելէս ետքը, և դու այնքան անգութ ես, որ զիս չճանչցածի պէս կը լսես: Չես տեսներ որ ես քու Ռիշար էրիկդ եմ, յատկապէս զքեզ առնելու համար եկած . . .

— Հէ, ինձի կը խօսիք, պարոն, աղէկ նայեցէք, չբլլայ որ սխալիք և զիս ուրիշի մը տեղ դնէք, վասն զի չեմ կրնար յիշել որ ուրիշտեղ մը տեսած բլլամ զձեզ:

— Ըսածդ աղէկ մտածէ, սիրելի բարեկամուհիս, լաւ մը երեսս նայէ և պիտի չտարակուսիս որ ես քու Ռիշար Գէնձիգա էրիկդ եմ:

— Ներեցէք, պարոն, բայց անվայել բան է որ երեսիդ շատ նայիմ. ասկէ զատ բաւական ալ նայեցայ և ապահով եմ որ ուրիշ անգամ տեսած չեմ զձեզ:

Մերուկ գատաւորը բոլորովին շփոթած էր, ետքը կարծեց որ Կատարինէն Բակամէնէն վախնալով այսպէս կը խօսէր. ուստի ինզրեց անորմէ որ զինքը քիչ մը առանձին թողու սենեկին մէջ: Մինակ մնալուն պէս նստան և ծերուկը ինքզինքը իր կնովք գիմաց առանձին տեսնելով այսպէս խօսեցաւ.

— Ախ, իմ հոգիիս ճրագը, սիրելիս, անուշ բարեկամուհիս, միակ յոյսս, Ռիշարդ չէս ճանչնար, որ աշխարհիս մէջ քեզ ամեն բանէ աւելի շատ կը սիրէ. ինչպէս չուտով մտոցեր ես զանի. սյդչափ փոխուեր եմ, Աստուծոյ սիրուն, բարեմիտիս, երեսս նայէ, ապահով եմ որ եթէ աղէկ մը գիտես պիտի ճանչնաս զիս:

Տիկինը այս խօսքերուն վրայ ահագին քահքահ մը ձգեց, և զայն բնդմիջելով բսաւ,

— Շատ պարզամիտ բլլալ պէտք ես հաւտալու համար թէ զքեզ մտոցած եմ. բայց ինչ իրաւունքով կը գանգատիս չճանչնալ ձեայքներուս համար, միթէ հեռու անցուցած ժամանակս դուն ինձի ճանչցար. եթէ զիս կը սիրէիր, եթէ քեզ սիրելի էի, ինչպէս կ'ըսէիր հիմա, հետս պիտի վարուէիր այն կերպով որ գեռահատ



կնիկ մը կը պահանջէ, միթէ չե՞ս գիտեր որ բնութիւնը մեզի տուած է այնպիսի պէտքեր զորս յայտնելու արդեւք կըլլայ իգական սեռի բնական պարկեշտութիւնը: Միթէ մուցար ինչ խայտառակ կերպով այս պէտքերուս արդեւք կը դնէիր. դու աւելի կը սիրէիր տօներդ նայել քան թէ կնիկդ հոգայ, ուրեմն ինչու կարգուեցար, ինչպիսի դատաւոր էիր դուն քանի որ գնայուն օրացոյցի մը կը նմանէիր, քանի որ այնչափ աղէկ գիտէիր տօնի, կեցոյի, պահքի և ծովի օրերը: Հոս ատանկ բան չկայ, այս գիշեր անգամ փորձով տեսայ, ուստի, սիրելի էրիկս, ներէ ինձ որ մնամ այս բարի գործաւորին՝ Բակամէնին հետ, որ զիս գգուելէ չդադրիր բնաւ, իսկ ես ալ տօնի, պահքի օրերը պառաւութեանս կը պահեմ քու յիշատակդ մտքիս մէջ ունենալու համար:

Մերուկ երիշարը այս խօսքերուն վրայ ճանչցաւ որ իրօք սխալած էր ամուսնանալով այնպիսի կնոջ մը հետ որ իրմէ երեք անգամ պզտիկ էր, և բոլորովին լեզապատառ դուրս ելնելով՝ իր երկիրը վերադարձաւ և հոն սրտին ցաւէն մեռաւ: Բակամէն կատարինէն կնութեանս առաւ, և բնական է կարծել որ տօնացոյցը մուցուեցաւ բոլորովին:

ՕՐՈՐՈՅԸ

Փլօրանսի ճամբուն վրայ ժամանակաւ պանդոկ մը կար որու տէրը թէև աղքատ՝ և հետևաբար տունն ալ պզտիկ՝ բայց երբեմն անցորդներ կը հիւրընկալէր երբ իրեն ծանօթ էին:

Ասիկա բառական սիրուն և նորատի կնիկ մը, տասն-

հինգ տասնվեց տարեկան գեղեցիկ աղջիկ մը, ու մէկ տարու աղեկ մ'ունէր, որ տակաւին ծիծ կ'ուտէր:

Բէնիւցիօ անունով Փլօրանոյցի ազնուական մը, որ շատ անգամ այս ճամբայէն կ'անցնէր կը դառնար, պանդոկատեալին աղջկան սիրահարած էր և զայն կնութեան կ'ուզէր առնուլ, բայց պանդոկատեալը չէր ուզեր զայն անոր տալ, վասն զի ստակ չունէր նա. աղջիկն ալ աղնուականի մ'ուշադրութիւնը գրուելը իրեն պատիւ կը համարէր, բայց նախ և յառաջ անտարբեր մնաց աւնոր սիրոյն առջև, սակայն ետքէն բոլորովին անոր նուիրուեցաւ առանց իր հօրը գիտութեան. Բէնիւցիօ կէս մը էր՝ ու կէս մ'ալ իր սիրուհոյն պատւոյն համար, ու լիջ մ'ալ վախէն երկար ատեն բուռն միջոցներ ձեռք չառաւ իր սիրուհոյն շնորհները վայելելու, բայց իր կերքը վերջին աստիճանի սաստկանալով՝ ինքզինքը գոհ բնելու համար մտածեց որ գիշեր մը իր սիրուհոյն տունը իջնէ, և տան ծակ ու ծուկը աղէկ մը գիտնալուն տարակոյս չունէր որ պիտի յաջողէր:

Ուստի իր Ատրիան անունով մէկ մտերիմ բարեկամին հետ վարձու ձիեր բռնեց և անոնց վրայ պայտասկներ դնելով Փլօրանոէն մեկնեցան: Մութը կոխած էր երբ պանդոկին առջևը հասան և Ռօմանեաէն եկող ճամբորդներու պէս ուզողկի դուռը զարկին. պանդոկապետը բացաւ:

—Ներեցէք, պարոն պանդոկապետ, բաւ Բէնիւցիօ, կ'աղաչենք որ այս գիշեր ննջարան մը տաք մեզ, վասն զի մեր ձիերը յոգնած ըլլալուն՝ անկարելի է որ մինչև Փլօրանս կարենանք երթալ:

—Գիտէք, պարոն, պատասխանեց պանդոկապետը մութին առանց զանի լաւ մը ճանչնալու, որ չեմ կրնար ձեզի պէս ազնուական ճամբորդներ բնդունիլ և տանս մէջ պառկեցնել. բայց որովհետև գիշերը վրայ հասաւ, և չէք կրնար աւելի յառաջ երթալ, հրամեցէք:

Երկու երիտասարդները ձիերնէն վար իջնելուն պէս զանոնք կերակրեցին և յետոյ իրենք ալ ներս գացին ընթրելու:

Պանդոկ բաժնիս միայն մէկ պզտիկ սենեակ մ'ու-



նէր որ երեք անկողին կը սրարունակէր: Երկուքը սրա-  
տին երկու ծայրերը դրուած էին, և երրորդը՝ որ ե-  
ռանկիւնի կը կաղմէր, այն երկուքի դիմացը դրուած  
էր: Պանդոկապետը լաւագոյն անկողինը օտարականնե-  
րու համար պատրաստել տուաւ, որոնք դային սրա-  
կեցան: Ասոնք քնանարուն պէս (իբր թէ) գեղեցիկն  
Գօլէդ՝ պանդոկապետին աղջիկը, զնաց անոնց դիմացի  
անկողինը պառկեցաւ. իսկ պարապ անկողինին մէջ՝ պան-  
դոկապետն ու պանդոկապետուհին, որու քովն էր նաև  
մանկան օրորոյք:

Բէնիւցիօն, որ այս ամենը տեսած էր, երբ ապա-  
հով եղաւ որ ամենքը քնացած էին, մեղմիկ մ'իր ան-  
կողնէն ելաւ և ուղղակի Գօլէթին քովը դնաց, որ զա-  
նի քիչ մը վախով՝ բայց հաճութեամբ քնդունեցաւ  
նոր հարսի մը պէս: Մինչդեռ Բէնիւցիօ փեսայ կ'ըլլար,  
Ատրիան բնական պէտքի մը համար դուրս ելնել կ'ու-  
ղէ և ճամբուն վրայ օրորոցին հանդիպելով՝ զան տե-  
ղէն կը վերջընէ իր անկողնին քովը կը դնէ, բայց գէ-  
շը ան է որ վերագործին զան իր նախկին տեղը դնե-  
լու կը մոռնայ:

Հաղիւ թէ սա իր տեղը կը պառկի և ահա կատու  
մը խոհանոցին մէջ աման մը վար կը ձգէ մեծ աղմու-  
կով: Պանդոկապետուհին այս աղմուկէն կ'արթննայ և  
վախնալով որ ծանրագին աման մը կտրած չըլլայ, ար-  
տորնօք կ'ելնէ և առանց ճրագի՝ ձայնին ելած կող-  
մը կ'երթայ, և տեսնելով որ ինկածը բան մը չէր,  
կատուն կ'վռնտէ և խարխալելով կը վերագառնայ ան-  
կողինը ուր էրիկը պառկած էր, բայց հոն օրորոցը չը  
գտնելով՝ Մուրս 'ի գլխուս, կ'ըսէ, նայէ գլուխս ինչ  
պիտի գար, քիչ կը մնար որ այս պարոններուն ծոցը  
մտնէի: Աս ըսելով՝ ճանբան կը փոխէ նա և օրորոցը  
գտնելով, որու քով անկողին ալ կար, իբօք օտարա-  
կաններուն անկողինը կը մտնէ, ուր Ատրիան առանձին  
պառկած էր առայժմ:

Երևակայեցէք թէ Ատրիան ինչ խնդութեամբ կ'ըն-  
դունի պանդոկապետուհին՝ առանց ձայն մը հանելու,  
և սրբան կը փութայ ձեռքը անցուցած առիթէն օ-

դուն քաղել: Մանաւանդ որ խեղճ կինն ալ բողբոլին  
պարզմտօրէն ինքզինքը իր էրկան թեւերուն մէջ կ'կարծէ:

Այս միջոցին Բէնիւցիօ վախնալով որ Գօլէթի թե-  
ւերու մէջ քունը կը տանի կամ բանը կը հասկըցուի  
կ'ելնէ իր անկողինը վերագառնալու, բայց ճամբուն վրայ  
օրորոցը գտնելով կը կարծէ թէ պանդոկապետը իր  
կնոջը հետ հոն պառկած է և կ'երթայ միւսը կըմտնէ  
ուր իբօք խեղճ մարդը պառկած էր, և անոք քովը կը  
մտնէ զան Ատրիանը կարծելով. և չկրնալով իր ներքին  
ուրախութիւնը զպել, պանդոկապետին կ'ըսէ.

—Ատուած վկայ, Ատրիան, Գօլէթէն աղւոր աղջիկ  
մը կեանքիս մէջ տեսած չեմ, չես գիտար թէ ինչ ներ-  
քին հրապոյրներ ունի, և թէ սրբան երջանիկ եղայ ա-  
նոր հետ:

Պանդոկապետը այս խօսքերէն կ'արթննայ և անոնց  
վերջին մասը լսելով՝ բողբոլին կատաղած կը գօլէ.

—Ատկէ աւելի խայտառակ և վատ բնիմացք մը չը  
կրնար ըլլալ, սրիկա գընդ, հիմա քու խեղճ կ'անիծեմ...

Բէնիւցիօ գլխովին ապշած և իր սխալմունքին վրայ  
այլ յայլմէ, անոր կը պատասխանէ թէ բան մը չկրնար  
ընել և թէ ամենևին չվախնար իրմէ, ու այս անխոհեմ  
պատասխանով քիչ մնաց որ ամէն բան յայտնէ:

Պանդոկապետին ձայնէն պանդոկապետուհին ալ  
ինքզինքին գալով բրած սխալմունքին վրայ կայծակէ  
ղարնուածի պէս եղաւ. բայց հիմա ինչ ընէ, ինչպէս  
այս արկածը կարկտէ: Հանճարեղ կինը անմիջապէս  
կ'ելնէ, իր պզտիկ աղուն օրորոցը կ'առնու կամացուկ  
մը և Գօլէթին անկողնոյն քովը տանելով՝ ինքն ալ հոն  
կը մտնէ, և իբր թէ ձայնէն արթննալով՝ էրիկին կը  
հարցընէ թէ ինչու այդպէս կը պոռայ:

—Չիս լսեր թէ այս անամօթ սրիկան ինչեր կ'ըսէ  
Գօլէդի համար, կը պատասխանէ պանդոկապետը:

—Ման վկայ փախցուցեր է կամ գինով է, կ'յարէ  
պանդոկապետուհին, վասն զի խոհեմութեան համար  
առջի գիշերէն ես Գօլէթին հետը պառկեցայ և գիտես  
որ քունս ալ խորունկ չէ, ան բաւ դուն ալ հաւտա-  
ցիր, կամ թէ դուն ալ անոր պէս դինով ես, էհ, հա-



պա ի՛նչ պիտի ըլլայ, սա խմելէն չդադրեցար գնաց: Ատրիան տեսնելով որ պանդոկապետուհին թէ էր և թէ աղջկան գլուխը եկած փորձանքը վարպետութեամբ և խելացութեամբ կը ծածկէ:

— Բէնիւցիօ՛, պոռայ պառկած տեղէն. քեզի հազար անգամ՝ ըսի որ օտար տեղ չպառկիս, վասն զի այդ անիծեալ պակասութիւնը ունիս որ գիշերը երազիդ մէջ յիշես և բերնիդ եկածը դուրս կուտաս քրնաչըլիկի պէս, օրին մէկը գլուխդ փորձանք մը պիտի դայ, եկու տեղդ պառկէ՛ ու հանդարտէ:

Ատրիանի և իր կնոջը այսխօսքերուն վրայ պանդոկապետը կատարեալ համոզուեցաւ որ Բէնիւցիօ գիշերաչըլիկ էր, ուստի սկսաւ զանի շարժել ու պոռալ, «Բէնիւցիօ՛, Բէնիւցիօ՛, արթնցիր. Բէնիւցիօ՛, տեղդ գնա՛»: Մեր փեսայ պարտքը որ գործին դարձուած քընչմարած էր, իր գերը շարունակել ուզելով՝ սկսաւ դարձեալ իբր թէ երազել և հազար տեսակ ամբողջիկը խօսքեր թափել, որոնց վրայ խելո՞ պանդոկապետը ճաթելու չափ կ'իսնդար. վերջապէս Բէնիւցիօ կ'արթնայ, և քունը գլուխը կեղծելով իր տեղը կ'երթայ կը պառկի:

Սուսու ամենքն ալ կ'եջնեն, և մեր ճամբորդները Ֆլորանս կը վերադառնան երկուքն ալ բոլորովին գոհ: Դօլթի կրցած էր համոզել իր մայրը թէ իրօք Բէնիւցիօ ան գիշեր երազած էր. կ'ըսեն թէ՛ այս երկուքը վերջապէս իրարու հետամուսնացան՝ այս գէտպէն քանի մ'ամիս ետքը:



ԱԿՆ ԸՆԴ ԱԿՆՆ, ԵՂՋԻԻԲ ԸՆԴ ԵՂՋԵԲ

ժամանակաւ Սիէնայի մէջ երկու մտերիմ բարեկամներ կային՝ Սփինէլօ և Սէփէ անուն. ասոնք կարգուած ու գրացի էին: Սփինէլօ՛ որ յաճախ Սէփէին տունը կ'երթար և անոր կնկան սիրահարած էր, քիչ ատենէն սկսաւ փախաբաժ շնորհները վայելել: Այս յարաբերութիւնը բաւական ժամանակ տեւեց առանց Սէփէի գիտութեանը: Սակայն վերջապէս տսիկա իր բարեկամին և կնոջ մէջ եղած սերտ բարեկամութենէն կասկածելով գործը ստուգելու համար տունը պահուքտեցաւ ճիշդ այն միջոցին, յորում Սփինէլօ սովորութիւն ունէր գալ զինքը տեսնելու: Սփինէլօ եկաւ և իր բարեկամին ուր ըլլալը հարցուց, կնիկը կարծելով թէ իր էրիկը տունը չէր գտնուեր, պատասխան տուաւ թէ հոն չէր, և առիթէն օգուտ քաղելով՝ սկսան զիրար գրկել, և այն: Սէփէ՛ որ պահուքտած տեղէն այս բաները կ'տեսնէր, բերնէն բառ մը չհանեց տեսնելու համար թէ այս խաղին վերջը ուր պիտի երթար, և տեսաւ որ իր կնիկը ու Սէփէ ննջարար մտնելով՝ դուռը կը պեցնին: Դիւրին է երևակայել թէ Սփինէլօ, որու ճակատը սաստիկ քերուիլ սկսեր էր, այս կրկին մատնութեան վրայ սրբանցաւեցաւ. բայց նկատելով որ եթէ նոյն միջոցին աղմուկ հանէր, իրեն եղած նախատինքը աւելցընելէ զոտ բանի մը պիտի չժառայէր, որոշեց ուրիշ կերպով մ'իբ վրէժը լուծել:

Սփինէլօ սննեկէն ելածին պէս՝ Սէփէ հոն մտաւ, ու տեսաւ որ կնիկը իր աւրուած մագերը կը շտկէր:  
— Ի՞նչ կ'ընես հոգ, կնիկ, հարցուց:  
— Չե՛ս տեսներ, մագերս կը շտկեմ:  
— Այո՛, իրաւ, տեսայ որ կը շտկուէիր, բարով չտես:



նէի, պատասխանեց Սէփէ, և սկսաւ անոր պատմել  
ինչ որ աչքովը տեսած էր: Կնիկը չկրնարով ուրանալ,  
ամեն բան խոստովանեցաւ և լալով էրիկէն ներում  
խնդրեց:

— Ի՞նչ ինձի ասիէ աւելի մեծ նախատինք մը չէիր  
կրնար ընել, սակայն և այնպէս քեզ կը ներեմ, պու-  
ռաց Սէփէ, այն պայմանով որ բսելիքս ճշդիւ կատարես:  
Կ'ուզեմ որ վաղն ալ Սփինէլօին հետ ժամադրութիւն  
մ'ուներաս առտու ժամը իննին ատենները. իր գալէն  
քիչ մ'ետքը ես ալ պիտի գամ, իմ գալս իմանալուդ  
պէս՝ զանի այս մեծ անտուկին մէջ պիտի պահես և բաւ-  
նալիովը պիտի գոցես. մնացեալը ետքէն կը յայտնեմ  
քեզ. եթէ այս հրամաններու ճշդիւ հետեիս, կ'երդ-  
նում որ քեզ կը ներեմ և միանամոյն ըրածդ ալ կը  
մտնամ:

Կնիկը ներում գտնելու յուսով՝ անոր հրամանները  
ամբողջապէս ի գործ դնելու խօսք տուաւ:

Հետեւեալ օրը, Սփինէլօ և Սէփէ ժամը իննին մի-  
ջոյները մէկտեղ էին: Սփինէլօ՝ որ իր բարեկամին կըն-  
կան խօսք տուեր էր նոյն ժամուն երթալ զինքը գտնել,  
Սէփէէ հեռանալու համար բաւ թէ ուրիշ մէկու մը  
խօսք տուած է հետը ճաշելու:

— Ի՞նչ ճաշի ժամը չէ, այսչափ կանուխ մի երթար,  
բաւ Սէփէ:

Բայց Սփինէլօ պատրուակելով որ կարեօր բան մ'ալ  
ունի զինքը ճաշի հրաւիրող բարեկամին հաշորդելու,  
եղաւ իր սիրուհին գտնելու գնաց:

Սիրահարն ու սիրուհին հագիւ թէ ննջարան մտած  
էին, երբ Սէփէին ոտքի ձայնը լուռեցաւ: Կնիկը ան-  
միջապէս վախնալ ձեռքընելով՝ իր սիրողը սակայն որ  
անտուկին մէջ մտնէ, վրայէն ալ բանիւքով գոցեց և  
սենեկէն դուրս ելաւ: Սէփէ կնիկին հարցուց թէ ճաշը  
պատրաստ էր:

— Կէս ժամէն պատրաստ կ'ըլլայ, բաւ կինը:

— Սփինէլօն, յարեց էրիկը, իր մէկ բարեկամին տու-  
նը ճաշելու գնաց և որովհետեւ իր կնիկը միմտակ պիտի  
մնայ, գնա՛ ինդրէ որ գայ մեզի հետ ճաշէ:

Կնիկը ըրած յանցանքին համար իր էրիկին հնա-  
շանդելու ստիպուելով՝ գնաց իր գրացուհւոյն իմացուց  
որ էրիկը ճաշի պիտի չգայ և եթէ կը հաճի գայ ի-  
րենց հետ ճաշէ. ու զան առնելով՝ տունը վերագար-  
ձաւ: Սէփէ իր բարեկամին կնիկը քաղաքավարական  
ձևերով ընդունելէն յետոյ իր կնոյք հրամայեց որ ի-  
րենց հիւրը պատուելու համար երթայ ինք իր ձեռքով  
փեսայ—ձուագեղ մը շինէ. ու գրացուհւոյն ձեռքէն  
բռնելով՝ զանի ննջարանը տարաւ և դուռը կըպեց:

— Ի՞նչ կը նշանակէ ատիկա, բաւ գրացուհին,  
միթէ ատոր համար զիս ճաշի հրաւիրեցիք, միթէ այդ  
ձեր է ամուսնուոյս հետ ունեցած բարեկամութիւնը. . .

— Բարկանալէ յառաջ, Տիկին, պատասխանեց Սէ-  
փէ անտուկին մտնելով և միշտ անոր ձեռքէն բռ-  
նելով, հաճեցէք անգամ մը զիս մտիկ ընել: Ձեր է-  
րիկը սիրած եմ և կ'սիրեմ միշտ եղբորս պէս: Իսկ  
գալով անոր իմ հետս ունեցած բարեկամութեանը՝ չը  
գիտեմ թէ անկեղծ է, բայց ազէկ գիտեմ որ այդ  
բարեկամութիւնը չարգիլեր զանի իմ կնիկիս հետ պառ-  
կելու ինչպէս որ քեզի հետ կը պառկի. այս բանը գեռ-  
երէկ քրաւ և աչքիս առջև. զինքը սիրելուս համար  
կ'ուզեմ որ փոխադարձաբար վրէժս լուծեմ, և ինչպէս  
որ ինքք իմ կնիկիս հետ հաճոյքներ վայելցնէ՝ իրաւունք  
է որ ես ալ ձեզի հետ վայելեմ: Եթէ դուք այդ հա-  
ճոյքը ինձի մերժէք, հիմակուանէ ձեզի կ'ըսեմ որ իր  
հետ անանկ կ'երսով պիտի վարուիմ որ թէ ինքք և  
թէ դուք գոհ պիտի չըլլաք:

Բայց որովհետեւ կնիկը չէր կարծեր որ էրիկը իրեն  
այսպէս անհաւատարիմ գտնուէր, Սէփէ գանի ապա-  
հույցընելու համար տեսածները մանրամասն կերպով  
նկարագրելով պատմեց:

— Քանի որ որոշած էք, բաւ անոր կնիկը, էրիկիս  
քրած նախատինքին վրէժը իզմէ առնել, կը զիջանիմ,  
այն պայմանով որ ետքէն զիս ալ ձեր կնիկին հետ հաշ-  
տեցընէք. ես իմ կողմէ կը ներեմ իրեն ինձի դէմը-  
րածին համար:

— Անհող եղիք, յարեց Սէփէ, ամեն բան վրաս



կ'առնեմ. ասկէ զատ ձեզ թանկագին դոհար մ'ընծայ  
պիտի տամ: Աս բերլով կաթողին համբարեց զան՝ ու  
կամաց մը սնտուկին վրայ հրելով՝ լաւ մը իր վրէժը լաւ  
ծեց:

Սփինէլօ՝ որ սնտուկին մէջէն ամեն բան լսած էր՝  
ստակալի բարկութիւն մ'եկաւ վրան և թիչ մնաց որ կա-  
տաղութենէն ճաթի. և թէ Սէփէին բարկութենէն չլախ-  
նար խօսք պիտի չմնար որ կնոջը չըսէ, նոյն խոսք գոցուած  
տեղէն. բայց նկատելով որ նախայարձակը ինքը եղած  
էր, և թէ Սէփէն ակն ընդ ական կը հատուցանէր ի-  
րեն, հանդարտեցաւ ու որոշեց որ առաջինէն աւելի  
սերտ բարեկամ մնայ անոր հետ:

Այս միջոցին գրացուհին սնտուկին վրայէն իջնելով՝  
իրեն խոստացուած գոհարը խնդրեց: Անատեն Սէփէն  
սննեկին դուռը բացաւ և իր կնիկը կանչելով.

— Կնիկ, ըսաւ սա արկղը բաց, որպէս զի խոստա-  
ցած գոհարս աս տիկնոջ տամ, ապա գէպ ի գրացու-  
հիին դառնալով՝ որ իր էրիկը սնտուկին մէջ տեսնելուն  
կը զարմանար: — Ահա, գեղանի տիկինս, ըսաւ, այն  
գոհարը զոր ձեզի խոստացեր էի:

Դժուարին է բոել թէ երկուքէն ո՞րը աւելի ամէցաւ,  
Սփինէլօ թէ իր կնիկը. բայց որովհետեւ եղածը եղած  
եղած էր և ուրիշ ճար չկար՝ Սփինէլօ սնտուկէն դուրս  
ելնելով՝

— Հիմա առնելիք տայիք չունինք, սանահար, ը-  
սաւ առանց ուրիշ բացատրութեան մտնելու, և թէ  
որ կ'ուզես ինձի հաւատալ՝ առաջուանէ աւելի բարե-  
կամ ըլլալ պէտք ենք, վասն զի ես իմ բրածիս պա-  
տիժը գտայ, առաջին յանցաւորը ես ըլլալուս ասկէ  
աւելի խայտառակ պատիժ մը չէի կրնար կրել — ինչ  
չափով որ չափեցի նոյն չափով չափուեցայ. Ակն ընդ  
ական և եղջիւր ընդ եղջեր:

ԳԱՆԱԿՈՒ ԵՒ ԳՈՀՈՒՆԱԿ ԻՆՆԵՎԵՅ՝ ԵՐԻԿԸ

Բարիկի մէջ վաճառական մը կար որ թիչ դրամա-  
գլուխով թիչ ժամանակի մէջ հարստացած էր: Ա-  
սիկա աղայ մ'ունէր Լուի անունով, որ իր հօրը բարե-  
կամներուն շնորհիւ նախ բանակին և՛ ապա արքունեաց  
մէջ պաշտօնի մտնելով՝ առջև գնաց: Ինքը բարեբարոյ  
և արթուն երիտասարդ մ'ըլլալուն, տեսնուած աշխու-  
կաններուն մէջ, յարգ ու պատիւ ստացաւ և սկսաւ իր-  
մէ շատ բարձր մտադրելու հետ կենահայել: Օր մը՝ որ  
Երուսաղէմէն նոր վերադարձող քանի մ'ապետներու  
հետ կը գտնուէր՝ լսեց որ այս պարոնները Փրանսայի,  
Մակիլիայի և ուրիշ իրենց պարտած երկիրներու կի-  
նեքը կը գովէին և մէջերնէն մէկը կը պնդէր որ աշ-  
խարհիս մէջ չէր տեսած տիկին Պետիքիէ Էկանօ անուն  
Պօլօնեացի կնիկէն աւելի գեղեցիկ մը, կամաց կամաց միւս  
պարոններն ալ իրեն համամիտ գտնուեցան անոր գեղեց-  
կութիւնները մի առ մի հաշուելով, և աւելցուցին որ  
այս կինը շատ դժբաղդ կը գտնուէր, վասն զի իր ծը-  
նողքը զինքը բունի ամուսնացուցեր էին սաստիկ աղեղ  
մտադու մը հետ՝ որ բոլորովին անյարմար էր իրեն, թէև  
պատուաւոր և շատ հարուստ:

Լուի որ մինչև այն օրը սէրը ինչ էր չէր գիտեր,  
յանկարծ ներսը նոր տեսակ զգացում մ'ունեցաւ այս  
կնոջ համար: Ինչեր ցորեկ անոր վրայ կը մտածէր և  
կը խենար որ երթայ զանի անդամ մը տեսնէ: Այս  
նպատակաւ իր հօրմէն Երուսաղէմ երթալու հրաման  
խնդրելով՝ ուղղակի Պօլօնիա գնաց հանքքէն անու-  
նունով: Ինչպէս ըրաւ որ իր հեռուէն պօշտած

\*Ռամկօրէն այս անունը կը արուի կաւատներու:



կինք՝ գալուն երկրորդ օրը մօտէն՝ պատուհանը տեսնէ  
 և ասով համազում թէ սրբան իրաւունք ունէին զանկ  
 գովելու. ուստի իր սերը աւելի ևս բորբոքեցաւ և այս  
 բորբոքումի մէջ երգում՝ բրաւ Պօլնեայէ չմեկնիլ ա-  
 նոր հորհրդները չվայելած: Միշտ մը դանկելու վրայ եր-  
 կար ատեն մտածելէն ետև՝ վերջապէս իր յատակադի-  
 ծը շինեց, և որոշեց այս տիկնոջ էրիկին քով պաշտօնի  
 մանել եթէ կարելի էր: Այս նպատակաւ իր ձիերը ծա-  
 խեց և հեաք բերած ծառային պատուիրեց թէ ուր որ  
 տեսնէ զինքը չճանչնալ ձեռքնէ, յետոյ իջած պան-  
 դոկին տիրոջը դիմեց և անոր բաւ թէ շատ երախ-  
 տագէտ պիտի մնար իրեն եթէ զինքը մեծ մարդու մը  
 քով պաշտօնի դնէր. մասնաւորապէս էկանօ վաճառա-  
 կանին մօտ, որ մեծ գործեր բնելուն համար կարելի է  
 իրեն պէտք ունենար իբրև գրագիր և այլն:

Պանդոկապետը յաջողեցաւ Հանքքէնին խնդիրքը  
 կատարելու: Հանքքէն էկանօի քովը մտնելով ինքզին-  
 քը քիչ ժամանակուան մէջ այնքան սիրցուց անոր  
 որ հին ու բնտանի բարեկամի պէս սկսաւ անոր տունը  
 մտնել երես և խեղճ մարդը՝ որ խիստ տգեղ բայց ա-  
 մենաբարի էր, անոր վրայ ամենակատարեալ վստահու-  
 թիւն ունեցաւ:

Կիրակի օր մը Պ. էկանօ որսի երթալով՝ Հանքքէն  
 տունը մնաց Պէաթրիչէին հետ. (հարկ է յիշել որ այս  
 տիկնոն ալ իր էրիկէն բոլորովին դժգոհ՝ այս սիրուն  
 երիտասարդին անտուժենէն շատ կ'ախորժէր): Տիկինը  
 նարա խաղալ առաջարկեց: Մեր սիրահարը որ անոր  
 հաճելի բլլալ կ'ուզէր, կը թողուր որ վատաբերի՞նա, ա-  
 ուանց յայտնի բնելու որ ինքը դիտմամբ կ'ընէր: Պէա-  
 թրիչէն շատ ուրախ էր: Քանի մը դրացուհիներ եկած  
 էին զինքը տեսնելու, երբ մեկնեցան, Հանքքէն իր խա-  
 զը շարունակելով խորունկ ախ մը քաշեց:

— Ի՞նչ ունիս, հարցուց տիկինը՝ համակրութեամբ  
 ակնարկը անոր վրայ յառելով, ինչո՞ւ այդպէս կը հա-  
 ուաչես, միթէ կորսնցնելուդ համար կը նեղանաս:

— Բարէ, տիկին, հառաչելու աւելի ծանր պատճառ  
 մ'ունիմ:

— Կաղաչեմ, պարոն, բո՛ւ ինձի ինչ ունիս, բաւ-  
 տիկինը խանդաղատանօք: Հանքքէն երկրորդ և աւելի  
 աղդու հառաչանք մ'արձակեց, որով տիկինը սաստիկ  
 շարժած՝ ևօ առաւել սկսաւ աղաչել որ նա իր ցաւը  
 յայտնէ:

— Ախ, բուն, տիկին, բայց պիտի չբարկանա՞ք ար-  
 դեօք եթէ հառաչներուս պատճառք իմանաք, չեմ ու-  
 ղեր զանոնք բսել ձեզ, վախճալով որ ուրիշի կ'այտնէք:

— Ապահով եղիր, սիրելիդ իմ, ինչ որ բլլայ ցաւդ  
 և յուսահատութիւնդ մէկու մը բան մը պիտի չբսմ:

— Այդ պայմանաւ սիրտս կը բանամ ձեզի, պատաս-  
 խանեց Հանքքէն, ու արատաւախց աչքերով իր ո՞վ  
 բլլալը յայտնեց անոր, գեղեցիկութեան համբաւը բած  
 բլլալը, ունեցած անպատում սերը և այս սերէն մըրած  
 Պօլնիա դարով՝ իրենց քով պաշտօնի մտնելը մեծ ճար-  
 տասանութեամբ պատմելէ ետք՝ իր յանդգնութեան  
 համար ներում ինդրեց աւելցնելով որ եթէ տիկինը  
 իրեն համար նոյն համակրութիւնը չզգայ անգամ, բան  
 մը չբսէ գոնէ և իրենց քովը թողու, որ զինքը ստէպ  
 տեսնելու երջանակութիւնը ունենայ:

Ո՞վ զարմանալի քաղցրութիւն և հիանալի բարե-  
 սրտութիւն Պօլնեայի տիկնանց. այն ինչ Հանքքէն կը  
 խօսէր՝ Պէաթրիչէ գրեթէ արբիտ անոր երեսն ի վար կը  
 նայէր զմայլած և՛ անշուշտ իր դիւրազգացութենէն՝  
 աչքերը լեցուելով՝ հառաչանքներն ալ պարոնին հա-  
 ուաչանքներուն կը խառնէր: Երկար չընեմ, այս կի-  
 նը որ իր էրիկը չտիրելուն՝ ուրիշ մը սիրելու յօժարու-  
 թեամբ պատրաստ էր, խոտացաւ երիտասարդին սերը  
 վարձաբեր նոյն գիշերզանի իր սենեակը հրաւիրելով, և  
 առ հաշիւ անոր քանի մը համբոյրներ նուիրեց կանխիկ:

Էկանօ որսէն վերագառնալով՝ յօգնած դադրած՝ ըն-  
 թրեց ու պառկեցաւ. կիւն ալ իրեն հետեկեցաւ, բայց  
 ննջարանին դուռը բաց ձգեց: Հանքքէն որ նոյն գի-  
 շեր տունը մնացեր էր, որոշեալ ժամուն հո՛ւ կ'երթայ,  
 ներս մտնելով դուռը կը գոցէ, և յուշիկ մը տիկնոջ  
 մօտենալով զգուշեաւ իր ձեռքը անոր կուրծքին կ'աանի:  
 Պէաթրիչէ՛ որ չէր քնանար, իր երկու ձեռքովը կը



բանէ և բարեկամաբար սեղմելով դայն՝ անկողնայն մէջ այնքան կերերայ որ էրիկը կ'արթննայ:

—Երիկունը, կ'ըսէ Պէտթրիչէ Էրկանը՝ բան մը չուղեցի բտել քեզ՝ որովհետև յոգնամ էիր. բայց հիմա կը խնդրեմ, ըսէ ինձի թէ քու ծառայութեանդ մէջ գանուողներէն ամենէն հաւատարիմը ո՞վ է:

—Ինչո՞ւ կ'ընես այդ հարցումը, կնիկ, պատասխանեց Էկանո. չե՞ս գիտեր որ ամենէն աւելի Հանըքէնը կը սիրեմ, բայց ինչմիտքով այդ հարցումը կ'ընես ինձի:

Մեր սիրահարը իր անունը լսելուն պէս կ'աշխատի ձեռքը քաշել. վախնալով որ իր սիրուհին զինքը չմտնէ. բայց Պէտթրիչէ ձեռքը անցածը շատով չէր թողուր:

—Հարցըներուս պատճառը այն է որ ես ալ Հանըքէնի վրայ միևնոյն համարումը ունե՞ի և դայն արժանի կ'գտնէի մեր յարգանաց, բայց հիմա տարրեր է կարծիքս, որովհետև այսօր անանկ բաներ յանդգնեցաւ բտել ինձ քու բացակայութեան միջոցին, անանկ անամօթ առաջարկութիւններ բրաւ՝ որոնք իր որիկայ մ'ըլլալուն բացարձակ ապացոյցներն են: Զքեզ համոզելու համար ես ալ հաւանիկ կեղծեցի իրեն և հետք ժամադիր եղայ պարտէզը՝ սօսիին տակը, ուր ան ալ կէս դիշերէն ժամ մը ետքը պիտի գայ. հիմա կ'ուզեմ որ դուն երթամ՝ իմ շրջազգեստս ու վերարկուս հագած՝ և հաւատարիմ կարծած և հետք բնտանեբար վարուած մարդիկ ինչ ըլլալը հասկընաս:

—Ի՞նչ կ'ըսես, կնիկ. անշուշտ կ'երթամ, բաւ է քրիկը և կնիկին շրջազգեստը ու վերարկուն մութին մէջ գտնելով՝ աղէկ գէշ վրան հագաւ ու խենթի պէս պարտէզը իջաւ, սօսիներուն տակը սպասելու: Էկանո գուրս ելածին պէս տիկինը ելաւ գուռը գոցեց և Հանըքէնի սիրտը նստեցնելու համար ձեռքէն եկածը բրաւ, վառն զի գիւրին է երեւակայել թէ խեղճ երիտասարդը ինչ սարսափելի վայրկեաններ անցուցած էր քիչ մ'առաջ: Յետոյ տիկինը պատշաճ դատեց որ ալ քովէն ելնէ նա ու վար իջնէ:

—Ելիր, սիրելիս. ձեռքդ փայտ մ'առ ու շիտակ պարտէզը գնա, հոն այնպէս ձեռացուր որ ինձ սիրոյ

յայտարութիւն բրած էիր զիս փորձելու համար և հետուէն էրիկս տեսնելուդ պէս, իբր թէ զիս կարծելով, բերնիդ եկածը դուրս թափէ ու յանդիմանէ զան իբրև անամօթ կին մը. քիչ մ'ալ կ'ուզես նէ գաւազանովդ զգուէ զանի: Շատ համով խաղ մ'ըրած կ'ըլլանք այն մարդուն, որ իմ կամքիս հակառակ զիս իրեն կնուծեան առաւ:

Հանըքէն կ'եղնէ շիտակ պարտէզը կ'իջնէ, ձեռքը հասակեկ գաւազանով մը. Էկանո անոր դարձաբարտեսներով՝ իբր թէ զանի բարեկամօրէն բնդունելու կը պատրաստուի ու ոտք կ'եղնէ:

—Անդգամ ու անամօթ կին, կ'պոտայ Հանըքէն անոր մօտենալով, երբէք չէի կարծեր որ ան պատուական էրկանդ այդքան ապերախտ ըլլաս, միթէ կարծէիր որ քեզի պէս ես ալ ապերախտութիւն պիտի բնեմ. իմ միտքս զքեզ փորձել էր, ահա քու արժանաւոր վարձքդ, կ'յաւելցընէ նա և գաւազանը վերցընելով բաւական սաստիկ հարուած մը կու տայ ուսերուն. Էկանո իր սպասաւորին հաւատարմութեանը վրայ բողբոլին գոհ՝ բայց երկրորդ հարուածէ մը պրծելու համար, առանց բաւ մ'արտաբերելու կծիկը կ'գնէ, մինչդեռ Հանըքէն գաւազան ՚ի ձեռին զինքը կ'հալածէր:

Այսպէս շնչասպառ սենեակը վերագառնալով՝ գլուխը եկած փորձանքը և Հանըքէնին հաւատարմութիւնը կնիկին կը պատմէ, — կարծեմ թէ զքեզ համարձակախօս տեսնելով, կ'յաւելցընէ նա, փորձել ուզած է, բայց երանի թէ չփորձէր, դեռ սակորներս կը խօսին:

—Վանի որ այսքան առաքինի է ու պատուաւոր, արդար է որ ես ալ զինքը սիրեմ ու յարգեմ, կը պատասխանէ Պէտթրիչէ հազիւ խնդուքը բռնելով:

Կ'ըսուի թէ քիչ ատենէ Պ. Էկանո մեռնելով Հանըքէն Պէտթրիչէն կնուծեան առաւ:



Հ Ա Յ Գ Ե Ր Ի Ն

Սիկիլիայի կիցեօմ թագաւորին օրովը՝ սոյն կղզոյն մէջ Պ. Էմբի անունով աղնուական մը կար, մեծ հարստութեան տէր. ասիկա շատ մը զաւակներ ունենալուն՝ բազմաթիւ ծառաններու պէտք ունէր, ուստի շատ մը գերիներ ծախու առաւ, զորս ձենոյկայի ծովահէկներ հաշատանի ծովեզերեայ երկիրներէն բերած էին: Այս գերիներու մէջ՝ զորս Պ. Էմբի թիւրք կը կարծէր, մէկը կար թէօտոր անուն որ միւսներէն աւելի սիրուն և աղնիւ հով մ'ունէր: Աս գերին Պ. Էմբիի ազոց հետ կրթուելով՝ քանի կը մեծնար այնքան բարի ու աղնիւ յատկութիւններ ցոյց կու տար, որոնցմով անքան սիրելի եղաւ իր տիրոջը որ իր ազատութիւնը ստացաւ անորմէ և վերստին մկրտուելով՝ Բիէթրօ կոչուեցաւ:

Պ. Էմբի Վիօլանթ անուն աղջիկ մ'ունէր, որ առաքինի ու գեղեցիկ ըլլալով հանդերձ՝ այնպիսի տարիքի մը մէջ կը գտնուէր, յորում սիրելու պէտքը կ'զգացուի: Վիօլանթ Բիէթրօյի հետ կենակցելով սկսաւ անոր համար անդիմադրելի համակրութիւն մ'զգալ, զոր մեր հայ գերին ալ նշմարելով նոյնը զգաց փոխադարձաբար: Այս համակրութիւնները շատ չանցաւ բուն սիրոյ մը փոխուեցան, բայց երկուքէն և ոչ մէկը կը համարձակէր բան մը յայտնել թէ և երկուքն ալ իրարու միտքը լաւ կը հասկընային: Վերջապէս բազդը իրենց վրայ գթաց և նպաստաւոր առիթ մը ներկայացուց զերենք վառող կրակը անվախ կերպով իրարու յայտնել տալու համար:

Պ. Էմբի քաղաքէն քիչ հեռու գեղեցիկ ամառանոց մ'ունէր ուր շատ անգամ իր կինը, աղջիկն և ու-

րիչ աիկիններ զուարճանալու կ'երթային: Օր մը տիկին Էմբի զնորատի Բիէթրօն՝ սովորական բնկերութեան հետ մէկտեղ հոն տարած էր: Գաղաքը վերադառնալու վրայ էին երբ յանկարծ երկինքը սև ամպերով ծածկուեցաւ փոթորիկի նշաններով: Տիկինն և իր ընկերուհիները անհրեէն հոն շարգիլուելու վախով անմիջապէս ճամբայ ելան քաղաքը վերադառնալու: Թէ և բոլոր խումբը արագ կ'քայլէր, բայց երիտասարդն ու երիտասարդուհին աւելի արագ կ'երթային չէ թէ փոթորիկն երկիւղէն այլ զիրենք միացնող սէրէն ողևորուած: Այսպէս սով ընկերութենէն այնքան հեռացեր էին որ ալ չէին երևար երբ քանի մը ստակալի որոտումներէ ետև ահագին հատերով կարկուտ մ'ալ սկսաւ տեղալ, որով տիկին Էմբի և միւս տիկնայք ստիպուեցան երկրազործի մը հղիկը մտնել ապաստանիլ: Բիէթրօ և Վիօլանթ ուրիշ տեղ մը չգտնելով՝ աւերակի մը մէջ մտան, ուրու մէկ խիտտ պղտի մասը տանիքով ծածկուած էր և ստիպուեցան այն տեղ դրեթէ իրարու փակած մնալ, վասն զի շուրջ ամեն կողմէ ներս կը վազէր: Այս դրացութիւնը՝ որմէ երկուքն ալ ի ներքուստ խիտ գոհ էին, իրենց սիրտը իրարու բանալու առիթը տուաւ: Նախ՝ Բիէթրօ խօսելով ըսաւ.

— Որքան շնորհակալ եմ այս կարկուտէն և որքան աւելի շնորհակալ պիտի ըլլայի եթէ յաւիտեան տեւեր, որպէս զի այսպէս ձեր քովը մնամ.

— Կ'խոստովանիմ որ ես ալ դժգոհ պիտի չըլլայի պատասխանեց օրիորդը: Բիէթրօ ան ատեն աղջկան ձեռքը կ'ընէ կ'անդմէ և համբոյրներով կ'ծածկէ, ան ալ այս դժուանքներուն աւելի խանդաղատական դժուանքով կը պատասխանէր. երկու պարմանիք կ'զրկուին, իրենց շրթունքը իրարու կը փակցընեն, սիրոյ ամեն հեշտութիւններ կը շուայլեն իրարու և դուրսի գէշ և զանակը կը ցածնուն չափ աղէկի կը գործածեն. աւելորդ կը համարիմ ամեն պարագայները մանրամասն ըսել, բայց կը յիշեմ որ տունը չգործած իրար ստէպ տեսնելու միջոցներու վրայ խորհեցան և կարգադրեցին ամեն բան ապագային համար:



Երկու սիրահարները բաւական ատեն ստէպ զիրար տեսներու առիթներ ունեցան առանց մէկուն կասկած տալու: Բայց որովհետև վերջապէս ջուրին բարչք աղբիւրը երթալ գալու ատենը կը կոտրի՝ օր մը . . . օրիորդը յղի մնաց և հետեւաբար յուսահատ: Բիէթրօս տեսներով միտքը դրաւ կծիկը գնել քաղաքէն և իր այս գիտաւորութիւնն ալ սիրուհին յայտնեց.

— Եթէ մեկնիս, ըսաւ Վիօլանթ, գիտցած ըլլաս որ քնքին քս կը մեռցնենմ:

— Ի՞նչ քնեմ, սիրականս, պատասխանեց Բիէթրօս, փորիդ ուռեցքը գլուխ անանկ փոթորիկ մը պիտի բերէ որ մեր առաջին փոթորիկն պիտի չնմանի . . . կարելի է քու տկարութեանդ ներքն, բայց ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս, անշուշտ հօրդ արդար բարկութեանը զոհ պիտի ըլլամ:

— Իրաւ է որ՝ շատ չեղթար ամեն բան երեւան կելնէ, բայց հաւատի եղիր, սիրելի բարեկամ, որ եթէ դուն ալ ինծի պէս գաղտնապահ մնաս, ոչ ոք պիտի իմանայ որ դուն ինձ մեղսակից եղած ես:

— Այդ պայմանաւ կը մնամ, վրայ բերաւ Բիէթրօս, այլ խոստմունքդ չմոռնաս:

Վիօլանթ տեսներով որ երթալով շէնքը շնորհքը՝ հասակը . . . փորը կը կլորնար և ալ անկարելի էր իր վիճակը մօրմէն գաղտնի պահել, ամեն բան յայտնեց անոր աղաչելով արատաւագին որ զինքն ազատէ: Մայրը բարկացած՝ յանդիմանութիւն չմնաց որ անոր չուղչէ և վերջապէս ուղեց գիտնալ թէ անոր մեղսակիցն ո՞վ եղած էր: Աղջիկը խծիպ մը շտկեց զոր մայրը կլկեց և հաւանական պատրուակ մը գտնելով՝ երկուքնին մէկէն ելան ամառանոց գացին ծննդաբերութիւնը գաղտնի կատարելու համար հոն:

Վերջապէս դժնդակ օրը լուցաւ, բայց ցաւալին այն է որ նոյն ժամուն Պ. Էմրի ալ հոն եկաւ դիպուածով, և Վիօլանթի լացերն ու գոչումները լսելով՝ լեղապատաս անոր քով վազեց անոնց պատճառք իմանալու: Անկարելի է հօր զայրոյթն ու բարկութիւնը նկարագրել, ամառանդ երբ ըսին իրեն թէ Վիօլանթ

իր մեղսակից չէր ճանչնար, նախատինք ու թշնամաք չմնաց աղջկանը գլուխը թափեց նա և անշուշտ զան պիտի սպաննէր ալ իր նորածին տղուն հետ՝ եթէ նա հօրը կատաղութենէն վախնալով՝ Բիէթրօսին անունը չտար:

Պ. Էմրի՝ Բիէթրօսի ապերախտութիւնը իմանալով փրփրած՝ ձի կը հեծնէ խկոյն և Պ. Փօնրարին՝ որ քաղքին կառավարիչն էր, կը դիմէ և գործին եղելութիւնը կ'իմացնէ: Փօնրար Բիէթրօսն ձերբակալել կուտայ և երկար հարցաքննութիւններէ ետքը, սոսկալի տանջանքներու մէջ կ'ստիպուի նա իր յանցանքը խոստովանիլ: Ողորմելին նախ՝ ամեն քառուղիներու մէջ գանակոծուելու ու յետոյ կախուելու կը դատապարտուի: Այս վճիռը Պ. Էմրիի սիրտը խնդութեամբ կը լեցնէ՝ բայց իր վրէժխնդրութիւնը չյազեցնենք և կ'ուզէ որ մի և նոյն օրը սպաննուին նաև իր զաւակն ու թոռը. ուստի այս նպատակաւ գինիի բաժակի մը մէջ թոյն կը դնէ և զայն թուրի մը հետ հաւատարիմ ծառայի մը ձեռքը կու տայ և,

— Գնա՛, կ'ըսէ անոր, Վիօլանթը գտիր, ու իմ կողմէս ըսէ որ անմիջապէս այս երկուքէն մէկը ընտրէ, թէ ոչ՝ պիտի ստիպուիմ զինքը իրեն արժանի եղած հրապարակային մահուամբ սպաննել: Այս բտէղք ետք նորածին մանուկը առ և անոր գլուխը պատին զարնելով ջախջախէ ու կոյանոցը նետէ:

Մառան՝ որ խիստ չարասիրտ մէկն էր՝ առանց ամենափոքր գովամակութիւն մը ցոյց տալու անմիջապէս մեկնեցաւ:

Սոյն միջոցին Բիէթրօսն բանտէն հանք էին և նա արդէն խարաղանի հարիւր հարուած ընդունել էր, երբ՝ զան կախաղանին տեղը տանելու համար երեւելի հիւրատունի մը առջևէն կ'անցքնէին՝ երեք նշանաւոր հայ՝ պատգամաւորներ՝ զորս իրենց թագաւորը Հռոմ՝ զրկած էր խիստ կարեւոր գործի մը վրայ բանակցելու համար, մահապարտին գարուստը լսելով՝ պատուհանը ելան զանի տեսնելու: Բիէթրօս՝ կէս մէջքէն վեր մերկ էր և ձեռքերը ետին կապած:

\* Բնագիրը ձեռք այսպէս է:



Դեպքաններէ մէկը՝ Փինէոս, որ պատկառելի ու մեծարոյ ծերունի մ'էր՝ ուշի ուշով անոր նայելով՝ ստամոքսին վրայ կարմրորակ մեծ նշան մը տեսաւ: Այս նշանը իսկոյն միտքը ձգեց իր որդիներէն մէկը՝ զոր ծովահէնները տասնհինգ տարի յառաջ Լայպոօի ծովեզերքէն գողցեր էին ու ան ատենէ ՚ի վեր լուր մը առած չէր անոր վրայ: Նա մտածեց՝ որ եթէ իր տղան ալ ապրէր՝ նոյն տարիքը պիտի ունենար և այս կրկին նմանութիւններէն չարժամ՝ երեակայեց որ իրօք անիկա կրնար իր որդին բլլալ: Այս կասկածը ստուգելու համար՝ անգամ մը — Թէոտոր, պոռայ: Բիէթրօ այս իր նախկին հայկական անունը լրամին պէս՝ անմիջապէս գլուխը կը վերցնէ, ոտտիկաններն ալ դեպքանները յարգելու համար կ'անդ կ'առնուն: Ան ատեն՝ Փինէոս մահապարտին կը հարցնէ թէ ո՞ր տեղացի ու իր հայրն ո՞վ է: — Ես հայ եմ, կը պատասխանէ Բիէթրօ, Փինէոս անուն մարդու մը տղան, որ ծովահէններէն գողցուելով հոս իբր գերի ծախուած եմ: Այս խօսքին վրայ Փինէոս ամենեկին չտարակուսիր որ նա իրօք իր տղան է, անմիջապէս կը վազէ, կը դրկէ նոյն իսկ զանի պատող զինուորներուն մէջ տեղ, վրան ծանրագին վերարկու մը կը ձգէ և կը պահանջէ որ մահու պատիժը՝ մինչև ցնոր անօրէնութիւն ՚ի կախ ձգուի: Յետոյ իր միւս բնկերակիցներուն հետ Քօնրար կառավարչին երթալով՝

— Այս մարդը, կ'ըսէ անոր, զոր իբրև գերի դատապարտած էք, ազատ է. ես իր հայրն եմ և նա պատրաստ է պատկուելու այն օրիորդին հետ զոր մայր բրած է: Հաճեցէք ուրեմն յետաձգել մահու պատիժը մինչև աղջկան հաւանութիւնը առնուիլը:

Իստաւորը բոլորովին կը զարմանայ թէ գերի համարուած մարդը դեռ պանին որդին բլլայ և կ'ամչնայ որ այնքան գահավէժ վճիռ մը տուած էր. կը խոստովանի թէ Փինէոս իրաւունք ունի և անոր խնդրածը շնորհելով Պ. Էմբիի լուր կը զրկէ և եղելութիւնը կ'իմացնէ:

Պ. Էմբի բոլորովին ապշած՝ կը վախնայ որ իր տուած անողորմ հրամանները գործադրած չբլլան՝ իսկոյն մարդ

կը հանէ նախորդ ծառային ընելիք կրկին սպանութիւնը արդիւրու համար. բարեբաղդաբար ժամանակին կը հասնի սա և խեղճ մանուկն ու թշուառ օրիորդը մահունէ կ'ազատին: Ասոր վրայ Պ. Էմբի՝ Փինէոս դեպքանին երթալով ներողութիւն կը խնդրէ իր վաղեմի գերւոյն դէմ բանեցուցած խտուրթեանը համար. հազար մեղայ կ'ըսէ և կը հաւաստէ զան թէ շատ երջանիկ պիտի բլլայ եթէ Պ. Թէոտոր իր աղջիկը առնելու հաւանի: Փինէոս բարեկամաբար կ'ընդունի զանի և կ'յաւելցնէ թէ՛ եթէ իր տղան չուզէ զՎիօլանթ կնութեան առնուլ՝ ինքն ալ կ'պահանջէ որ առաջուան վճուին համեմատ կախուի նա: Երկու հայրերը այսպէս համակամ ու համամիտ Թէոտորը կը դանեն որ դեռ կախուելու վախով կը տապկուէր, նա Վիօլանթը կնութեան առնելու առաջարկը ընդուն պէս՝ ամեն բան կը մոռնայ և կը պատասխանէ թէ ինքն ամենէ երջանիկ մարդը պիտի բլլար եթէ Վիօլանթի էրկին բլլար:

Վիօլանթի պատասխանն ալ՝ վեր վար ճիշդ նոյնը եղած էր, ուստի հարսանեաց ամենափառաւոր հանգէսը նոյն օրը տեղի ունեցաւ ՚ի մեծ խնդութիւն աւմենայն քաղաքացւոց: Փինէոս Հոռմի պատգամաւորութիւնն լննցնելէ ետքը՝ իր հարսը՝ որ առաջուանէ աւելի գեղեցկացեր էր, տղան ու թոռը առնելով՝ իր մտանաւոր նաւը հեծաւ և Հայաստան վերադառնալով՝ երկար ատեն այս բոլոր բնտանիքը խիստ երջանիկ ու հանգիստ կեանք մ'անցուց:



Գիտէք որ Պլորանտի մէջ սէրէ և հաւատարմութեանէ աւելի՝ անառակութիւնը տիրած է միշտ : Իրաւ է որ շատ անգամ ալ այնպիսի պատճառներ կը պատահին որ ոմանց անառակութիւնը բացատրելի կամ ներելի կ'ըլլայ ամեն տեղ, բայց Պլորանտի մէջ կարծես թէ մարդիկ աւելի դիւրաւ կը միտին այս ճամբուն մէջ մտնելու :

Ժամանակաւ այս քաղաքը տիկին մը կար, զոր բընութիւնը իր ամենէ թանկագին ձիրքերովը զարդարած էր, խելք, գեղեցկութիւն, երիտասարդութիւն ամեն բան ունէր նա, և խիստ մեծ բնամտիքէ էր : Ճաւային այն է որ իր ծնողքը ասոր յարմար էրիկ մը դտնել աշխատելու տեղ՝ զան տուած էին քիչ ժամանակի մէջ՝ չուխայի գործերով հարստացած խանութպանի մը, որ ոչ կրթութիւն ունէր և ոչ բնական ձիրքեր : Տիկինը, որ իր ազնուապետական ծագման մեծ կարեւորութիւն կու տար, շատ անտարբերութեամբ ու գրեթէ արհամարհանքով կը նայէր անոր և կրցածին չափ քիչ անգամ զանի իր անկողնին մէջ կը հիւրընկալէր, վախճարով որ բացէ՛ ի բաց մերժումը մեծ փութորկի կամ բաժանումի տեղի չտայ :

Բայց որովհետեւ մարդուս բնական պէտքերը շատ անգամ անզուսպ պահանջողութիւն մը կ'ունենան, այս տիկինը միտքը դրաւ այնպիսի մէկը գտնել որ իրեն աւելի արժանաւոր ըլլայ, ու իրօք ալ ուղածը գտաւ : Թր մը եկեղեցի գացած ըլլալով՝ իրեն քաղաքակից ազնուական մը տեսաւ հոն վայելուչ կերպով հագուած, և որով գեղեցկութեանը շատ հաւնեցաւ ու սիրեց զայն :

Այս կիրքը երթալով այնքան սաստկացաւ որ գիշերը չէր կրնար հանգստանալ եթէ ցորեկը զան տեսած չըլլար : Երիտասարդը բոլորովին անտեղեակ էր այս զգացումէն և գեղանի տիկինը շատ հպարտ էր բանը յայտնելու համար, նամակով կամ ուրիշի մը ձեռքով : այս նպատակին հասնելու համար՝ ուրիշ սատանութիւն մը մտածեց նա և գտաւ : Գիտած էր որ երիտասարդը ստէպ կը տեսնուէր գիրուկ՝ բայց առաքինութեան ու միամտութեան համբաւ ունեցող կրօնաւորի մը հետ : ուստի մտածելով որ այդ կրօնաւորը իրեն կրնար ծառայել առ սղուն հետ տեսնուելու, ելաւ վանքը գնաց, կրօնաւորը կանչելով՝ փափաք յայտնեց որ անոր խոստովանուիլ կ'ուզէ : Բարեմիտ քահանայն հաճութեամբ մտիկ ըրաւ զանի : Տիկինն իր մեղքերը բռնէն վերջը յամուց որ մասնաւոր խոստովանութիւն մ'ալ ունի և շնորհք մը պիտի խնդրէ իրմէ : — Չեք խրատներուն և օգնութեան մեծագէս պէտք ունիմ, տէր հայր, գիտէք թէ ո՞վ են իմ ծնողքս, և ո՞վ է ամուսինս, բայց չէք գիտեր թէ էրիկս զիս ինքզինքէն աւելի կը սիրէ և ձեռքէն եկածը կ'ընէ զիս երջանիկ բնելու : չարէ և ձեռքէն եկածը կ'ընեմ, իմ սէրս ալ իրենին կը հաւատարմաց հարուստ է նա, և իր հարստութիւնը իմ հայրնեմ ճոյքներս գոհ ընելու համար կ'գործածէ : կը խնդրեմ հաւատարմութիւնը որ իր սիրոյն համապատասխանելու համար ձեռքէս եկածը կ'ընեմ, իմ սէրս ալ իրենին կը հաւասարի : այնպէս որ զիս իբրև ամենապերայտ ու արհամարելի կ'ինք պիտի նկատէի եթէ միտքէս անգամ անցունէի անոր պատուին ամենափոքր արատ բերող բան մը ընել : Ուստի գիտցած ըլլաք, տէր հայր, որ ինձ՝ տնօրէնութիւն երիտասարդ մը, անշուշտ զիս ուրիշ կ'տու մը տեղ առնելով՝ անանկ ետեւէս ինկած է՝ որ ուր երթամ գիմացս կեղնէ, դուռը ելլեմ, պատուհանը երևամ կամ փողոցը գտնուիմ, յանկարծ առջևս կը տնկուի, շատ հաւանական է որ հիմա ալ ետեւէս եկած ըլլայ, զարծիր է կը ճանչնաք, բարձրահասակ աղւորկեկ, միշտ լաւ հագուած երիտասարդ մ'է ու աղէկ բնամտիքէ կ'ելլայ, կարծեմ թէ երբեմն ալ ձեզի հետ տեսած եմ : Որովհետեւ երիտասարդի մը կողմէ այսպիսի բնթացք մը



պատուաւոր կնիկի մը կրնայ անունը արատել և վայրահաշու թեան տեղի տալ, նախ միտք բերել երբարցո ըսել որ անոր հետ խօսին, բայց յետոյ մտածեցի որ անոնք ալ երիտասարդ ըլլալուն՝ այս տեսակ յանձնարարութիւն մը պաղարկելով չեն կատարեր, ո՞վ դիտէ, կարելի է ծեծկուրն ալ և գործք աւելի մեծնայ, անոր համար լաւագոյն համարեցի ձեզի գիմել ապահով ըլլալով դուք պէտք եղած խրատները կամ յանդիմանութիւնները կ'տաք իրեն ու կը յորդորէք որ զիս հանդարտ ձգէ, թո՛ղ ուրիշ կիներու գիմէ, անառակ կնիկ շատ փառք սատանային, առատութիւնը կայ, ես, փառք Աստուծոյ, անանկ միտքեր չունիմ, իմ էրկանս ունեցած պարտաւորութիւնս լաւ կը ճանչնամ: Այս խօսքերը բրած ատեն, տիկինը գլուխը կախեց իբր թէ իր արցունքները պահելու համար:

Խոստովանահայրը տիկնոջ բրած նկարագրութենէն հասկցաւ որ խնդիրը իր բարեկամին վրայ էր: Իր ծուխին պատուաւոր ու առաքինի սկզբունքները գովեց զանոնք անկեղծ համարելով՝ և խոստացաւ խնդիրքը կատարել, ու ողորմեսցին չբսած՝ յորդորեց զհարուստ տիկինը ողորմասիրութիւնը ձեռքէ չձգել, մանաւանդ վանքին գանձային անձուկ վիճակը յիշեցուց: Ծուխ տիկինը այս մասին քահանան գոհ բնելէ ետքը՝ նորէն խնդրեց որ իր յանձնարարութիւնը չմոռնայ. — Եթէ անիկա ուրանայ, բսաւ, հասկըցուր անոր որ նոյն իսկ իզմէ լսած էք այս գանդատները, որպէս զի գիտնայ թէ իր այս ընթացքէն որչափ վշտացած եմ:

Քանի մ'որ ետքը երիտասարդը իր սովորութեան համեմատ քահանան տեսնելու դնաց, որ այլ և այլ բաներու վրայ խօսելէն ետքը՝ զինքը մէկ կողմ քաշելով յանդիմանեց այն ազնիւ ու գեղանի կնոջ նկատմամբ բրածներուն վրայ: Երիտասարդը, որ այս տիկինը չէր ճանչնար անգամ՝ և տեսած ըլլալը չէր յիշեր, բնականաբար պատասխանեց թէ ինչ ըսել ուղերը չէր հասկնար: Բայց միամիտ խոստովանահայրը առանց աւելի երկար բացատրութեան ժամանակ ձգելու,

— Պարապ տեղ զարմանալ ու չհասկնալ մի ձեւա-

ցըներ, բսաւ անոր, ես գործին եղելութիւնը գիտեմ, չէ թէ անձանօթներէ կամ դրացիներէ լսելով, այլ նոյն իսկ տիկինէն որ իմ ծուխ է: Աս տեսակ խենթութիւններ ոչ միայն անվայել են քեզի, այլ և անարգիւն ու անպատու: պէտք ես գիտնալ որ այդ կինք առաքինութեան ու պատուոյ անձնաւորութիւնն է, ուստի կը խնդրեմ որ հանդիստ ձգես զան գէթ քու և իր պատուոյն համար: Երիտասարդը դարձեալ ինքզինքը պաշտպանեց ըսելով որ նա ուրիշ մը իրեն նմանցունելով սխալած էր:

— Ինչ որ ըսես պարապ է, կ'ըսեմ քեզի, պատասխանեց խոստովանահայրը, ան քեզի համար բսաւ և իրօք դուն ես ատ բաները ընողք, ես հասկցայ, ապուշի տեղ մի դներ զիս:

Նորատի ազնուականը, որ խոստովանահայրէն շատ ճարպիկ էր, հասկըցաւ որ գործին ներքե ուրիշ բան կը դառնայ ու այս անհիմն յանդիմանութեան տակ խորհուրդ մը կայ: Սակայն ամչնալ ձեւացնելով՝ խոստացաւ այնուհետե գանդատի տեղի չտալ: Քահանայէն բաժնուելով, տիկնոջ տան առջևէն անցաւ: Տիկինը իր սիրածը տեսածին պէս անպատու մուրախութեամբ լեցուեցաւ, երիտասարդը, որ անոր երեսը կը նայեր՝ տեսնելով որ սէրն ու ուրախութիւնը անոր գէմքին վրայ նկարուած են, բրած ենթադրութեան ճշմարտութեանը վրայ համոզուեցաւ և այն օրէն սկսելով նոյն փողոցէն շարունակ կ'անցնէր ու կը դառնար ի մեծ գոհականութիւն տիկնոջ՝ որ իր նայուածքով ու ձևերով զինքը կը քաջալերէր:

Տիկինն ալ ոչ նուազ սրամիտ ըլլալով՝ շատ չզնաց տեսաւ որ երիտասարդն ալ զինքը կը սիրէր. բայց անոր սէրը աւելի ևս սաստկացնելու համար վերստին խոստովանահորը գիմեց ու իր խոստովանութիւնը սկսաւ լալով: Տէր հայրը սիրտը շարժած հարցուց իրեն թէ ինչ էր իր վշտանալուն պատճառը:

— Բարէ, Տէր հայր, ձեր բարեկամին, ատ անիծեալ մարդուն վրայօք նոր գանդատներ ունիմ ընելու: Յիրաւի անիկա զիս ամնջելու համար ծնած է, անդա-



դար զիս կը հալածէ և այնպիսի դործերու մղել կ'ուզէ՝ որ յաւիտենապէս սրտիս խաղաղութիւնը պիտի կորսնցընեն:

— Ի՞նչ, տակաւին անի ձեր տան բոլորտիքը կ'ըջնի:  
— Ա, յո՛, այո՛, վրայ բերաւ արտասուելով կեղծ բարեպաշտուհին, կարծես թէ՛ ձեր բրած յանդիմանութեանց հակառակ, իզմէ իր վրէժը առնելու համար անդար կ'անցնի ու կ'դառնայ առաջուանէ աւելի տէպ, բայց աւելի գէշն այն է որ մինակ անցնելով ու նախելով գոհ չըլլար, այլ և կնիկի մը հետ քսակ մը ու գօտի մը զրկելու լրբութիւն ունեցած է, իբր թէ այս բաներէն զուրկ եմ. այս աներեսութենէն այնքան բարկացայ, որ եթէ Աստուծոյ չվախնայի չգիտեմ ի՞նչպիտի բնէի, դեռ մէկու մը բան մը չքսի բաց ՚ի ձեզմէն: Նախ և առաջ քսակը ու գօտին բարեխօսին թողուցի խնդրելով որ զանոնք տիրոջը վերադարձնէ, բայց ետքէն առի վախնալով որ այդ գէշ կնիկը իրեն համար վար կը դնէ՝ բսելով նոյն երիտասարդին թէ ընդունել էի զանոնք. ուստի ետ առի և կը բերեմ ձեզ, ահաւասիկ են առէք, կ'աղաչեմ որ իրեն տաք ու բռնէք թէ ոչ զինքը տեսնել կ'ուզեմ և ոչ բնծաներք: Եթէ այսպէս զիս հալածելը շարունակէ նա՛ գիտցած ըլլայ որ ամուսնույս ու եղբարցս իմաց պիտի տամ. ալ համբերութիւնս հատաւ, աւելի աղէկ է որ ան ծեծ ուտէ քան թէ իմ անուսնիս արատ գայ: Խնդրեմ, դուք բռնէք, տէր հայր, միթէ իրաւունք չունիմ այսքան զայրանալու:

— Ձեր զայրոյթը զիս չզարմացընէր բնաւ, տիկին, պատասխանեց միամիտ կրօնաւորը քսակն ու գօտին առնելով, ձեր առաքինութեան նշանն է այն: Անցեալ օր ես այդ երիտասարդին պէտք եղածը խօսեցայ, ու ան ալ ինձ խօստացաւ իր անցուդարձը դադրեցընել, բայց որովհետեւ իմ յանդիմանութեանցս հակառակ իր գիտցածը կ'ընէ և ձեզ բնծաներ ալ զրկելու յանդուութիւն կ'ունենայ, կը խօստանամ ձեզ անանկ մը լուալ զանի, որ մէյ մ'ալ ձեզ գանգատելու տեղի չը տայ. եթէ զիս մտիկ կ'ընէք, այս անգամ ալ բան մը

մի յայտնէք ձեր ընտանիքին, վասն զի կրնայ գէշ հետեանքներ ունենալ: Իսկ ձեր պատիւի մասին մի վախնաք, վասն զի ես ձեր առաքինութեան համար վկայ եմ Աստուծոյ և մարդոց առջև:

Տիկինը այս խօսքերու վրայ ինքզինքը մխիթարուած ձեացուց, խօսքին կարգը փոխեց և խոստովանահօր ու անոր պաշտօնակցաց արծաթասիրութիւնը գիտնալով՝ ստակ տարու պատրուակ մը գտաւ, ու քսաւ անոր,

— Անցեալ գիշեր երազս տեսայ, շատ մ'ազգականներս՝ և ՚ի մէջ այլոց տղորմած հոգի մայրս ու անոնց դէմքին արամութենէն գուշակեցի որ տակաւին կը տառապէին քաւարանին մէջ. միտք ունիմ անոնց հոգուն քանի մը պատարագ ընել տալ ձեզի, խնդրեմ ուրեմն սրբոյն Գրիգորի քառասուն պատարագը բնէք անոնց հոգւոյն փրկութեան համար, որպէս զի Աստուած զանոնք քաւարանի բոցերէն փրկէ: Ասոնք բսելով տիկինը հանեց ուրիշ քսակ մ'ալ տէրտէրին տուաւ որ իբրև շնորհակալութիւն պահպանիլ մը բսելով քովէն ճամբեց զանի:

Տիկինը երթալուն պէս՝ խեղճ տէրտէրը չտեսնելով որ . . . խաղու առարկայ եղեր էր, երիտասարդը կանչել տուաւ: Մեր պարոնը տէրտէրին բարկացած դէմքէն գուշակեց որ իր սիրուհիէն լուր պիտի առնէ. նախ և առաջ առանց բնգմիջելու մտիկ բրաւ զանի գործին էութիւնը հասկնալու համար . . . մինչդեռ խոստովանահայրը՝ նախատինք ու յանդիմանութիւն չէր մնար որ անոր գլխուն չթափէ պողալով՝

— Միթէ երեսդ մեռն քսուած չէ՞, ամչնալ չես գիտեր որ կը համարձակիս բնծաներ զրկելու այն բարեպաշտ տիկնոջ, զորս կը մերժէ առաքինաբար:

— Ի՞նչ, ե՛ս անոր բնծայներ զրկեր եմ, հարցուց երիտասարդը աւելի շատ բան հասկընալու աշխատելով:

— Ա, յո՛, դո՛ւն, և պարապ տեղ մի ուրանար, վասն զի նոյն իսկ ինքք՝ զանոնք ինձի բերաւ որ քեզի վերադարձնեմ, իբր զքեզ. . . ահա ասոնք են, ճանչցար:

— Ալ բսելիք չունիմ, պատասխանեց աներգուկ երիտասարդը ինքզինքը բոլորովին շլմորած ցուցնելով,



այս անգամ պատուոյս վրայ խօսք կու տամ զինքը հանդարտ թողուլ՝ քանի որ այնքան վայրենի ու անողորօք է։ Ան ատեն խոստովանահայրը արհամարանքով մը հանեց քսակն ու գօտին անոր սուռա կրկին կրկին յորդորելով որ իր խոստումը բռնէ։

Երիտասարդը այնքան աւելի հաճութեամբ ընդունեց ընծայները, որքան գօտիին վրայ գրուած էր սիրէ զիս որքան որ ես կը սիրեմ զքեզ, ու անմիջապէս գնաց անանկ տեղ մը կեցաւ ուրիշ կարելի էր տեսնել գեղանի տիկինը։ Այս ալ չափազանց գոհ էր իր սատանութեան առջև երթալը տեսնելով և Աստուծոյ կ'ինդեր միայն որ իր ամուսինը անգամ մը ճամբորդութիւն ընէ։

Շատ չգնաց իրօք այս ճամբորդութիւնը տեղի ունեցաւ, ատուեցործ պարոնը իր առուտուրին պատճառով ձէնուվա գնաց։ Երթալուն պէս իր կ'ինքը դարձեալ գնաց խոստովանահայրը գտաւ, ու շատ մը սուտ արցունք թափելէ ետքը՝

— Ախ, տէր հայր, բտաւ, ալ ճարս հատաւ, դիմանալիքս չմնաց, եկայ ձեզի իմաց տալու որ ինչ բլլայ բլլայ, եղբարցս իմաց պիտի տամ, գիտնաք որ ձեր բարեկամը մարմին առած սատանայ մ'է, մտքերնէդ չանցնիր թէ այս գիշեր քիչ մնաց որ դիտուս ինչփորձանքներ պիտի բերէր. չգիտեմ թէ ո՞րիկէ լսեր է որ էրիկս ձէնուվա գնաց, և ինչ ընէ աղէկ, կ'երնէ պարտեղնիս կը մտնէ, ծառ մը կը մագրցէ որ սենեկիս դիմացը կը բարձրանայ ու պատուհանս բանալու յանդգնութիւն կ'ունենայ. տէր հայր, անկէ ներս մտնելու վրայ էր երբ հանած աղմուկէն արթնցայ, ձայները պիտի ձգէի զինքը գող կարծելով, սակայն թշուառականը անունը տուաւ և լալագին աղաչեց Աստուծոյ սիրոյն որ ձայն չհանեմ որպէս զի խայտառակ չեղած կարող բլլայ խոյս տալու, ուստի ձեզ սիրելուս, տէր հայր, պատուհանը գոցելով գոհ եղայ, և ան ալ անշուշտ փախաւ, վասն զի այնուհետև ձայն ձուն չլսեցի. հիմա գուք բտէք, միթէ այսպիսի լրբութեանց կարելի է ներել, կը հաւատտեմ զձեզ որ այս անգամ աժան պիտի չպրծի ձեռքէս, մինչև հիմա շատ համբերեցի, մի-

այն ձեղ, որ իր բարեկամն էք՝ դժգոհութիւն չտալու համար. բայց անիկա այս ներողամտութենէն քաջալերուած կ'երեւայ. եթէ ձգէիք որ իմ առաջին դիտաւորութիւնս ՚ի գործ գնէի, այս բանը պիտի չընէր հիմա։

— Բայց, տիկին, պատասխանեց պատկառելի կրօնաւորը՝ բողբոլին շփոթած ու շարմացած. միթէ քաջ ապահով էք ոք անիկա էր, օւրիշ մէկը չբլլայ։

— Աչքովս տեսայ, մաս որ անիկա էր, տէր հայր, անունն ալ չտար, գարձեալ պիտի ճանչէի զինքը։

— Եո ալ կը խոստովանիմ որ ատիկա մեղապի յանդգնութիւն մ'է, զաւակս, շատ լաւ բրիր պատուհանը երեսին գոցելով, Աստուած քու առաքինութիւնդ ու պատիւդ ազատեր է, նոյն միջոցին արթնցնելով զքեզ։ Բայց որովհետև երկու անգամ խօսք մտիկ բրիք, վերջին անգամ մ'ալ մտիկ բրէք, և թողուցէք որ հեղ մ'ալ խօսիմ իրեն՝ ձեր եղբայրները չլսած. ալ կը յուսամ յողթել իր սատանայական կրքին թէ ոչ անկէ ետքը թնչ կ'ուզէք բրէք։

— Էհ, լաւ, այս անգամ ալ մտիկ կ'ընեմ զձեզ, տէր հայր, իբրև վերջինը, այսուհետև պիտի չգամ ձեզի գանգատելու. . . և պէտք եղած տեղը ուղղակի պիտի դիմեմ. գիտցած բլլաք։ Այս խօսքերը բսելով տիկինը բարկացածի պէս գուրս ելաւ։

Հագիւ թէ մեկնած էր երբ սիրահարը վանքը մտաւ իր սիրուհւոյն վրայ նոր լուրեր առնելու փափաքով։ Քահանայն զինքը տեսածին պէս, օձիքէն բռնեց ու նախատինք նախատինքի վրայ դիտուն տեղալէն՝ զան անպատիւ, խաբբայ ու աներես կոչելէն ետև՝ քիչ մնաց որ հողաթափովք ծեծէր։ Երիտասարդը եռանդուն խոստովանահօր յանդիմանութեանց սովորած բլլալուն՝ կը թողուր որ շարունակէ խօսքը, իրմէն կ'սոյլ բսածները հասկընալու համար. բայց տեսնելով որ որոշ բան մը չէր իմանար բսածներէն,

— Ի՞նչ բրի, տէր հայր, բտաւ, որ այդքան զայրացեր էք ինձի դէմ, անանկ մէկ կը խօսիք որ կարծէք թէ զՔրիստոս խաչը հանողներէն մէկն եմ։

— Այո՛, թշուառական, այդ քու անպարկեշտ փա-



փառնե՞րովդ ամեն օր կը խաչես զանի . . . բայց ան-  
զգամ ատ ինչ պաղարիւնութիւն է, երեսդ նայողը կը  
կարծէ որ ձիւնի պէս մաքուր և ազաւնիի պէս անմեղ  
ես. բրած յանցանքդ անգամ մոռցեր ես վրանտարի-  
ներ անցածի պէս. դժոխային մարդ, գիշերը այդ ան-  
մեղ և առաքինի կնոջ բրածդ չէս յիշեր. երէկ գի-  
շեր ո՛ւր էիր, բսէ նայիմ:

— Սենեակս, անկողնոյս մէջ:

— Անկողնոյդ մէջ մի, ձեռքէդ դար ուրիշի անկո-  
կողին պիտի մտնէիր, լիրը անզգամ: Միթէ դուն չէիր  
որ անուեգործին բացակայութիւնը իմանալով՝ կարծե-  
ցիր որ այդ տիկինը թեւերը բացած զքեզ պիտի ըն-  
դունի և պարտէզը մտնելով ծառին վրայ ելար նոյն  
առաքինի կնոջ սենեակը թափանցելու համար: Միթէ  
խենթեցեր ես, աղբար, ու կը համարիս թէ այդ սուրբ  
անձը քու հալածումներէդ ձանձրացած՝ պիտի հաւանի  
ներս առնելու զքեզ: Գիտցած բլլաս որ զղուանք պատ-  
ճառած ես անոր և՛ հաւատտի եղիր, որ աշխարհիս  
մէջ բան մը չկայ որ քեզմէ աւելի ատէ. կ'ուզես որ  
բունի սիրէ զքեզ, քանի քանի անգամ քեզի բսի որ ալ  
եա կենաս այդ յիմար տափանքէդ: Մինչև հիմա չը  
թողուցի որ իր եղբարցը խօսի նա, որոնք անվրէպ ծե-  
ծին տակը պիտի սպաննէին զքեզ. բայց դու որովհե-  
տե խօսք մտիկ չես ըներ և ականջդ իմ խրատներուս  
կը գոցես, ալ պատուիրեցի իրեն որ իր եղբարցը իմաց  
տայ, սուրբ Գրոց բսածին պէս, որ ոջ լուիցէ ուն-  
կամբ լուիցէ Թիկամբ. դու դարձեալ գիտցածդ բրէ:  
Աս գործին մէջ ես ալ տիկնոջ կողմէ պիտի վկայեմ,  
գիտնաս:

Միրահար պարոնը տիկնոջ գիտաւորութիւնները քաջ  
իմանալով՝ ձեռքէն եկածին չափ խոստովանահայրը  
հանդարտեցուց:

— Ալ համազուեցայ որ, բսաւ, բրածս խենթութիւն  
էր, բայց վերջինն է այն և ալ այսուհետե գանգատ  
չես ըներ տիկնոջ կողմանէ, աս ժամէս սկսելով՝ ինքզինքս  
անոր առաքինութենէն յաղթուած կը համարիմ և  
սուրբ խաչին վրայ կ'երդնում որ ես ալ առաքինու-

թեան ճամբուն մէջ պիտի մտնեմ ձեր յորդորները ինձ  
ուղեցոյց ունենալով:

Երիտասարդը իրօք քահանային յորդորները իրեն  
ուղեցոյց բունեց և յաջորդ գիշերը պարտէզը մտնելով՝  
ծառին վրայ ելաւ ու պատուհանէն սենեակը թափան-  
ցեց. տիկինը՝ որ չէր քնանար, բազկատարած ընդունե-  
ցաւ զանի, և այս իրարու համար ստեղծուած անձինք  
իրենց սէրը լեզուով փոխադարձաբար յայանելէ ետք՝  
գործով ալ հաստատեցին: Մանաւանդ շատ խնդացին  
թէ միամիտ կրօնաւորին վրայ՝ որ իրենց լաւ գործիք  
մ'եղած էր՝ և թէ ասուեգործ պարոնին վրայ որ ա-  
ռանց իր ծագումը յիշելու՝ ուզած էր բարձր դասէ կ'ին  
մ'ունենալ, ու իրարմէ բաժնուեցան ապագային զիրար  
յաճախ տեսնելու կանոնաւոր յառակադիծ մը շինելէ  
ետքը:

ՎՈՒՍԱՆՈՑԻՆ ՊԱՐՏԻԶՊԱՆԸ

Մեր երկրին մէջ կուսանոց մը կար որ ժամանակա-  
շատ հռչակաւոր էր: Ասկէ 30—40 տարի առաջ ութը  
կոյս և մէկ արբասուհի կային անոր մէջ, որոնք ազուր  
ու մեծկակ պարտէզ մը՝ ու բարի պարտիզպան մ'ալ  
ունէին: Օր մը այս պարտիզպանը մեկնեցաւ անկէ՝  
պատրուակելով որ տուած ամսականին քել էր, ուս-  
տի նախ գնաց տնտեսը տեսաւ, հաշիւները մաքրեց  
ու իր գիւղը վերադարձաւ: Հոն հասնելուն՝ իր բոլոր  
դրացիները զինքը տեսնելու գացին, 'ի մէջ այլոց Մա-  
դէդ անունով անեղուկ երիտասարդ մը, որ բաւական  
չնորհքով էր և հարցուց անոր թէ այնքան ատեն որո՞ւ  
7



քով կեցեր էր: Նութօ պարտիզպանը՝ պատասխանեց որ կոյսերու քով պաշտօն վարած էր:

—Պաշտօնդ ի՞նչ էր, հարցուց Մազէդ:

—Աղուոր ու մեծ պարտէզ մը մշակել, մօտակայ անտառէ մը փայտ կտրել ու բերել, շուր կրել և այս տեսակ բաներ: Բայց այս տիկիները՝ անանկ փոքրիկ ամառական մը կու տային՝ որ հազիւ կրնայի հինցուցած կօշիկներս նորոգել: Գէշը ան էր որ ամենքն ալ երկտասարդ և ստանայի պէս կրակոտ ու խենթուկ ըլլալուն՝ ըրածէս երբէք գոհ չէին ըլլար. ամեն մէկը ուրիշ հրաման մը կու տար. սրվի սա տեղ դիր, կըսէր մէկը, չէ, անդին դիր, կըսէր միւսը, երրորդ մ'ալ բրիչը ձեռքէս կ'առնուր՝ ատ ըրածդ աղէկ չէ բսելով՝ վերջապէս զիս այնչափ կը բարկացնէին որ սրանեղութենէս գործս կը ձգէի դուրս կ'երէի, մինչև որ ամսականէս գփգոհ՝ կրենցմէ ձանձրացած, թողուցի ելայ: Տնտեսը խօսք առաւ իզմէ որ տեղս ուրիշմը դըրկեմ, բայց այնպիսի ամուլ պաշտօն մ'է այս՝ որ մէկն ալ պիտի չըրկեմ:

Նութօի սա խօսքերը Մազէդի սրտին մէջ այս կոյսերուն քով ծառայութեան մտնելու փափաք մ'արթնցուցին: Իր նպատակը ստակ շահիլ չէր, ուրիշ ակնկալութիւններ ունէր նա: Սակայն բան մը յայտնի չըրաւ, Նութօի պատասխանեց որ վանքէն ելթալով աղէկ ըրած էր —Կնիկներու հետ գլուխ ելլալը դժուար է, բսաւ, աւելի դիւրին է ստանաներու հետ ապրիլքան թէ կոյսերու. շատ անգամ ատոնք ի՞նչ ուզելին ալ չեն գիտեր:

Բայց Նութօի քովէն հեռանալուն պէս՝ Մազէդ բսկաւ իր դիտարութիւնը ՚ի գործ դնելու միջոցներուն վրայ խորհիլ, գործէ չէր փախնար, վասն զի ուժեղ կազմուածք մ'ունէր, ամառականի սակաութիւնն ալ հոգը չէր, մինակ կը վախնար որ երկտասարդութեանը պատճառաւ վանքին մէջ շքեղութիւնը, բայց ասոր ալ գարման մը մտածեց ու յաջողեցաւ:

—Կուսանոցին մէջ և ոչ մին կը ճանչնայ զիս, բսաւ ինքնիրեն, մունջ ձեանալու աշխատինք. անշուշտ

կընդունուիմ հոն՝ եթէ յաջողիմ իմ դերս աղէկ խաղալու: Ուստի թի ու բրիչ մը ուսը զարնելով՝ դէպ ՚ի կուսանոց ճամբայ ելաւ: Բակին մէջ մտնելով՝ անտեսին կը հանդիպի, որմէ մունջի նշաններով Աստուծոյ սիրուն ուտելիք կը խնդրէ, միանգամայն հասկցնելով րուն ուտելիք կը խնդրէ, փանդամայն հասկցնելով անոր որ եթէ զինքը փայտ կտրելու կամ ուրիշ գործի մը դնէր, պատրաստ էր կատարելու: Տնտեսը յօժարութեամբ ուտելիք տուաւ անոր, յետոյ իր յաջողակութիւնը փորձելու համար՝ ծառի քանի մը կոծղեր ցուցուց որպէս զի զանոնք կացինովը ջարդէ: Մազէդ մէկ վայրկենի մէջ ճեղքեց զանոնք և անտեսը իր ճարակութեանը և ուժին վրայ զարմանալով՝ առաւ զինքը անտառը տարաւ փայտ կտրելու, նշաններով ալ հասկցուց որ հետք բերած է ին վրայ դնելով վանքը բերէ զանոնք: Մազէդ սա հրամանները ճշդիւ կատարեց:

Տնտեսը անոր արթնութենէն գոհ՝ քանի մ'որ վարդաւ զանի, այս միջոցին արբասուհին ալ զան տեսնելով հարցուց թէ ո՞վ էր նա:

—Աղքատ մարդուն մէկն է, պատասխանեց անտեսը, որ անցեալ օր ողորմութիւն ու գործ խնդրելու եկաւ, ես ալ քանի մը բաներ ընել տուի զորս լաւ կատարեց: Կարծեմ՝ աղէկ կ'ընէք զան իրբև պարտիզպան վար դնելով՝ եթէ հերկել ու մշակել գիտէ: Ամէն բանի կու գայ, առողջ և ուժեղ է. ուրիշ աղէկութիւն մ'ալ ունի, այն է մունջ ըլլալը՝ որով կոյսերուն հետ չկրնար խօսիլ:

—Լաւ մտածեր ես, պատասխանեց արբասուհին, նայէ, թէ որ երկիր գործել գիտէ, աշխատէ զանի վար դնելու, նախ զչոյզ մը հին ոտքի աման՝ ու վերարկու մը տուր որ հագնի և կրցած իդ շափ անուշ բոնէ զինքը:

Մազէդ՝ որ անկէ հեռու չէր գտնուեր ու բակը աւել կը ձեւացնէր՝ այս խօսակցութիւնը ամբողջապէս կը լէր և ուրախութենէն թռելով ինքնին կըսէր. «Եթէ զիս վար դնէք, տիկիներ, ձեր պարտէզը անանկ լաւ կը մշակեմ որ երբէք այնպէս լաւ մշակուած չէ»:

Տնտեսը արբասուհին խօսքերուն վրայ, Մազէդը առնելով պարտէզը տարաւ ու անոր աշխատանքէն շատ



գոհ ըլլալով՝ հարցուց թէ իբրև պարտիզպան վանքը մնալ կ'ուզէր. Մազէդ նշաններով պատասխանեց թէ ուղածնին բնելու պատրաստ էր: Տնտեսն խսկոյն անոր բնելիք գործերը ցուցուց ու զան պարտիզին մէջ ձգելով գնաց:

Նոր պարտիզպանին գալուստը ամեն կոյսերը շուտ մ'իմացան, շարունակ անոր աշխատած տեղը կ'երթանք զինքը տեսնելու, ու հետը հազար տեսակ կատակներ բնելու, ինչպէս որ սովորաբար մունջերուն հետ կ'ընենք: Անորմէն չէին քաշուեր՝ կաթնով թէ խուլ է: Աբբասուհին ալ ամենևին հոգ չէր քներ՝ երևակայելով թէ նա լեզուէ զուրկ ըլլալով . . . առնութենէ ալ զուրկ է, վասն զի Մազէդ վարպետութիւնով ինքզինքը կատարեալ աւանակ մը կը ձևացընէր բոլոր հաւատուհիներու քովը, սպասելով որ լաւ առիթ մը ձեռք ձգէ իր առնութիւնը մէկ քանիներու փորձով ցուցընելու համար: Այս առիթը ինքնին ներկայացաւ: Օր մը՝ երբ շատ աշխատելէ ետքը՝ մարգագետնի մը վրայ երկնցած էր հանգչելու համար, շրջագայութեան ելած երկու կոյսեր իր առջևէն անցած միջոցին՝ կանգ առին իրեն նայելու, պարտիզպանը զանոնք տեսաւ, բայց ննջել ձևացուց: Երկու թռչնիկները աչքով կը չափէին զինքը: — Եթէ ապահով ըլլամ որ գաղտնապահ ես, բնաւ երկուքէն համարձակը, քեզ կը հաղորդեմ խորհուրդ մը՝ որ շատ անգամ մտքիս մէջ ծնած է, և որ մէ գու ալ ինձի պէս օգուտ կը քաղեմ անվրէպ:

— Անհոգ եղիր գաղտնապահ ըլլալուս, պատասխանեց միւսը, ու խօսէ:

— Զգիտեմ, կրկնեց ան ատեն առաջինը, թէ երբէք խորհած ես այն հակաբնական ընթացքին վրայ որու գատապարտուած ենք մենք, բնութեան ամենէն յայտնի օրինաց հակառակ՝ ինքզինքնիս էրիկ մարդերէ հեռու պահելով. ոչ միայն անոնց հետ յարաբերութիւն չունինք, այլ և երեսնին անգամ չենք տեսներ, ի բաց առնելով մեր ծերուկ տնտեսը ու աս խուլ ու մունջ պարտիզպանը: Շատ աշխարհական կիներէ կը լսեմ որ ամուսնական՝ կամ ընտանեկան կեանքէ եր-

ջանիկը չկայ աշխարհիս վրայ, և թէ՛ մեր այս բնական պետքէն զրկուելէն է որ մեր առողջութիւնը կը կորսնցընենք շատ անգամ: Կ'երևայ թէ էրիկ ու կնիկ մարդու յարաբերութիւնները երկրի ամենէ անուշ վայելքն է, քանի՛ անգամ մաքէս անցած է՝ առ ՚ի չգոյ՛ յէ լաւագոյնի՛ ատոր համբ առնել զոնէ այս ապուշ պարտիզպանէն, վասն զի խուլ ու մունջ ըլլալով նա՛ աս գործին ամենէ յարմար անձն է. եթէ չուզէ անգամ, կամ զմեզ մատնելու միտք բնէ, մէկուն չկրնար խօսիլ. միւս կողմէն ալ տգեղ չէ, ու զմեզ երկուք նիս ալ գոհ բնելու չափ ուժեղ կ'երևայ. ինչ կ'ըսես, արդեօք փորձենք անգամ մը:

— Տէր Աստուած, ինչ կ'ըսես, քոյր իմ, պոռաց միւս հաւատուհին: Կը մտնան որ կուսութեան ուխտ ըրած ենք:

— Զեմ մոռնար. բայց մարդիկ միջիծնաւոր ուխտեր կ'ընեն ու մէկը չեն գործադրեր. ասկէ զատ մենք ուխտ ըրած ատեն անկեղծօրէն կը հաւատայինք որ զայն պիտի չդրժենք . . . բայց կը տեսնեմ որ սխալեր ենք այդ ուխտը ցկեանս բնելով, և զքանի որ յայտնի կերպով զայն չենք իրաւոր քրժել գոնէ գատնի . . . :

— Իրաւունք ունիք, քոյր իմ, հարկաւ եթէ յղի մնանք: — Դուն ալ շատ բարակը կը մտածես, ու ամեն բան սև կը տեսնես, վրայ բերաւ առաջինը:

Թէև իր բնկերը աս պատասխանէն գոհ չեղաւ, բայց որովհետև ինքն ալ արդէն կուսութեան դժուար հետեանքը տեսնելու վրայ էր և արգիլեալ պտուղին հատեանքը տեսնելու վրայ էր և արգիլեալ պտուղին հատեանքը տեսնելու վրայ էր. բաւականացաւ հարցընելով թէ մը ճաշակել կ'ուզէր. բաւականացաւ հարցընելով թէ զոնէ անտես մնալու համար ինչ պէտք էր բնել:

— Ատի հոգդ մի քներ, կրկնեց առաջինը, հիմա կէսօր է, ապահով եմ թէ մեր ամեն քոյրերը մուշկէսօր կը քնանան, բայց ասելի ապահով ըլլալու համուշ կը քնանան, բայց ասելի ապահով ըլլալու համար, հեզ մը պարտէզը դիտենք ու նայինք թէ մարդ կայ. ետքը աս մարդուն ձեռքէն բռնելով՝ սա խցիկը կը տանինք որ անձրևին դէմ՝ իրեն ապաստանարանն է՝ ու մինչդեռ դուն անոր հետ ներս կը մտնես, ես դուռը կեցած կ'սպասեմ:



Մաղէդ այս հաճելի խօսակցութիւնը լսելով՝ բերնին ջուրերը կը վազէր, ձեռքէն դարձ ուղղակի խցիկը պիտի վազէր, բայց որոք ձեռքէ չիտխցընելու համար սպասեց որ դան իր ձեռքէն բռնեն:

Երկու կոյսերը ապահով բլլալէ ետքը որ պարտեղին մէջ մարդ մը չկար, դացին սատանորդի պարտիզպանին քով. առաջարկութիւնը ընող կոյսը իրեն մօտենալով արթնցուց, ձեռքէն բռնեց, ու դգուելով խցիկը տարաւ:

Մաղէդին ապուշ դէմքը աչքի առջև բերէք:

Հոն՝ շուտիկը առանց երկար դժուարութիւն ցուցընելու՝ կոյսին ցանկութիւնը յագեցուց բաւական ճարպիկութեամբ, ու առանց իր ասուն կենդանի մ'ըլլալը յայտնելու: Առաջին կոյսին յաջորդեց երկրորդը: Մաղէդ այս նոր անձին ալ իր դերը լաւ խաղաց, և որովհետեւ աւանակի մը դիմացը մարդս ամչկոտ չըլլար՝ երկու կոյսերն ալ մեր Մաղէդին առնութիւնը լաւ մը փորձեցին: Այս վայրկեանէն սկսելով ալ իրենց խօսակցութիւնները շարունակ վանական կեանքի միօրինակութեան ու կուսական կեանքի անհամութեան վրայ կը դառնար: Ալ ձեռք կը թողում մտածել թէ որքան ստէպ պարտիզպանին խցիկը այցելութիւն կ'ընէին . . . մեր խուլ ու մունջին հետ սորված նոր լեզունին խօսելու համար:

Սակայն վերջապէս օր մը իրենց բնկերուհիներէ մէկը՝ իր պատահանէն պարտիզպանին հետ ունեցած բնտանութիւններն ու անոր հետ խցիկը երթանին տեսնենելով՝ նոյնը դիտել տուաւ ուրիշ երկու կոյսերու ալ, ու երեքը մէկ՝ նախ որոշեցին արբասուհիին իմաց տալ, բայց յետոյ մտքերնին փոխեցին: Երկու ուխտագրութ կոյսերուն հետ խօսք մէկ բնելով՝ իրենք ալ անոնց պէս սկսան Մաղէդին բարձր շնորհները վայելել:

Վանքին մէջ մինակ երկու կոյս մնացեր էր հարսնիքին մասնակից չեղող, բայց կամաց կամաց անոնք ալ խուլ ու մունջին հօտը մեծցուցին: Մաղէդ ճշմարիտ աքաղաղ մը դարձեր էր:

Տիկին արբասուհիին անցածը դարձածը չէր դիտեր

ամենեւին, իր ձագուկները ամենքն ալ համաձայն գբտնուելուն՝ իրենց պարտիզպանին հետ ունեցած յարաբերութիւնը՝ շատ դիւրաւ իրմէ գաղտնի կը մնար: Տաք օր մը երբ պարտեղին մէջ կը պաքտէր սա, տեսաւ որ Մաղէդ՝ թզենիի մը տակ անուշ անուշ կը քնանար յոգնած, իր պալատի սուլթաններէն ոմանք ֆիզիքական պատճառաւ մը չէին երևցեր, ու քիչ մ'առաջ ալ միւսներուն ամենօրեայ ուստիկը վճառած էր նա: Միայն շապիկ մը հագած էր Մաղէդ՝ զոր հովք երբեմն երբեմն վերցընելով՝ գրեթէ զան նոյնահագեալ փիճակին մէջ կը ներկայացընէր: Այս տեսարանին վրայ մեծ մարտիտը ինքն ալ կին բլլալը յիշելով՝ ամեն կողմ նայելէն վերջը Մաղէդը արթնցուց ու առաւ իր սենեակը տարաւ:

Ալ հասկցաք . . .

Գէշը ան է որ՝ մարապետը գործը մենավաճառութիւն կուղէր գարձընել ի ֆուաս միւսներուն, բայց որովհետեւ Մաղէդ կը հարկադրուէր մաքսանենգութիւն ալ ընել . . . կարողութիւնը սկսաւ չբաւել, այնպէս որ գործը սկսաւ դեշի երթալ, ուստի գիշեր մը ճարը հատնելով՝ յանկարծ «Տիկին, ըսաւ մարապետին, երանի թէ արաղաղ բլլայի այս վանքին ինքը հաւերը գոհ ընելու համար, վասն զի ալ դիմանայիքս չմնաց, ինդրեմ իմ գործիս կարգ կանոն դիր, կամ զիս ճամբէ ազատիմ: Արբասուհին քիչ մնաց որ զարմանքէն մարի,

— Ադ ի՞նչ կը նշանակէ, տղայ, ըսաւ, դու համը չէիր:

— Այո՛ համը էի, պատասխանեց Մաղէդ, բայց չէ թէ ի ճննդենէ, այլ հիւանդութեան մը հետեւանքովը, սոյն ժամուս՝ լեզուս բացուեցաւ, Սրբոյն կիպրիանոսի հրաշքովը: Արբասուհին հաւտաց՝ կամ հաւտալ կեղծեալով՝ հարցուց թէ ինքը հաւեր բնելով ի՞նչ իմացընել կուզէր: Մաղէդ՝ եղելութիւնը պատմեց անոր, առակովն հաւատուհիին կուսական հիմադրութեան հակաբնական բան մը բլլալու դէմ բրած բողոքէն սկսելով՝ մինչև այն օրը: Մարապետը տեսնելով որ միւսներն ալ բմէ աւելի զգտտա չէին և թէ անշուշտ իր յարաբե-



բութիւնն ալ պիտի իմանային անոնք, զամենքն ալ սրահը կանչեց ու միաբանութեամբ որոշեցին, դրացիներու հաւտացընել թէ իրենց աղօթքովը Սուրբն Կիպրիանոս մունջին լեզուն բացեր էր: Յետոյ իրենց տնտեսն ալ մեռած բլլալով անոր պաշտօնը Մազէդին յանձնեցին:

Մազէդ երկար տարիներ հոն ապրեցաւ, երջանիկ ու հարուստ մեկնեցաւ այն վանքէն, ո՛ւր աղքատ մտեր էր, լիօրէն վարձատրուեցաւ վանքին պարտեզը խղճի մտօք հերկելուն ու մշակելուն համար:



ԿՕԾԻ ԿՆԻԿԻ ԽԱՐԻԱԽ ՏԱՐՓԱԾՈՒ

Ժամանակաւ Միլանի մէջ գերմանացի զօրական մը կար Կիւլֆար անուն, բաւական պատուաւոր և իր տիրոջը խիստ հաւատարիմ: Եթէ տեղէ մը փոխառութիւն ընէր՝ ժամանակին ճշտիւ իր պարտքը վճարելուն՝ բաւական վարկ ստացեր էր և հարկ եղած ատենն ալ իրեն փոխ ստակ տուողներ չէին պակսեր: Քիչ ատենէն մեր քաջ զօրականը Գասպարիկ անունով հարուստ վաճառականի մը՝ որ զինքը շատ կը սիրէր, Ամբրոսին անունով ամենեղեղեցիկ կնկան սիրահարեցաւ, բայց եր սէրը ճարպիկութեամբ կարող եղաւ ծածկել թէ նոյն կնկան ամուսինն և թէ ուրիշ մարդերէ: Դիտելով որ տիկինն ալ իր սիրոյն կ'համապատասխանէր՝ փութաց բարեխօսի մը միջոցաւ զայն աղաչել որ իրեն ներշնչած սիրոյն շնորհները վայելէ, խոստանալով անոնց արժանի գումուիլ և անոր հաճելի եղած որ և է բանը կատարել: Տիկինը շատ մը դժուարութիւններ ցոյց տալէ ետք

հաւանութիւն տուաւ, այն պայմանաւ որ այս գաղաւթիքը ուրիշ չյայտնէ և երկու հարիւր լուիճ բերէ:

Կիւլֆար Ամբրոսինի սոյն աստ՝ սրկութիւնը հասկնալով չափէ դուրս նեղացաւ անոր ազահութեան վրայ զոր մտքէն անգամ անցուցած չէր, վասն զի կ'ըսէր թէ քանի որ այնպի ի հարուստ վաճառականի մը տիկինն էր նա՝ ի հարկէ իրեն պէտք եղած ստակը կրնար ունենալ, և լաւ համազօրելով որ անոր սէրը մի միայն ցած ազահութենէ ու ծակաչքութենէ գոյացած է, միտքը դրաւ անոր արժանաւոր պատիժը տալ: Ուստի լուր զրկեց թէ պատրաստ էր իր խնդրածը կատարել և թէ կը փափաքէր աւելի հարուստ բլլալ աւելի մեծ գումար մը իրեն պարգևելու համար, խնդրեց նաև որ՝ հետք տեսնուելու և այն գումարը վճարելու որ մը որոշէ: Այս արհամարելի տիկինը պատասխան զրկեց անոր որ իր էրիկը քիչ ատենէն ժէն պիտի երթայ, և նոյն իսկ անոր մեկնած օրը մարդ պիտի զրկէ զինքը կանչելու:

Կիւլֆար տեղեակ բլլալով որ Գասպարիկ այս ճամբորդութիւնը քանի մը օրէն պիտի ընէ, փութաց երթալ անոր քով:

— Երկու հարիւր լուիճի պէտք ունիմ, ըսաւ, և զիս շնորհապարտ պիտի ընէք եթէ հաճիք սոյն գումարը ինձի փոխ տալ, ձեր սովորական տոկոսով: Գասպարիկ հաճութեամբ անոր խնդիրքը կատարեց անմիջապէս ստակը համրելով:

Քանի մ'օրէն ետքը վաճառականը դէպի ժէն մեկնեցաւ ու իր կինը շուտով մէկը զրկեց սիրոյն կանչելու ապագրելով որ խնդրած գումարը հետք բերէ: Կիւլֆար՝ որ տիկինին սիրոյ շնորհները վայելելու հաճութիւնը պիտի ունենար՝ փախնալով որ նոյն միջոցին նա առանձին բլլայ՝ իր բարեկամներէն մին հետք առաւ և անոր ներկայութեան ըսաւ.

— Ահաւասիկ, տիկին, ձեզ երկու հարիւր լուիճ կը վճարեմ խնդրելով որ ձեր ամուսնոյն վերագարձին իրեն յանձնէք: Տիկինը սոյն գումարը առաւ առանց Կիւլֆարի խորամանկութիւնը բժարնելու, կարծելով թէ



Նա պարզապէս քաղաքագիտօրէն այնպէս կ'ըսէ որ ներկայ եղողը չհասկընայ թէ նոյն գումարը զօրականին կրմէ վայելելիք սիրոյ հաճոյքներուն դինն է:

—Պարոն, ապահով եղիք, պատասխանեց Ամբրոսին, որ ամուսնոյս վերադարձին անվրէպ իրեն կը յանձնեմ զայն, բայց նայինք գումարը ճիշտ է, և սկսաւ սեղանին վրայ համրել: Տեսնելով որ դրամ մ'անգամ պակաս չէր՝ զանոնք տոպրակի մը մէջ դրաւ և կիւլֆարի մօտենալով կամաց մ'ըսաւ թէ իրիկուան դէմ իր քովը գայ, վասն զի նոյն միջոցին բարբոսին առանձին կըլլար: Որոշեալ ժամադրութեան ներկայ դանուեցաւ մեր զօրականը և գիշերը տիկինին հետ անցուց... Միայն նոյն գիշերովալ գոհ չեղաւ նա. հապա կնիկէն խօսք առաւ որ անոր էրկան բացակայութեան միջոցին յոճակս այցելէ ու իր խաղը խաղայ . . . . :

Երբ Ամբրոսինի էրիկը փէնէն վերադարձաւ, զօրականը՝ իր մեղ արդէն ծանօթ բարեկամը հետք առնելով դնաց Գասպարիկին դալուստը շնորհաւորելու և շատ մը քաղաքավարական խօսակցութիւններէ ետքը բաւ անոր,

—Ձեզմէ փոխ առած երկու հարիւր լուիճիխ պէտքք ուրիշ միջոցաւ լեցընելով՝ ձեր մեկնած օրը զանոնք վերադարձուցի ձեր տիկնոջը և կը խնդրեմ որ ձեր տետրակին մէջէն ջնջէք պարտքս:

Գասպարիկ իր կնոջ երեսը նայեցաւ հարցընելու համար թէ իրօք կիւլֆարը վճարած էր նոյն գումարը: Կինը տեսնելով որ նոյն իսկ վկան ալ ներկայ է և չըկրնար ուրանալ իր անյիշողութեան վրայ դարմանակեղծեց և մինչև այն ատեն իր էրկան բան մը չբսելուն համար անորմէ ներում խնդրեց:

—Հանգիստ եղիք, պատասխանեց անմիջապէս Գասպարիկ զօրականին, որ այսօր իսկ իմ տետրակէս կը ջնջեմ ձեր պարտքը:

Ան ատեն մեր հանած վարած տարփածուն մեկնեցաւ անկէ իր սիրուհւոյն ազահութիւնը այսպէս պատժելուն և երկայն ատեն ճարպիկութեամբ անոր սիրոյ շնորհները վայելելուն վրայ գոհ՝ միանգամայն առանց ստակ

մ'անգամ անոր տալու: Իիւրին է երևակայել որ այս արկածը մեծ դաս մ'եղաւ ծակաչք ու ազահ Սմբրոսինին, և անկէ ետև առաքինի կ'իւր մ'եղաւ նա:



ԱՊՐԱՅ ՓԵՍԷՆ

Սալէրնօ քաղաքին մէջ հոչակաւոր վիրաբոյժ մը կար Պարոն Մօնթան անունով. որ թէև բաւական ծերունի՝ բայց դեռահաս ու գեղեցիկ աղջիկ մը առած էր կնութեան: Խեղճ մարդը ձեռքէն եկածը կընէր կնոջը հաճելի ըլլալու համար, ամէն օր մատնիներ, գոհարեղէններ և նոր հագուստներ շինել կու տար՝ և ինչ որ կնոջ մը ունայնասիրութիւնը կը գգուէ կընէր, բայց կ'երևայ թէ ուրիշ կերպով գոհ չէր կրնար բնել զանի . . . ճիշդ մեր Ռիչար Գէնձիգային պէս որու վրայ արդէն խօսեցանք: Կինն ալ քիչ մը ստորին բնտանիքէ և բնութեամբ ալ կրակոտ ըլլալուն՝ իրեն տասարդ մը Ռօժէ անուն՝ որ քաղքին առաջին սրիկան տասարդ մը Ռօժէ անուն՝ որ քաղքին առաջին սրիկան կը համարուէր. տիկինը ասոնք գիտէր, բայց որովհետև իր մանկութենէն անոր հետ յարաբերութիւն ունեցեր էր արդէն, զայն նորէն շարունակել ուզեց առանց առ ողուն վրայ հասարակութեան բաժնեք հոգը ընելու: Այս մտքով զանի տեսնելու առիթներ վընտաւ և ճամբան անոր հանգիպածին պէս՝ կը նայէր կը խնդար: Ռօժէ ասոնք դիտելով՝ համարձակութիւն առաւ ու բարեխօս մը զրկելով՝ գործին վրայ ապահովուեցաւ ու քիչ ատենէն ժամադրութիւն մ'ունենալնալով նոյն բարեխօսին միջոցաւ որ տան սպասուհին էր՝



տիկնոջ հետ տեսնուելու պատիւը ունեցաւ : Երկու եւրեւասարգները այս տեսակցութեան մէջ զիրար իրենց կարողութեան չափ դո՛հ բնելէ ետքը, տիկինը աղաչեց Ռոժէն որ ալ իր անուակութիւններէնետ քաշուի՝ խուստանալով որ պէտք եղած ատեն իրեն ստակ ալ տալու պատրաստ էր, միայն թէ խելքը գլուխը ժողվէ : Եւ իրօք Ռոժէ հաւրբտուելով երկուսի-րահարներ ստեպ զիւար կը տեսնէին առանց բան մը յայտնի ընելու :

Մինչդեռ գործը այսպէս կ'շարունակուէր անձայն, տիկնոջ էրիկը առիթ ունեցաւ հիւանդ մը տեսնելու ուրու մէկ ոտքը բոլորովին փտած էր : Նա իր արհեստին մէջ շատ վարպետ ըլլալուն՝ նախ և յառաջ հիւանդութեան պատճառը գտաւ և հիւանդին ծնողացը խնայ տուաւ որ եթէ փտած ոսկորը չհանէ քիչ ատենէն պէտք պիտի ըլլայ ոտքը բոլորովին կարել, առանց որոյ հիւանդը քիչ ատենէն պիտի մեռնի : Հիւանդին ծնողքը հաւանեցան որ վիրաբոյժը յարմար դատածը ընէ : Ուստի վիրաբոյժը վախնալով որ հիւանդը վիրահատութեան ցաւին չդիմանար՝ միտքը դրաւ զան քնացնել այնպիսի թմրեցուցիչ շուրով մը զոր ինք միայն պատրաստել գիտէր :

Այս քնարեր շուրը իր տունը պատրաստեց նա և բաւական քանակութեամբ սրուակի մը մէջ լեցնելով՝ իր սենեկին պատուհանին մէջը դրաւ առանց ինչ ըլլալը մարդու մ'ըսելու :

Կէսօրէն ետքը՝ այն կէտին որ վիրաբոյժը հիւանդին երթալու կը պատրաստուէր այս բնակիչքով վիրահատութիւնը ընելու համար, յանկարծ մօտ գիւղէ մը յատուկ սուրահանդակով զրկուած նամակ մը ստացաւ որով իրեն ծանօթ խիստ հարուստ մարդ մը դարմանելու կ'կանչուէր, հետեւաբար վերոյիշեալ հիւանդին վիրահատութիւնը երկրորդ օրուան ձգելու հարկադրուելով՝ ձի հեծաւ և իսկոյն գիւղը գնաց երկրորդ օրը վերադառնալու մտքով :

Իր նորատի ու կրակոտ կողակիցը՝ ամուսնոյն բացակայութիւնը իմացածին պէս, անմիջպէս Ռոժէն կան-

չել տալով զան իր սենեկին մէջ փակեց մինչև տան մարդիկներուն քնանալը սպասցընելու : Ռոժէ՝ ալ չգիտեմ՝ ցորեկը շատ աշխատած՝ կամ աղի ձուկ և այլն կերած ըլլալուն համար, սոսկալի ծարաւ մը կ'զգար և սենեկին պատուհանին մէջ՝ վիրաբոյժին սրուակով ձգած շուրէն ուրիշ չգտնելով՝ զայն մինչև յետինը կաթիլ խըմեց, առանց անոր քիչ մը անտխորժ համին ուշադրութիւն ընելու : Ետ աղաց քնատու դեպք իր ներքոյ թուրթիւն ըրաւ ու պարոն Ռոժէ Նոյ նահապետին քունը մտաւ արկղի մը վրայ :

Տան տիկինը ազատ եղածին պէս սենեակը եկաւ և զանի այս վիճակին մէջ գտնելով՝ սկսաւ ցնցել որպէս զի արթննայ, բայց Պ. Ռոժէ աս ամենուն բան մը պատասխանելու կարող վիճակի մէջ չէր : Տիկինը սկսաւ զան աւելի ուժով ցնցել :

— Ելիր ալ, կ'օգտէ, քնոտ մարդ, եթէ քուն ունէիր ինչո՞ւ եկար :

Այս զօրաւոր ցնցումէն Ռոժէ քնացած անուակին վրայէն վար ինկաւ առանց արթննալու : Տիկինը այս անզգայութեան վրայ զարմանալով՝ սկսաւ անոր քիթը սեղմել ու պեխերէն քաշել բոլոր ոժովը : Բայց Ռոժէ ապրելու նշան մը չէր տար ան աստիճանի որ՝ կինը սկսաւ զան մեռած կարծել անոր մատերը ճրագին լոյսկաւ զան մեռած կարծել և տեսնելով որ՝ ձեռքը չէր քաշեր նա, սին մօտեցուց և տեսնելով որ՝ ձեռքը չէր քաշեր նա, իր ունեցած տարակոյսին մէջ հաստատուեցաւ : Ալ աւելի լորդ է նկարագրել իր յուսահատութիւնը : Կրցածին չափ անձայն կերպով կու լար, կ'ողբար նա առանց աղմուկ հանելու՝ վախնալով որ եթէ գործը յայտնուի իր ցաւին վրայ պիտի աւելնային ամօթն ու խայտառակութիւնը : անոր համար սկսաւ իր պատիւը ազատելու միջոցներուն վրայ խորհիլ :

Գնաց իր հաւատարիմ սպասուհին գտաւ, գլուխը եկած փորձանքը պատմեց անոր ու խորհուրդ հարցուց : Սպասուհին բոլորովին ապշած՝ չկրնալով հաւտալ որ Ռոժէ իրօք մեռած էր, ինքն ալ գնաց զան ցնցեց հոմիտեց ամեն կերպով՝ և մեռած ըլլալուն համոզուելով՝ բաւ որ լաւագոյն միջոցը գիտէր տունէն դուրս



հաներն էր: — Ի՞նչպէս ընենք, պատասխանեց տան  
տիկինը, որ հոս մեռած բլալը չհասկցուի, վասն զի ե-  
թէ դիակը մեք դրան առջև գտնեն, անշուշտ պիտի  
կասկածին:

— Աս բան մը չէ, տիկին, առջի իրիկուան դէմ  
աս դրացի ատաղձագործին խանութին առջև սնտուկ  
մը տեսայ որ դուրս մնացեր էր, եթէ դեռ հոն է գոր-  
ծերնուս լաւ կը յարմարի, վասն զի կրնանք Ռօժէն մէ-  
ջը դնել. և անոր քանի մը դանակի հարուածներ ալ  
տալով այնպէս կարծեցնել թէ սպաննուած է նա, վասն-  
զի ամեն մարդ գիտէ որ շատ թշնամի ունէր. ասան-  
կով ձեր համբատն ալ չարատիր:

— Սպասուհիին խորհուրդը մէկ մտտամբ ընդունուե-  
լով՝ Ռօժէի մարմինը սնտուկին մէջ գրուեցաւ առանց  
դանակի հարուածներուն ու ատաղձագործին խանու-  
թին առջև ձգուեցաւ փողոցին մէջ:

Նոյն օրերը երկու վաշխառու երիտասարդներ եկեր  
իրենց բնակութիւնը հաստատեր էին նոյն փողոցը ա-  
տաղձագործին խանութէն քանի մը տուն անդին, ա-  
տնք շատ կարասի չունենալուն՝ միտք քրած էին այս  
սնտուկը գողնալ ու իրենց տունը տանիլ նոյն գիշերը:  
Ուստի կէս գիշեր մօտ՝ իրենց տունէն ելնելով զայն ա-  
ռին տարին առանց անոր ծանրութեան ուշագրութիւն  
ընելու ու իրենց կիներու պառկած սենեակը դրին՝ և  
գացին տեղերնին պառկեցան մաքրելու հոգը միւս օ-  
րուան ձգելով:

Արդ՝ Ռօժէ իր խնամ ըմպելին մարսելէն ու քունը  
առնելէն ետքը՝ արթնցաւ. աչքերը բացաւ ու բան մը  
չտեսնելով՝ չորս դին շոյափեց ու զգալով որ սնտուկի  
մը մէջ կը գտնուի չգիտէ թէ դեռ քուն է թէ ար-  
թուն. — Ո՛ր եմ, աս ի՞նչ է կըսէր ինքնիրեն, շատ  
լաւ կը յիշեմ որ երէկ սիրականիս տունն էի ու սնտու-  
կի մը վրայ քնացայ, բայց հիմա ինչպէս կ'ըլլայ որ ա-  
նոր մէջն եմ: Արդեօք բան մը պատահեցաւ, վերա-  
բոյժը ետ դարձաւ ու կինը զիս հոս պահեց:» Այսպէս  
մտածելով հանգարտ կեցաւ ու ականջ դնելով մտիկ ը-  
րաւ. գէշը ան է սակայն որ հանգիստ չէր, սնտուկը

պզտիկ ու նեղ բլալուն ու նա երկար աստն միենոյն  
դիրքով մնալուն՝ մէկ կողմը սաստիկ կըցաւէր. անոր հա-  
մար միւս կողմին վրայ դառնալ փորձեց. բայց ճիշդ  
այս դառնալու միջոցին իր մէկ կողմով անանկ ուժով  
գիմացաւ սնտուկին մէկ անկեան՝ որ սնտուկը տախտա-  
կամածին վրայ ինկաւ: Աս աղմուկէն հոն մօտիկ ան-  
կողնոյն մէջ քնացող տիկինները արթնցան, բայց վա-  
խերնէն չհամարձակեցան բառ մ'արտաբերել: Ռօժէ՝ որ  
սնտուկին ինչալու աստն անոր բացուիլը զգացեր էր՝  
լաւագոյն համարելով ազատ՝ քան թէ սնտուկին մէջ  
գոցուած մնալ, այս նեղ բանտէն մեղմիկ մը դուրս ե-  
լաւ ու գտնուած տեղը չգիտնալով՝ հոն հոս քնաց առ-  
խարխափ՝ դուռ մը դանելու ու դուրս սարդելու հա-  
մար: Կիները մարդու մը ոտնաձայնը լսելով՝ երկչոտ  
ձայնով մը «Ո՛վ է ան, ո՞վ է ան» կը պոռան: Ռօժէ  
անոնց ձայնը չճանչնալով կը կծկաի ու պատասխան չը  
տար: Ան աստն անոնք ալ մէկ ձայնի էքիկինին կը կան-  
չեն ու անկողիննէն ցատկելով՝ պատուհանը կը վազեն  
«գող կայ» պոռալով: Մինչդեռ դրացիք՝ ոմանք դունէն  
ոմանք պատուհանէն ներս կը մտնեն, ու Ռօժէն կը  
ձերբակալեն:

Ռօժէ՝ այսպէս յանկարծ օտարի մը տուն գտնուե-  
լուն վրայ բոլորովին շփոթած՝ խօսք մը չբեր՝ և կը  
թողու որ ձեռքերը կապելով ոստիկանութեան յանձ-  
նեն զինք, և որովհետեւ արդէն գէշ անուն ունեցող  
մէկն էր՝ կը կարծուի թէ՛ այն վաշխառուներու տունը  
մտած էր նա զանոնք կողոպտելու համար որով նոյն ա-  
տենի օրինաց համեմատ կախուելու կը գատապար-  
տուի նա:

Այս լուրը երբ իր սիրուհիին ու անոր ազականոյն ա-  
կանջը հասաւ՝ անոնք կարծեցին թէ նախընթաց գիշե-  
րուան գէպքը երազ մ'էր, բայց և այնպէս՝ տիկինը  
իր սիրահարին վտանգաւոր վիճակը տեսնելով՝ այնքան  
սրտադողի մէջ ընկաւ որ խելքը գլխէն գնաց: Խեղճը  
նոյն իսկ իր կեանքը վտանգի դնելով կ'ուզէր Ռօժէն  
ազատել, բայց ճարը չկար:

Այս միջոցին վերաբոյժը վերագառնալով գեղէն՝ վի-



բահատութիւնը ընելու համար պատահանք կը վազէ իր ջուրը առնելու ու սրուակը պարսպ գտնելով՝ անանկ բարկութեան կ'ելլէ՝ որ ասան մարդիկ վախերնէն ծակէ ծակ կը մտնեն: Իր կինը, որու խելքը ինչպէս որ քսինք, ուրիշ տեղ էր, կը պատասխանէ իրեն թէ՛ անուշադրութեամբ թախուած սրուակ մը ջուր այսչափ մեծ փոթորիկ հանելու չէր արժեր: Վերաբոյժը կը պատասխանէ թէ մեծապէս կը սխալի զայն հասարակ ջուր մը կարծելով, թէ ընդհակառակն թմրեցուցիչ բաղադրութիւն մ'էր հիւանդի մը յատկացեալ: Ան ասեն իր կինը հասկընալով որ անշուշտ Ռօթէ խմած էր զայն.

—Ատ չէի գիտեր, քուս, բայց ատ ալ անգարմանն ի չարիք մը չէ. կրնաս նորէն ջուր մը պատրաստել:

Իրաց այս վիճակին մէջ՝ աղախինք որ իր տիրուհոյն հրամանաւ դուրս ելած էր Ռօթէի դատին վրայ ստոյգ տեղեկութիւններ առնելու, վերադարձաւ ու խնայուց որ սողուն բանք բուրդ էր, թէ իր ամեն բարեկամները զինքը երեսէ ձգեր էին. և ոչ մէկ ազգականը զանի ազատելու փորձ կ'ընէր, և թէ կառավարչին հրամանաւ սխալ կախուէր նա. —Ճամբան, յաւելցուց, ատաղձագործի մը պատահեցայ որ ինձ անծանօթ անձի մը հետ տաք վիճաբանութեան մը բռնուած էր այն անտուկին համար, որու մէջ Ռօթէն գրինք: Ատաղձագործը կը պնդէր թէ զայն իր խանութի առջևէն գողցեր էին, միւսն ալ կը պնդէր թէ ատաղձագործը ծախած էր այդ անտուկը երկու վաշխառուններու որոնց տունը գտնուէր էր անտուկը Ռօթէի ձերբակալուած միջոցին: —Եթէ վաշխառունները կ'ըսեն թէ այդ անտուկը ծախու առած են՝ երկուքն ալ գող ու խաբեբայ են, պատասխանեց ատաղձագործը, վասն զի զայն այս գիշեր գողցեր են խանութի առջևէն ուր մտցած էի. ուստի կամ հիմա անտուկիս ստակը կու տան ինձ, կամ թէ ոչ կառավարութեան կը դիմեմ: — Ասոր վրայ ելան երկուքն ալ վաշխառուններուն գացին, ես ալ հոս եկայ: Այս վիճաբանութենէն սա կը հասկնամ, տիկին, որ մենք Ռօթէն անտուկին մէջ գնելէն ետքը՝ ատ վաշ-

խառունները եկած՝ անտուկը գողցած ու տարած են այն տունը՝ ուր Ռօթէն բռնուեցար, բայց մեռած Ռօթէին ինչպէս յարութիւն առնելը չեմ կրնար հասկընալ:

Այն ատեն տիկինը եղբուրթիւնը շատ լաւ հասկընալով՝ իր աղախնոյն խնայուց. ինչ որ իր էրիկը քնաբեր բնազդիքին վրայ բսած էր իրեն և աղաչեց որ ձեռքէն եկածն ընէ ու Ռօթէն ազատէ, ասանց զինքը մատնելու:

—Դուք ինձ ճամբան ցուցցէք, պատասխանեց սպասուհին:

Տիկինը ճար մը մտածեց ու հաղորդեց սպասուհիին որ զայն իր քմայ շատ յարմար գտնելով՝ մտադիւր հաւանեցաւ ի գործ դնելու: Նախ ելաւ վերաբոյժին դընաց ու անոր օտքը իյնալով՝ բրած յանցանքին վրայ ներում խնդրեց: Խեղճ վերաբոյժը բանէ մը տեղեկութիւն չունենալուն՝ հարցուց թէ ինչ յանցանքի կ'ակնարկէր: —Ռօթէն կը ճանչնաք, պատասխանեց սպասուհին կէր: —Ռօթէն կը ճանչնաք, պատասխանեց սպասուհին շինճու արցունքներ թափելով: Ախ, տէր իմ, ատ աղան տարիէ մ'ի վեր զիս կը սիրէր և զիս ալ ստիպած էր զինքը քիչ մը սիրելու կամայ ակամայ: Երէկ լսելով որ գիւղը գացած էք ու գիշերը հոս պիտի մնաք, այնչափ աղերսեց ու խոստումներ քրաւ՝ որ հարկադրանքով աղերսեց զինքը ներս առնելու: Հազիւ թէ բուեցայ հաւանիլ զինքը ներս առնելու: Ես ալ վախնա եկած էր, երբ սաստիկ ծարաւեցաւ, ես ալ վախնալով որ տիկինս գործը չիմանայ՝ անմիջապէս ձեր պատահանին մէջ գտնուած սրուակով ջուրը առի իրեն տուհանին մէջ գտնուած սրուակը նորէն տեղը դրի. Յանտարի ու խմելէն վերջը սրուակը նորէն տեղը դրի. Յանցանքս կը խոստովանիմ, պարոն, և ներում կը խնայեմ զքեմ՝ ձեզմէ. կայ մարդ մ'որ իր կենաց մէջ մեղք բրած չըլլայ, ես ալ այս մեղքը գործեցի և շատ կը գողամ, չէ թէ միտակ ձեր ջուրին՝ այլ և անոր հետեւանքներուն համար, վասն զի խեղճ Ռօթէն իր կեանքը կորսնցնելու վրայ է: Ներեցէք ինձ ուրիմն, պարոն, որ երթամ անոր անմեղութիւնը պաշտպանեմ:

Թէպէտ վերաբոյժը շատ նեղացեր էր իր աղախնոյն դէմ, բայց դէպքին զուարճալի կողմը տեսնելով՝ չկրցաւ իր խնդուքը բռնել:



—Ահա Աստուած քու պատիժը տուեր է, պատաս-  
խանեց անոր հեղնական եղանակաւ մը, մինչդեռ կը  
կարծէիր որ այս գիշեր զուարթ ու գործունեայ տար-  
փածու մը պիտի ունենաս, քնտու ու թմրած մէկը ու-  
նեցար քովդ: Կը ներեմ որ երթաս զինքը ազատես ե-  
թէ կրնաս, բայց չեմ ներեր որ ուրիշ անգամ տանս  
մէջ ժամադիր բլլաս անոր հետ, թէ ոչ զքեզ անանկ  
մէկ կը թմրեցընեմ որ մէյ մ'ալ չես արթննար:


Այս յաջող սկզբնաւորութիւնը ազականոյն սիրտ տա-  
լով նա անմիջապէս Ռօժէի դտնուած բանտը զնաց ու  
բանտապահին հետ այնքան անուշ վարուեցաւ որ կըր-  
ցաւ բանտարկեալին հետ խօսիլ՝ և իր ընելիքին վրայ ա-  
նոր հաւանութիւնն առնել, յետոյ քաղաքին կառավարչին  
գիմեց, և զան համազեց թէ Ռօժէ չէ թէ գող՝ այլ  
թմրած տարփածու մ'էր: Վիրաբոյժին բրած պատմու-  
թիւնն անոր ալ բրաւ ու աւելցուց թէ այն թմրեցու-  
ցիչ ջրին ազդեցութիւնը այնքան սաստիկ եղած էր որ  
զայն մեռած համարելով տարեր ատաղձագործին սքն-  
տուկին մէջ գրեր էր. վերջապէս ատաղձագործին ու-  
րիշի մը հետ ունեցած խօսակցութիւնը մէջ բերաւ՝ հաս-  
տատելու համար թէ վաշխառու պարսնները նոյն սքն-  
տուկը հաւանականօրէն գողնալ ուզելով՝ անոր մէջ  
դտնուած Ռօժէն ալ իրենց տունը տարեր էին, և այնչ-

կառավարիչը այս պատմութենէն հետաքրքրութիւ-  
նը շարժած և եղելութիւնը ստուգել ուզելով՝ նախ  
վիրաբոյժը կանչել տուաւ հարցընելու համար թէ իրօք  
քնարեր շուրջ շինած էր: Վիրաբոյժը այս կէտը հաս-  
տատեց. ատաղձագործը և երկու վաշխառուներն ալ  
կանչուելով երկար հարցափորձէ մ'ետքը հաստատուե-  
ցաւ որ իրօք այս վերջինները անտուկը գողցեր էին.  
կառավարիչը ամենէ վերջը Ռօժէի ալ հարցուց թէ  
նախքնիժաց գիշեր ո՞ւր պառկած էր. — Չգիտեմ, պա-  
տասխանեց նա, գիտցածս ան է որ Պ. Մօնթան վիրա-  
բոյժին տունը գացեր էի անոր սպասուհիին հետ տես-  
նուելու որու տուած մէկ շուրջ խմելով քուն մտայ ու  
արթնցած ատենս ինքզինքս գտայ տան մը մէջ՝ ուր իբրև  
գող բռնուեցայ.

կառավարիչը այս գործը խիստ զուարճալի գտնե-  
լով ամենուն ալ իրենց գերերը կրկնել տուաւ և վաշ-  
խառուները տասնական ոսկիի տուգանքի դատապար-  
տելէ ետքը Ռօժէին դառնալով ըսաւ,

«Որովհետեւ յանցանքդ միայն այս սպասուհին գլխէ  
հանելդ է, կախուելու վճիռդ կը փոխեմ» զքեզ ամուս-  
նանալու դատապարտելով անոր հետ, վասն զի նա իր  
պատիւը ու համբաւը առ ոչինչ գրեց քու անմեղու-  
թիւնդ հաստատելով զքեզ ազատելու համար. ուստի  
այս նոր դատավճիռը քեզի իբրև երախտա գիտական  
դարտք համարելով՝ այսուհետեւ խելքդ գլուխդ երկի  
մը գարձիր ու զանի երջանիկ ընելու աշխատէ:

Ռօժէ որ իրօք իր կեանքը այս աղախնոյն վարպե-  
տութեան կը պարտաւորէր՝ այս որոշումը հաճութեամբ  
բնդունեցաւ ու կատարեց՝ կամայ ակամայ այս տիրասէր  
աղջկան փեսայ բլլալով:



ՅԱՆԴՈՒԳՆ ՉԻԱԳԱՆԸ

իր նախորդներու օրինակին հետևելով՝ Ակիւլիւֆ Լօմ-  
բարներու թագաւորը՝ Բափի քաղաքը իր տէրութեան  
մայրաքաղաք և բնակութեան տեղ որոշեց: Ասիկա իր  
նախորդին կնոջը հետ ամուսնացած էր, որ շատ յատ-  
կութիւններու հետ մեծ գեղեցկութիւն մ'ալ ունէր:  
Ակիւլիւֆ իր բարի վարքովն ու իմաստութեամբ Լօմ-  
բարտիայի գործերը բաւ կարգադրելէն վերջը՝ իր ախո-  
ւին ձիապաններէն մէկը թագուհիին սաստիկ սիրահա-  
րեցաւ. այս ձիապանը գեղեցկագէտ՝ ու գրեթէ թա-



դաւորին ձեռով մարդ մ'էր, թէև աննշան ընտանիքէ սահայն իր ծնունդը արգելք չէր եղած որ նա նրբամիտ ու ուշիմ մէկն ըլլայ, որով թէ գահին ու ակոռին մէջ դանուած անհուն հեռաւորութիւնը և թէ վտանգը կ'զգար որու մէջ պիտի գանուէր ինքը եթէ իր սէրը յայտնուէր: Անոր համար իր արիւիք մեծ ըզգուշութեամբ գաղանի կը պահէր ու հազիւ կը համարձակէր իր նայուածքը թագուհիին վրայ յառել վախճալով որ այն՝ իր զգացումները չյայտնէ: Թէև իր ցանկութիւնները յագեցընելու ակնկալութիւնը չունէր բայց և այնպէս իր ընտրութեանը վրայ հպարտ էր: Իր պաշտօնին վերաբերեալ ամեն պզտիկ ինամները կը տանէր թագուհիին նկատմամբ ու իր ընկերներէ աւելի ուշադիր էր կատարելու ինչ որ անոր հաճելի կը կարծէր: Թագուհին ալ կարծեա թէ ասոր մասնաւոր ինամքէն դո՛հ ըլլալով միշտ անոր դարմանած ձին կը հեծնէր ու այսպէսով վայրկենական հեշտութիւն մը կ'ընծայէր ձիապանին որ կարելի եղածին չափ ուշ ասպատանը ձեռքէն կը թողուր թագուհիին ստքը քիչ մ'աւելի բռնելու կամ անոր հագուստին քսուելու համար: Խեղճ ձիապանին միակ վայելքը ասոնք էին:

Սակայն կամայ կամաց՝ ձիապանը զգալով որ ձեռքը անկէ աւելի բան մը պիտի չանցնի՝ կրցածն ըրաւ որ իր սէրէն բժշկուի: Եկու տես որ երբեմն սէրը դժուարութիւններու և նոյն խոկ անկարելութեան առջև աւելի կը բորբոքի ու կը դրդուի, ձիապանինն ալ ասանկ եղաւ, այնպէս որ տեսնելով թէ իր սէրը չկրնար խեղդել՝ միաքք դրաւ նա ինքզինքը սպաննել, իր վիշտերուն վերջ տարու համար: Իայց ուզեց անանկ կերպով մը մեռնիլ որ հասկըցուի թէ թագուհիին համար զգացած սէրէն մղուելով մեռած է: Ուստի այս դիտաւորութիւնը ՚ի գործ չգրած իրեն պարտք համարեց իր ցանկութիւնը մասամբ մը կամ ամբողջապէս դո՛հ ընելու համար ամեն հնարին միջոցները փնտռել: — Դժուարին գործ —, Եթէ իր սէրը թագուհիին յայտնէր՝ իր կորուստին կը դիմէր, եթէ նամակ մը գրէր նմանապէս: Բարեբաղդաբար սէրը հնարագէտ է կամ

սիրահարը հնարագէտ կը դարձնէ. մեր ձիապանն ալ հնարք մը գտաւ թագուհիին հետ պառկելու, իր կեանքը զոհել աչքը առնելով զոր շատանց անոր նուիրած էր:

Ուստի յանդուգն յատակագիծ մը շինեց: Գիտնալով որ թագաւորը ամեն դիշեր թագուհիին հետ չէր պառկեր՝ միաքք դրաւ անգամ մը անոր տեղը բռնել: Կաւ յաջողելու համար նախ և յառաջ ուզեց անձամբ տեսնել թէ արքան ինչ հազուատով ու կերպով թագուհիին սենեակը կ'երթար, ուստի քանի մ'անգամ գիշերով պահուեցաւ պալատին մեծ սրահին մէջ՝ որ նորին Վեհափառութեանց սենեակները կը բաժնէր ու տեսաւ որ թագաւորը մեծ վերարկուի մէջ պլլուած՝ մէկ ձեռքը մտմ' մը՝ ու միւսը պզտիկ գաւազան մը՝ ուղղակի թագուհիին ննջարանը կը դիմէր, ու առանց բան զսկի թագուհիին ննջարանը կը զարնէր, որմէ մ'ըսելու դրան մէկ երկու անգամ կը զարնէր, որմէ ետքը՝ դուռը կը բացուէր անմիջապէս: Գիտեց որ թագուհիին նաժիշաներէն մէկը դուռը կը բանար ու ձեռքէն մտքը կ'առնէր: Ննջարանէն մինչև երեսն ալ սպասեց հոն, իր սենեակը վերադառնալու ժամը գիտնալու համար:

Ս. յապէս թագաւորին գիշերային խաղը սորվելով ալ ուրիշ բան չմտածեց՝ բայց եթէ ինքն ալ նոյն խաղը խաղալ, գրեթէ անոր վերարկուին յար և նման վերարկու մը ձեռք ձգեց, ու դիշեր մը լաւ մը լուացուէին և հոտաւեա ջուրեր քսուելէն ետքը՝ ձեռքը մտմ' մը և գաւազան մ'առած՝ գնաց մեծ սրահին մէջ պահուեցաւ, երբ հասկըցաւ որ ամեն մարդ քուն մտած էր՝ կարծեց թէ իր ցանկութիւնը դո՛հ ընելու կամ մեռնելու ժամն եկած է, ուստի մտքը վառեց, վերարկուին մէջը պլլուեցաւ ու գնաց մեղմիկ դուռը երկու հեղ զարկաւ:

Նաժիշտ մը կէս քուն կէս արթուն դուռը բանալով ձեռքէն մտքը առաւ ու վեհափառ ձիապանը ուղղուեցաւ դէպ ՚ի թագուհիին անկողինը: Թագուհին անուշ անուշ կը քնանար: Զիապանը ընտանեբար անոր քովը մտաւ ու անձայն զանի իր թևերուն մէջ առաւ:



Թագուհին բանէ մը չկատկածելով՝ կարծեց թէ իր է-  
րիկը նոյն գիշերը սրանեղութիւն մ'ունենալուն՝ հետք  
չէր խօսեր, վասն զի այնպիսի պարագայներու մէջ իրօք  
չէր խօսեր նա և չէր ուղեր նաև որ հետք խօսին: Այս  
բուժեան չնորհիւ ձիապանք թագաւորին բնելիքը բ-  
րաւ: Յետոյ թէև մեծ դժկամակութեամբ ու ակամայ՝  
ուրք ելաւ ու վերաբրիուն ու մոմք առնելով իր սենեա-  
կը քաշուեցաւ, վախնալով որ եթէ աւելի մնայ՝ իր  
վայելած հեշտութիւնը չարաչար կը տուժէ:

—Աս ի՞նչ բարեբաատութիւն է, կ'ըսէր ինքնիրեն,  
որ մէկը չտեսաւ ու չհասկըցաւ, ո՛չ նաժիշտը և ո՛չ իսկ  
թագուհին զիս չճանչցան. ան ի՞նչ վայելք էր, ի՞նչ  
գեղեցիկ կ'ին, ի՞նչ գեղեցիկ մորթ: Այս իմ անկողինս  
որքան կարծր ու անհաճոյ է համեմատաբար:

Հապիւ թէ ձիապանք թագուհին ննջարանէն մեկ-  
նած էր, երբ թագաւորը քունը փախցնելով և գոնէ  
իր տքնութենէն օգուտ քաղելու համար, իր կնոջը քով  
գնաց, որ այս նոր այցելութեան վրայ չափազանց զար-  
մացաւ, ու իր զարմանքը չկրնալով պահել,

—Ի՞նչ տարօրէնակ բան, տէր իմ, դեռ հիմա քու  
վէս ելաք և նոյն իսկ քիչ մ'ալ սովորականէն աւելի  
աշխատեցաք, ու դարձեալ կու գաք: Խնդրեմ, քիչ  
մը խնայեցէք ձեր աւողջութեան՝ որ ինձ ամեն բանէ  
ուելի թանկագին է:

Այս խօսքերը թագաւորին համար կայծակի հա-  
բուած մ'եղան, անմիջապէս հասկըցաւ որ իր կ'ինք խա-  
բուած էր, և թէ՛ իրմէ առաջ սատանորդիին մէկը ե-  
կեր՝ իր դերը խաղացեր էր, բայց որովհետև թագու-  
հին եզերութիւնը չէր հասկըցեր, ինչպէս նաև նաժիշ-  
տը՝ որ երկրորդ անգամ դուռը բանալու ատեն զար-  
մացեր էր, իբր խոհեմ մարդ՝ պատշաճ դատեց ար-  
գէն եկած ըլլալ կեղծել: Եթէ իր տեղը անխօսեմ մէ-  
կը ըլլար, կարելի է գործը յայտնէր, բայց թագաւո-  
րը՝ որ իմաստուն մարդ էր, մտածեց որ լաւագոյն էր  
թագուհին իր կարծիքին մէջ մէջ ձգել զանի չվտա-  
ջընելու համար, ու միայն վարպետութեամբ մ'ըսաւ  
անոր.

—Ի՞նչ, միթէ մէկ գիշերի մէջ ձեզ երկու անգամ  
այցելութիւն բնելու անկարող կը կարծէք զիս, տիկին:

—Չէ անշուշտ, պատասխանեց թագուհին, բայց ձեր  
աւողջութեան համար միայն աս դիտողութիւնը կ'ընեմ:

—Է՛հ, լաւ ուրեմն, պատասխանեց նորին Վեհա-  
փառութիւնը, ձեր յորդորը կ'ընդունիմ, ու այս ան-  
գամ լոկ ձեր տեսութիւնով դո՛հ եղած կ'երթամ:

Աս բտելով թագաւորը մեկնեցաւ ինքնիրմէ երած  
ու փրփրած, միտքը գնելով որ՝ իսկոյն յանցաւորը  
գտնէ, վասն զի ապահով էր թէ նա պաշտօնին մէջ  
գտնուողներէն մէկն ըլլալու էր և թէ զան բռնելու հա-  
մար իր ծառայութեան մէջ գտնուող մարդիկը աչքէ  
անցընել կը բաւէր. Անկարելի է, կ'ըսէր նա մտովի,  
որ ասանկ յանդգնութիւն մ'ընողը՝ դեռ բողբոլիկն յու-  
զուած չըլլայ. իր սիրտը չափէ դուրս պէտք է զարնէ  
միայն յիշելով այն վտանգը որ անցուց: Ուստի մամք  
ձեռքը առաւ ու իր ամեն սպասաւորներու սենեակնե-  
րը մէկիկ մէկիկ պտրտեցաւ, բայց ամենքն ալ հան-  
դարտ քունի մը մէջ գտաւ: Յոյսը կտրած՝ ալ իր սե-  
նեակը վերադառնալու վրայ էր՝ երբ յիշեց որ իր ձիա-  
պաններու սենեակը պտրտած չէր, հոն ալ գնաց:

Մեր ձիապանք նորին Վեհափառութեան ներս մտնե-  
լը տեսածին պէս՝ իրօք սիրտը սկսաւ օարստիելի ուժ-  
գնութեամբ զարնել: Լաւ գիտէր որ թագաւորը այս  
բանը նշմարածին պէս՝ զինքը իսկոյն իր արդարացի  
բարկութեանը պիտի զոհէր, սակայն տեսնելով որ նո-  
րին Վեհափառութիւնը վրան գէնք չունէր, միտքը դը-  
րաւ իր ճակատողրին սպասելով՝ քնանալ կեղծել:

Նորին Վեհափառութիւնը իր խուզարկութիւնը սրա-  
հին մէկ ծայրէն սկսելով՝ առաջին ձիապանները շատ  
հանդարտ ու անկողով գտաւ, բայց յանցաւորին ան-  
կողնին հասած ատենը անոր սիրտը սաստիկ յուզուած  
ու ձեռքին տակ արագ արագ զարնելը զգալով՝ «Իմ  
դերս խաղացող թշուառականը աս պիտի ըլլայ ան-  
շուշտ» ըսաւ ինքնիրեն. բայց որովհետև իր մտածած  
վրէժինդրութիւնը առանց արմուկի կատարել կուգէր,  
անոր մտղերուն մէկ կողմէն կտրելով դո՛հ եղաւ, որ



պէս զի երկրորդ օրն առտու զանի ճանչնայր դիւրին բլ-  
լայ : Այս գործողութենէն ետքը իր սենեակը քաշուե-  
ցաւ նա :

Չիապանը՝ որ այսքան դիւրաւ չէր կարծեր պրծիլ,  
հասկըցաւ որ թագաւորը դիտաւորութեամբ մը՝ և չէ  
թէ յիշատակ մ'ունենալու համար իր մազերը կտրեր  
էր ու ինքն ալ հնարագէտ մէկն բլլարուն՝ իսկոյն ե-  
լաւ ու ախտուէն մկրատ մը բերելով՝ կամաց մը իր բն-  
լըր ընկերներուն մազերը նոյն կողմէն ու նոյն երկայ-  
նութեամբ կտրեց ու մէկը չարթնցուցած իր տեղը պառ-  
կեցաւ :

Թագաւորը առտու արթնցածին պէս՝ հրամայեց որ  
պաշտօնին դռները չբացուած՝ բոլոր սպասաւորները ի-  
րեն ներկայանան. բայց օրքան զարմացաւ երբ տեսաւ  
որ ամեն ձիապաններուն մազերը միեւնոյն կողմէն կը-  
տրուած էին .

— Իէրն անիծած, բաւ ինքնիրեն, յանցաւորին  
կողմէն աս վարպետութիւնը մտքէս անցած չէր : Թշուա-  
ռականը թէեւ ստորին դասէ՝ բայց արթուն մէկն է, և  
կը խտտովանիմ որ թագուհին խարելէն ետք զիս ալ  
խարեց — : Աւ նկատելով որ առանց գործը երևան հա-  
նելու ալ անկարելի պիտի բլլար յանցաւորը երևան  
հանել, չուզեց իր պատիւը վրէժխնդրութեան զոհել և  
առանց միւսներուն բան մը հասկըցընելու՝ զան յանդի-  
մանելով դոհ եղաւ :

— Չեր մազերը կտրող սափրիչ ընկերնիք այս դաղտ-  
նիքը թող պահէ ու մէյ մ'ալ ուրիշին գերը չխաղայ,  
բաւ, եթէ չուզեր տանջանքներու մէջ իր կեանքը կտր-  
սընցընել — : Աս խօսքերը բերէն ետք հրամայեց որ ամ-  
մեն մէկը իր գործին երթայ :

Աւրիշ որ և է մէկը՝ կարելի է բոլոր ձիապանները  
չլթայէր կամ տանջէր յանցաւորը գանելու համար,  
բայց անով երևան պիտի հանէր ինչ որ պէտք էր  
գարունի պահել, անանկով անշուշտ իր վրէժը կը լու-  
ծէր՝ բայց իր կինը նուաստացընելով իր անդատութիւ-  
նը կ'աւելցընէր :

Ամեն ձիապանները զարմացան թագաւորին խօսքե-

րուն ու իրենց մազերուն կտրուելուն վրայ . միայն վար-  
պետորդին այս հանելուկը մեկնեց, առանց մէկուն բան  
մ'ըսելու, ու մէյ մ'ալ թագաւորին դերը չխաղայ :



ԽԱՐՈՒԱՎ ԽԱՐԵԱՆ

Այս օրուան պէս՝ հին ատենն ալ ծովեզերեայ քա-  
ղաքներուն մէջ սովորութիւն էր օտար երկիրէ եկած  
ապրանքները մաքս բաւած շտեմարան մը տանիլ ուր  
մտանաւոր գործակատարներ զանոնք իրենց տեսարակնե-  
րու մէջ նշանակելէ ու որոշ տուրքեր առնելէ ետքը՝  
կը թողուն որ վաճառականը զանոնք առնէ ու ուզած  
տեղը տանի : Միջնորդները՝ եկած ապրանքներուն գի-  
տեղը անի : Միջնորդները՝ անոնց գնորդներ  
կը փնտռէին պզտիկ վարձքով մը . այսպէս էր և է Բա-  
լէրմօի մէջ որ Միկիլիայի ամենէ վաճառաչահ քաղաքն  
է :

Այս քաղաքին կիները շատ հեշտասէր, չահամու ու  
անբարոյական ըլլալէ զատ՝ այնքան ալ վարպետ են որ  
զանոնք չճանչցողն աշխարհիս ամենէ առաքինի կիները  
կը կարծէ : Շատերը գեղեցիկ ու շորհքով են և կ'լա-  
նան մասնաւորապէս օտարներուն փակիլ, զորս իրենց  
քաղաքակիցներէն աւելի լաւ կը փնթանն :

Բալէրմօ նորեկ օտարական մը տեսածնուն պէս՝ իս-  
կոյն անունը ու վիճակը կը հարցընեն ու անոնց հարս-  
տութեան չափը աւելի աղէկ գիտնալու համար՝ մաք-  
սին գործակատարները կ'աղաչեն որ իրենց տեսարակնե-



ըբ ցոյց տան որովանոր ունեցած ապրանքներու արժէքը հասկընարով կ'աշխատին զանիկա որսալու: Այսպէսով անթիւ վաճառականներ կը սնանկացընեն, և ոմանք ալ իրենց հարստութենէ ետքը կեանքերնին իսկ կը կորսնցընեն:

Ասկէ քանի մը տարի յառաջ՝ Սալապէդ անուն նորատի Ֆլորանցի մը, իր վաճառականներու կողմէ այս քաղաքը զրկուեցաւ հոն բրդեղէններ ծախելու՝ որոնց արժէքը 300 սկուա էր: Սալապէդ՝ իր ապրանքները մաքսին յանձնելէն վերջը՝ քաղաքին մէջ հոն հոգուարճանալու ետեւէ եղաւ, առանց զանոնք ծախելու մեծապէս հոգ տանելու: Չմտնամ բսելու որ քնքն ալ շնորհքով տղայ մ'էր: Վերոյիշեալ կիներէն մէկը որ բերանաբաց օտարական մը կ'սպասէր, Սալապէդի դպրատար ու անոր դործերու վիճակը խմանալուն պէս՝ իսկոյն անոր ետեւէն ինկաւ, հաւաստի բլլալով որ զանի փետթելու համար մեծ գոյնութիւն մը պիտի չքաշէր. և իրօք շատ չանցաւ՝ այս տղային ուշադրութիւնը գրաւեց ու իր դերը այնքան լաւ խաղաց որ Ֆլորանցին զանի բարձրաստիճան տիկին մը կարծեց. և որովհետեւ նա իր գեղեցկութեան վրայ ալ մեծ համարում ունէր՝ հաւատաց որ այդ կինը իրեն սիրահարուած է ու միտքը գրաւ անոր ետեւէն իյնալ. անոր հետ բարեկամանալու միջոցներ փնտռեց ու անգագար դրան առջևէն անցնել գառնալով՝ հաճութեամբ տեսաւ որ Վարդենի տիկինն ալ իրեն մեծ համակրութիւն ցոյց կու տար:

Տիկին Վարդենի՝ Ֆլորանցին այսպէս բորբոքելէն ու անոր կլեցընելէն վերջը թէ ինքն ալ անոր համար սիրով վառուած էր, իր սպասուհիներուն մէկը գաղտնի անոր զրկեց. այս դեսպանուհին՝ որ այս արհեստին մէջ վարպետ էր, իր պաշտօնին մէջ յաջողելու համար պատշաճ եղանակով խօսեցաւ, ու գրեթէ արտասուալիւր աչքերով յաւելցուց թէ անոր գեղեցկութիւնը իր տիրուհոյն վրայ անանկ տպաւորութիւն բրած էր՝ որ վայրիկ մը հանգիստ չունէր նա, և թէ մտագիւր կը հաւանէր հետը գաղտնի տեսնուիլ եթէ կը հաճէր որոշեալ բաղանիք մը գտնուիլ. յետոյ գրգայնէն մատ-

նի մը հանելով անոր ընծայեց իբր իր տիրուհիին սիրոյն մէկ գրաւականք:

Սալապէդ ուրախութենէն կըթռէր. մատնին ձեռքը առաւ, մօտէն քննեց, զննեց, մալեզին պագաւ ու մատը դնելով դեսպանուհիին պատասխանեց թէ՝ Տիկին Վարդենի իրեն արդար հատուցում մը կ'ընէ, վասն զի ինքն ալ գիշեր ցորեկ անոր վրայ կը մտածէ ու խելքէ դուրս կը սիրէ զան՝ և պատրաստ է չէ թէ որևէ բաղնիք մը, այլ աշխարհիս ծայրը երթալ անոր հետ տեսնուելու՝ համար միայն թէ որոշեալ ժամը իրեն իմաց տրուի:

Տիկին Վարդենի երիտասարդին աս տրամագրութիւնները խմանալով անմիջապէս դեսպանուհին նորէն կը զրկէ իր որոշած բաղնիքը խմայքնելու և խնդրելու համար թէ երեկոյան ժամերգութենէն ետքը հոն գտնուի:

Որոշեալ ժամուն, Սալապէդ՝ որ իր արկածը մարդու մը չէր պատմած, բաղնիքը կ'երթայ ու հաճութեամբ կ'խմանայ թէ տիկին Վարդենին վարձած է զայն. քիչ մը ետքը երկու սպասուհիներ ալ հոն կու գան, որու մէկը կերպասեայ վերմակ մը՝ և միւսը ուտելիքներով լի սպէս մը կը բերէին: Սպասուհիները վերմակը անկողնին վրայ փռելէն ետքը՝ որու սաւանք ու բարձերը ոսկիէ ու մետաքսէ թելերով բանուած էին, բաղնիքին սրահը մտան ու զգարոն Սալապէդ մեծ խրնամքով լաւ մը լուացին:

Շատ չգնաց տիկին Վարդենին եկաւ, հետ ուրիշ երկու սպասուհիներ առած ու Սալապէդին հետ առանձին մնացածին պէս, անոր բիւր տեսակ գգուանքներ բրաւ: Երկու կողմէն ալ շատ մը ախտեր քաշուելէն ու համբոյրներու մեծ առուտուրէ մը վերջը՝

— Աշխարհիս վրայ քու սէրդ միայն կրնար զիս հոս բերել, բոաւ տիկին Վարդենի, չկրցայ քու գեղեցկութեանդ դիմանալ, անմանդ Սալապէդ, որտիս մէջ առանկ հրդեհ մը ձգեցիր, որ ամեն պարտաւորութիւն մտոցայ: Այս ոճով շատ մը շոքաբորբութիւններ բռնելէ յետոյ՝ երկու երիտասարդները հանուելով բաղնիքը մտան երկու սպասուհիներու օգնութեամբ:



Տիկինք ինքզինքը լուաց զանազան հոտերով շի-  
 նուած սապոնով մը՝ ու մարմինը սպասուհիներուն սքը-  
 բել տուաւ բարակ ու հոտաւետ սաւաններով, երիտա-  
 սարդն ալ նոյն ինամբով լուացուեցաւ ու յետոյ եր-  
 կուքն ալ ծառաներու ուսերուն վրայ վերցուելով պա-  
 տրաստուած անկողնոյն մէջ դրուեցան: Վայրկեան մը  
 ետքը թրջուած սաւանները փոխուելով՝ նորեր բերուե-  
 ցան, որոնք վարդելջրով ու զանազան հոտերով ուռ-  
 դուած էին: Վերջապէս անուշեղէններ ու աղնիւ դի-  
 նիններ մեծարուեցան՝ այնպէս որ Սալապէդ ինքզինքը  
 արքայութի նը կը կարծէր: Իայց ամեն բանէ աւելի տի-  
 կին Վարդենիի գեղեցկութեան վրայ կ'սքանչանար ու  
 անհամբեր կ'սպասէր որ այս արարողութիւնները վեր-  
 ջանան, որպէս զի ժամ առաջ տիկնոջ հետ առանձին  
 մնայ: Այս մասին տիկնոջ ալ բացուեցաւ որ իսկոյն բս-  
 պասուհիներուն հրամայեց միւս սենեակը երթալ ու ի-  
 բնեց սրահին մէջ մինակ ճրագ մը ձգել: Սիրահարնե-  
 րը մինակ մնալուն պէս՝ սկսան զիրար գրկել, պող-  
 նուիլ և այլն և այլն. երբ տիկինը զգաց որ մեկնելու ժա-  
 մանակն է, սպասուհիները կանչեց հագուելու համար  
 և անոնց հրամայեց նորէն անուշեղէններ բերել իր տար-  
 փածուն կազդուրելու համար: Բաժնուելէ առաջ, — Սի-  
 րականս, բաւ անոր, շատ պիտի պարտաւորես զիս ե-  
 թէ հաճիս այս գիշեր իմ տունս ընթրել ու պառկել:  
 Սալապէդ՝ որ իր վայելած հեշտութիւնները միայն  
 սիրոյ արդիւնք կը կարծէր, տիկնոջ պատասխանեց թէ  
 իր ամենէ ջերմ փափաքն էր անոր հաճելի եղածն ը-  
 նել և թէ պատրաստ էր չէ թէ միայն նոյն գիշեր՝ այլ  
 և իր կենաց բոլոր գիշերները անոր տունը անցընել:  
 Այս պատասխանին վրայ իրարմէ բաժնուեցան:

Տիկին Վարդենի իր տանը մէջ սենեակ մը՝ ու փա-  
 ռաւոր հացկերոյթ մը պատրաստել տուաւ նոյն գիշե-  
 րը: Ֆլորանսոյն մեծ սիրով ընդունեցաւ ու սեղանին  
 վրայ հազար տեսակ զուարճալի խօսակցութիւններ ե-  
 դան: Սեղանէն ննջարանք անցաւ Սալապէդ, ուրկարա-  
 սիններու ճոխութիւնը ու պերճութիւնը, տան տիկնոջ  
 քաղաքավարական ձևերը՝ զինքը համոզեցին թէ բար-

ճրաստիճան ու հարուստ անձի մը տեսակցութիւնը կը  
 վայելէր. թէև անոր վրայ աննպաստ բաներ լսած էր,  
 բայց զանոնք անհիմն զրպարտութիւններ ու նախանձու-  
 խօսքեր սեպած էր, ու չէր կրնար ենթադրել թէ զին-  
 քը կը խնայէր նա. ուստի այն գիշերը անոր հետ պառ-  
 կեցաւ, ու բոլորովին դո՛հ բլլալու ամեն պատճառները  
 ունեցաւ. կը կարծէր թէ իր սիրածին չափ սիրուած է  
 ինքն ալ, և տիկինն ալ ձեռքէն եկածը կ'ընէր այս  
 մասին զինքը հաւատացնելու համար: Հետեւեալ օրը  
 առտու՝ տիկին Վարդենին իրեն գօտի մը ու քսակ մ'ալ  
 տուաւ, բսելով՝ «Սիրելի բարեկամ, բոլոր ունեցածս  
 քուկդ է: Սիրտս քեզ ընծայած օրէս ես անգամ քուկդ  
 եմ. հետեւաբար այս տեղ ինքզինքդ տան տէր համա-  
 բերով՝ կրնաս բացարձակապէս հրամայել:»

Սալապէդ նոր գգուանքներով ու յաւիտենական  
 հաւատարմութիւն մը խոստանալով՝ պատասխանեց, և  
 անորմէ բաժնուեցաւ վաճառականներու ժողովարանը  
 երթալու համար, ու այնուհետէ իր բոլոր պարագոյ  
 ժամերը անոր քով անցընելով կը զուարճանար առանց  
 ստակ մը մխտելու:

Քիչ ժամանակ ետքը յարմար առիթով մը իր ապ-  
 րանքները մեծ շահով ծախեց: Տիկինը իր լրտեսներու  
 միջոցաւ աս լուրը առնելով՝ աս ստակները յափշտակե-  
 լու համար իր ծուղակը պատրաստեց իսկոյն՝ ու յաջո-  
 ղեցաւ, վասն զի Սալապէդ քանի մը օր ետքը իր հետ  
 ճաշելու եկաւ ու տիկինը գգուանք չմնաց որ չընէ ա-  
 նոր: Ինքզինքը այնքան սիրամաւ ցոյց կու տար որ ե-  
 րիտասարդը կարծեց թէ իր թեւերուն մէջ հոգին պիտի  
 տար նա. եթէ սխալէր ու տան մէջ որ և է առարկայ  
 մը գովէր՝ տիկինը կ'ստիպէր որ իրրե ընծայ ընդունի  
 և մինչև այն օրը կարելի է 30 սկուտի նուէր ա-  
 ռած էր: Մինչդեռ իրենց փոխադարձ սիրոյն վրայ խօ-  
 սելու և զայն գործով ապացուցանելու զբաղած էին,  
 տիկնոջ սպասուհիներէն մէկը եկաւ իմացուց որ անոր  
 յայտնելու գաղտնի բան մ'ունէր: Տիկինը գոհամա-  
 կութեամբ մը դուրս ելաւ ու քառօրդ մը վերջ վերա-  
 դարձաւ ողբալով և անկողնոյն վրայ խնալով՝ սկսաւ



հեծկտալ առանց իր սիրականին բան մ'ըսելու: Պարան՝ սիրականը այս յանկարծական փոփոխութեան վրայ զարմացած՝ վազեց գրկեց զանի ու հետք լայով՝

— Ի՞նչ ունիս, սիրելի բարեկամուհիս, բաւ, լալուդ պատճառն ինչ է, մի պահէր իզմէ, կ'աղաչեմ:

Բայց տիկինը վայնասունը կ'աւելցնէր ու շատ մը աղաչանքներէ վերջը՝ «Բաբէ, անուշիկ բարեկամս, կը պատասխանէ, ի՞նչ բսելիքս ու բնելիքս չգիտեմ. յուսահատութեան մէջ եմ. Մեսինայէ՝ եղբարցս մէկէն նամակ մ'առի որ կ'աղաչէ զիս իրեն հազար սկուտ զրկել ութ օրուան մէջ անպատճառ, եթէ հարկ է ունեցածս չունեցածս ծախելով՝ առանց որոյ զինքը պիտի կախեն, Աստուած իմ, աս ի՞նչ դժբաղդութիւն է: Ութ օրի մէջ այնչափ ստակ ուրկէ դաննեմ, դոնէ տասնհինգ օր ժամանակ տար, իմ երկիրներէս մէկը կը ծախէի. բայց ութ օրուան միջոցը ձեռքս կը կապէ: Եթէ եղբորս գլուխը բան մը դայ՝ կ'զգամ որ ես ալ պիտի չգիտանամ»: Աս բսելով՝ դարձեալ լաց ու վայնասուն սկսաւ:

Սալապէդ՝ որ անշուշտ պիտի չխարուէր եթէ նուազ սիրահարած բլլար՝ անոր լացը անկեղծ և բաժնեբը ճշմարիտ համարելով՝ ջանաց մխիթարել զանի:

— Կարելի չէ ինձ, տիկին, բաւ, հազար սկուտ փոխալ քեզի, որովհետեւ այնքան չունիմ, ունեցածս միայն 300 սկուտ է զոր ամենայն յօժարութեամբ քեզ կու տամ եթէ տասնհինգ օրէն կրնաս զանոնք ինձ վերադարձնել: Բարեբաղդարար երէկ ապրանքներս ծախեցի թէ ոչ տասնոց մը անգամ պիտի չկրնայի տալ:

— Ի՞նչ, սիրելի բարեկամս, մինչև երէկ ստակի ներութիւն կը քաշէիր առանց ինձի բան մ'ըսելու: Ինչու իզմէ չէիր ուզեր, վասն զի՝ թէև հազար սկուտ չունիմ, բայց միշտ մէկ երկու հարիւր սկուտ կ'ունենամ քեզի համար: Իմ վրայ ունեցած այդ անվստահութիւնդ՝ կարգիլէ այժմ որ ես ալ քու առաջարկութիւնը ընդունիմ:

Սալապէդ այս խօսքերէն աւելի շարժած ու սիրուն հիէին անկեղծութեան վրայ բոլորովին համոզուած՝

— Անուշիկ բարեկամուհիս, վրայ բերաւ, այդ բա-

նը պէտք չէ զքեզ արդիլէ իմ՝ բրած պղտիկ ծառայութիւնս ընդունելու, վասն զի հաւաստի եղիր, որ կ'ընէ ստակի պէտք ունենայի՝ քեզմէ կ'ուզէի, բանի որ այնքան լաւ կը ճանչնամ քու իմ վրայ ունեցած սերդ:

— Այդ խօսքէդ կը հասկընամ, Սալապէդ, որ զիս իրօք կը սիրես եղեր և ես խարուած չեմ զքեզ ինձ բարեկամ ընտրելովս. այդ գումարը ես չիմոգրած՝ քու տալը ու այսքան մեծ գումար մը ինձ վստահելը՝ ճշմարիտ վեհանձնութիւն կը համարուի: Արդէն սիրելի էիր ինձ, բայց հիմա աւելի ևս սիրելի կը դառնաս ատ վարքովդ: Աս ի՞նչ աղնութիւն է, կ'ուզես որ եղբորս կեանքը քեզ պարտաւորիմ, աս անանկ ծառայութիւն մ'է որ երբէք պիտի չմոռնամ: Բայց և այժպէս այդ հինգ հարիւր սկուտը չուզելով կ'ընդունիմ, վասն զի դիտեմ որ վաճառականները իրենց ստակովը ստակ կը շահին ու երբեմն ձեռքերնէն շահեր կը փախցնեն պատրաստ ստակ չունենալուն. այդ գումարը ընդունելու ինձ համարձակութիւն տուողը՝ քիչ օրէն զայն քեզ վերադարձնելու յոյս է, թէ ոչ՝ դիտնաս որ բոլոր ունեցածս ու տուներս գրաւի դնելով պարտքս օրին կը հատուցանեմ. . .

Նա այս վերջին բառերը արտասանելու ատենը արտասուածոր աչերով ընկաւ Ֆլօրանցիին վրայ՝ որ զան անմխիթար չձգելու համար գիշերը հետք անցուց ու քաջութեամբ մխիթարեց: Հետեւեալ օրը Պ. Սալապէդին առաջին գործը եղաւ հինգ հարիւր սկուտը վարքէնի տիկնոջ յանձնել, առանց անորմէ մուրհակ մը անգամ առնելու, լոկ անոր խօսքին վստահելով ու տասն օրէն ստանալու յոյսով: Տիկինը ընդունեցաւ զանոնք լալկան աչքերով ու ինդում սիրտով, և առիթը չփախցուց վաճառականէն չբաժնուած իր սերոյ ու երախտացուց զիտութեան նշանները անոր ցուցնելու:

Բայց հետեւեալ օրերը գործերը ուրիշ ձևի մտան, տիկինը իր անուշ դէմքն ու ընթացքը փոխեց: Սալապէդ՝ որ յառաջ գիշեր ցորեկ՝ ուզած ատեն կրնար զանի տեսնել, շատ անգամ՝ կու դար ու չէր ընդունուէր, այնպէս որ եօթը այցելութեանց հազիւ մէկը կը



յաջողէր, ան ալ շատ պաղ քնդունելութեամբ մը: Տի-  
կին Վարդենիի ուզած պայմանաժամը մէկ ամիս անցեր  
և տակաւին վճարումի խօսքը չէր բներ նա: Մալապէդ-  
երեւոր պիկոցուց քիչ մը և համարձակեցաւ վերջապէս  
իր ստակը պահանջել, բայց միայն օրօրոյ խոստումներ  
կտանար, որով իր խաբուած բլլալը հասկըցաւ նա:  
Ալ բարկութենէն կը ճախէր, և իրօք ալ ճախելու  
բան էր: Ինչպէս կարելի էր երևակայել թէ կին մը  
այնքան վարպետ դերասանուհի մը կրնար թլլալ: Ամե-  
նէն աւելի կ'զայրանար մանաւանդ ձեռքէն թուղթ մը  
անգամ առած չըլլալուն: Հիմակ ինչպէս կրնար պա-  
հանջել իր ստակները քանի որ ձեռքը ոչ ապացոյց և  
ոչ ալ վկայ ունէր, ու քով կը հասկընար թէ այնքան  
խաբերայ կին մը՝ սյարտուրաց ալ կրնար թլլալ: Խեղճ  
տղան վախնալով որ իր վրայ չիմեզան, իր այս դժբաղ-  
դութիւնը մարդու մը պատմելու չէր համարձակեր,  
վասն զի արդէն շատերը իրեն ըսած էին որ սա կնոջ-  
մէ զգուշանայ: Եւ որ աւելի ցաւալին է՝ ան օրերը իր  
տիրոջմէն ալ հրաման եկաւ սեղանաւորի մը ձեռքով  
նոյն ստակները դրկելու, որովհետեւ ապրանքները ծա-  
խած օրը անոր իմաց տուած էր: Ուստի ըբած յիմա-  
րութիւնը ծածկելու ու յանդիմանութիւններէ ազա-  
տելու համար իր տիրոջ հրամանին համեմատ Բիզա  
երթալու տեղ՝ Նաբոլի անցաւ նա, ուր ան տան կը  
բնակէր Պօլսոյ կայսրուհիին սեղանաւորը՝ Բիէթրօ Գա-  
նիճիանօ՝ որ ոչիմ մարդ մ'ու Մալապէդի բարեկամն  
էր:

Մալապէդ՝ իր դժբաղդութեան մէջ դնաց զանի դատա-  
ու քանի մ'օր ետքը իր պատմութիւնը անոր պատմե-  
լով խորհուրդ հարցուց ու աղաչեց որ իր օրական հա-  
ցը ճարելու համար դորձ մը գտնայ իրեն, վասն զի ալ  
միաքը դրած էր Յլբրանս չբառնալ: Գանիճիանօ դինքը  
աղէկ մը յանդիմանելէն ետքը՝ խրատեց որ Բալէրմօ  
գառնայ, իր բռնելիք բնթացքը սորվեցուց ու ստակ  
ալ փոխ տուաւ իր նպատակը դիւրացընելու համար:

Մալապէդ անոր ցուցուցած ճամբան հաւնեցաւ ու  
խորհուրդին հետեւելով՝ շատ մը տակառներ դնեց ու

րոնց մէջ եղ դրուած էր, զանանք ջրով լեցուց ու ա-  
մենք մէկէն նաւ մը փոխադրելով՝ Բալէրմօ վերադար-  
ձաւ: Հոն հասնելուն՝ իր ունեցած ապրանքներուն ցու-  
ցակը ու գինը իմացուց մաքսի գործակատարներուն,  
իր անունով շտեմարանի մը մէջ լեցուց՝ ու յայտնեց  
թէ զանանք պիտի ծախէր ուրիշ եղբրու հետ զորս  
կ'սպասէր:

Շատ չանցաւ տիկին Վարդենի երիտասարդին դա-  
լը իմացաւ, ու լսելով որ արդէն անոր բերած ապրանք-  
ները գրեթէ 2,000 սիլուտ կ'արժէին, կարծեց թէ գէշ  
չէր բներ 300 սիլուտը անոր վերադարձընելով, որպէսզի  
աւելի մեծ գումար մը կ'իթէ անդամէ: Ս.ս մտքով՝ զան  
իր տունը հրաւիրեց. Մալապէդ ալ անոր կ'սպասէր, ուս-  
տի երթալու դժուարութիւն չըբաւ ամենեկին ու ինք-  
ւրմէն գոհ եղաւ անոր հետը կաւոտ չըլլալուն: Տի-  
կինը վերջին անգամներէն աւելի աղէկ քնդունելութիւն  
բնելով՝ նոր ապրանքներով եկած թլլալը չգիտնալ կեղ-  
ծեց, կրկին ու կրկին անգամ անգամ ներում խնդրեց  
ստակները ժամանակին չվճարելուն համար՝ ու յաւել-  
ցուց թէ անտարակոյս իրմէ զջարած պէտք էր թլլալ  
նա:

— Կը խոստովանիմ, տիկին, պատասխանեց երիտա-  
սարդը խնդարով, թէ ան տան քանի մը գործեր ու-  
նեցայ որոնք զիս վշտացուցին, բայց ժամանակն ու բա-  
րեկամներս ինձ նոր միջոյններ տուին: Քեզի դէմ այն-  
չափ նեղացած՝ ու այնչափ սրդողած եմ, տիկին, որ  
ունեցածիս մէկ մասը ծախեցի հոս գալով քու մտքը  
բնակելու համար: Հետս արդէն 2,000 սիլուտի ապրանք  
ունիմ, ու 3,000 սիլուտի ևս կ'սպասեմ. ինչ բնեմ,  
զիս քեզի հետ անքակտելի կերպով կապեցիր, քեզի  
համար ունեցած սէրս սրտիս մէջ այնքան սաստիկ տալա-  
ւորուած է՝ որ քեզմէ հեռի չեմ կրնար ապրիլ: Քու  
բնկերութիւնը իմ երջանկութեանս անհրաժեշտ է ու  
այնքան դիշեր ցորեկ քու վրայ կը մտածեմ, որ կար-  
ծես թէ զիս կախարդած ես:

— Մեծ հաճութիւն կը պատճառես, իմ սիրուն  
բարեկամս, իմացընելով ինձ որ մեր քաղաքը հաստա-  
11



տուելու դիտաւորութիւն ունիս: Հաւաստի եղիր որ իմ սէրս ալ փոխուած չէ, և եթէ վերջին ասեաններս նուազ եռանդուն կ'երևայի՝ պատճառը գլուխս եկած բնտանեկան վիշտերս են: Վիշտերու մէջ գտնուողին շատ դժուար է իր բարեկամներու զուարթ երևալ, բայց հիմա որ անոնք անցան, ապահով եղիր որ առաջուքնէ աւելի սիրալիր պիտի ըլլամ չէ թէ զքեզ աւելի սիրելով՝ վասն զի արդէն բոլոր կարողութիւնովս կը սիրէի զքեզ: Աս ալ կայ որ իմ ամենէ մեծ ցաւերէս մէկը՝ քեզի ունեցած պարտքս խոստացած ժամանակիս չկրնալ վճարելու էր, բայց հազիւ թէ դացեր էիր ասկէ՝ երբ ստակներս եկան, եթէ հասցէի ունենայի զանոնք անվրէպ կը զրկէի քեզ, բայց քանի որ հիմակ հոս ես, քու ձեռքդ կը յանձնեմ:»

Աս բտելով՝ տիկինը քսակ մը բերել տուաւ որուն մէջ երիտասարդին տուած հինգ հարիւր սկուտը կար, և զանոնք անոր ձեռքը տուաւ խնդրելով որ համբէ և անոնց ճշդութիւնը ստուգէ: Ընթերցողին կ'մնայ երևակայել թէ Սալապէթ որքան ուրախացաւ, բայց և այնպէս քսակը առնելով՝ սկուտները համբեց ու գումարը ճիշդ գտաւ: Յետոյ բաւ տիկնոջ թէ՛ քաջ համոզուած էր անոր ըսածներուն ճշմարտութեան վրայ և միանգամայն անորմէ այնքան դժէ էր որ իր ունեցածք միշտ անոր տրամադրութեանը տակ գրած էր:

— Ի հարկին կրնաս փորձով ալ համոզուիլ, թօթօշիկս, աւելցուց նա, մանաւանդ երբ հոս պիտի հաստատուիմ կատարելապէս:

Ասոր վրայ՝ երկուքն ալ, ըստ երևութին իրարմէ դժէ եղած բաժնուեցան: Ֆլորանսցին անոր տեսութեան երթալը շարունակեց և Վարդենի ձեռքէն եկած պախիւր կ'ընէր անոր: Երկուքն ալ իրենց նպատակներն ունէին, բայց տարփածու պարոնը երկրորդ անգամ խաբուելէ կ'զգուշանար: Ընդհակառակը՝ իրեն խաղցուած խաղին վրէժը լուծել կ'ուզէր իրեն դէմ՝ նորէն պատրաստուելիք խաղէն օգուտ քաղելով, վասն զի գիւրաւ հասկըցեր էր որ Տիկին Վարդենի իր 500 սկուտը ետ տուած էր՝ եթէ կտրելի էր, անոր կրկնապատիկը ձեռք

ձգելու համար: Ուստի օր մը՝ որ անոր տունը ընթերելու և պառկելու հրաւիրուած էր, հոն հասած ատեն սաստիկ տրամուլթիւն մը կեղծեց: Իէմքին վրայ երևցած յուսահատութենէն՝ կարծես թէ պիտի մեռնէր: Տիկինը անոր մեղամաղձատութիւնը տեսնելով՝ պատճառն հարցուց: Երկար ատեն երիտասարդը ունեցած վիշտը պահել ուզելէն վերջը՝ պատասխանեց թէ անանկացած էր, թէ նոր ապրանքներով եկող նաւը Մօնէկի ծովահէներէն բռնուեր էր, որոնք տասը հազար սկուտ կը պահանջէին զայն ետ տալու համար, և թէ իր մասին համար ինքք պէտք էր հազար սկուտ տալ և ետ այս պահուս ձեռքս մէկ սկուտ չունիմ, աւելցուց նա, որովհետեւ ձենէ առած 500 սկուտս նարօի ղըրկեցի ապրանք բերել տալու համար: Շտեմարանին մէջ ունեցած ապրանքներս կրնամ ծախել անշուշտ, բայց պիտի ստիպուիմ վար գնով ծախել ու գրեթէ ստակիս կէսը կորսնցընել: դժբաղդաբար Բալթիմայի մէջ զիս ճանչցող բարեկամ ալ չունիմ որ այսքան մեծ գումար մը փոխ առնեմ: Ահա այս է ցաւերուս և յուսահատութեանս պատճառը, սիրելիդ իմ, եթէ չուտով ստակ չգտնեմ, ապրանքներս Մօնէկ պիտի երթան ու ան ատեն ալ ամեն ինչ լննցած է»: Տիկին Վարդենին որ այս դժբաղդութիւնը իրեն եղած կը համարէր՝ ճշմարտապէս ցաւեցաւ աս անգամ՝ և ապրանքներուն Մօնէկ երթալուն առջևը առնելու ճարք մտածեց:

— Ձեռ կրնար հաւատալ, բարեկամդ իմ, թէ որքան ցաւակից եմ քեզ, ըսաւ անոր, Աստուած վկայ ըլլայ որ եթէ ձեռքս հազար սկուտ ունենայի անմիջապէս քեզ կու տայի, բայց ես ալ նեղութեան մէջ եմ: Ինքք 500 սկուտ փոխ տուած ատենդ, ուրիշ հինգ հարիւր մ'ալ գուրաէն առեր էի հազարի լեցընելու համար որոնց պէտք ունէի, ուստի մէկու մը դիմեցի որ % 30 տոկոս կ'առնէ, եթէ այդ պայմանաւ փոխառութիւն ընել կ'ուզես, ապահով եմ որ քեզ ալ կու տայ նա, բայց պէտք ես բաւ գրաւակամներ տալ անոր. եթէ իմ երաշխաւորութիւնը ընդունի ես երաշխաւոր



կըլլամ քեզի համար, բայց եթէ չընդունի՝ ինչ դրաւ  
ւական պիտի կրնաս տալ:

Մալապեղ՝ անմիջապէս հասկըցաւ այս առաջարկու-  
թեան շարժառիթը, և թէ՛ նոյն ինքը տիկինն այս փո-  
խառութիւնը պիտի բնէր իրեն, ու մեծապէս ուրախա-  
նայով՝

—Պահանջուած տոկոսը, ըստ, որչափ որ մեծ է,  
չատ պիտի պարտաւարեա դիս եթէ հաղար սկուտը կա-  
րենաս ինձի համար ճարել, քանի որ անհրաժեշտ պէտք  
ունիմ անոր: Իբրև դրաւական ուրիշ բան չեմ կրնար  
տալ՝ բայց միայն մաքուր ունեցած ապրանքներս, ես  
պատրաստ եմ դանոնք ատ մարդուն անուանը գրել  
տալ շտեմարանին բանալիները իմ քովս պահելով, որ-  
պէս դի կարենամ ապրանքները միջնորդներուն ցու-  
ցընել և փտահ ըլլալ խարդախութիւն մը չըլլալուն  
վրայ:

Տիկինն այս ապահովութիւնը գոհացուցիչ և պայ-  
մանն ալ իրաւացի գտաւ: Խոստացաւ իբր թէ իր բա-  
րեկամին խօսիլ. ու երկրորդ օրը իրեն բարեկամ միջ-  
նորդ մը՝ կանչել տալով՝ անոր խաղալիք գերը սորվե-  
ցուց ու հաղար սկուտ տուաւ Մալապեղի տալու հա-  
մար: Մալապեղ իր մաքուր ունեցած ապրանքները այս  
մարդուն վրայ գրեց ու նոյն օրը նաւը մտնելով՝ Նա-  
բոյի իր Գալիճիանօ բարեկամը գտնելու դնաց, անորմէ  
փոխ առած հինգ հարիւր սկուտը վերադարձուց. ու  
Սիկիլիացի տիկինէն լուծած վրէժը պատմելով՝ անոր  
տունը խոհուրդներէն շնորհակալ եղաւ: Բաւական ա-  
տեն զինքը խաբող կնոջ ծախքով Նաբոյի մէջ զուար-  
ճանապէս վերջը՝ Մալապեղ Թլորանս դարձաւ ու հինգ  
հարիւր սկուտը իր տիրոջ յանձնեց:

Տիկին Վարդենի ալ Մալապեղին երեսը շտեմարանով  
պարսպ տեղ փնտռել տուաւ զանի Բալէրմօի մէջ և  
սկսաւ կատկածիլ թէ ըստ կարգի ինքն ալ խաբուած էր:  
Նրկու ամիս սպասելէն վերջը՝ շտեմարանը բանալ տուաւ  
և տեսաւ որ իւզով լեցուն կարծուած տակառները՝ ծո-  
փի շուրով լեցուած էին որու երեսը միայն քիչ մը իւղ  
կար: Գեղանի խտարուհին իր խաբուած ըլլալը տեսնե-

ով իր տուած հինգ հարիւր սկուտին վրայ լալէն ետ-  
քը՝ փոխ տուած հաղար սկուտին վրայ ալաւելի ողբաց:



ԳԻՒՂԻՆ ՏԵՒՏԵՐԸ

Թլորանսի գիւղերէ մէկուն մէջ՝ երեսուն, երեսունը-  
հինգ տարեկան տէրտէր մը կար՝ տէր ժողով անու-  
նով, գիրուկ, առողջ և հուժկու մէկը՝ որ եթէ ամուս-  
նանար . . . շատ զուակներու հայր կրնար ըլլալ, բայց  
ընթերցողը գիտէ որ ամուսնութիւնը կաթոլիկ տէրտէր-  
ներու արգիլուած է: Այս բարի երէցը որ հաղիւ կար-  
գալ գրել գիտէր, շատ զուարճալի մարդ մ'էր և իր  
հօտի ձագուկները շատ կը զուարճացընէր, տօն կամ  
կիրակի օրերը ծառի մը տակ նստած անոնց պղտի պատ-  
մութիւններ պատմելով՝ կամ հոն հոս այցելութիւններ  
ընելով, մանաւանդ երբ գեղջուկ էրիկներ բացակայ կը  
գտնուէին՝ անոնց կնիկներուն կը փութար մատունքի  
ջուր, նշխարք, օրհնենք, և ասոնց նման բաներ տա-  
նելու:

Այս սրբակեաց քահանան՝ մտնաւոր համակրու-  
թիւն մը կ'զգար կիւղէրբէ անուն գեղացիի մը Մա-  
րիա անունով կնոջը՝ որնոր կնտիկ, կըրիկ՝ ու սեւաչուի  
կտոր մ'էր՝ ճիշդ մեր տէրտէրին քմայք յարմար: Մա-  
րիա՝ զուարթարարայ, ամեն հանդեսներու յաճախող-  
ու լաւ պարող ու երգող կին մ'էր՝ որու վրայ տէր-  
տէրին համակրութիւնը երթալով այնքան աւելցաւ որ՝  
խեղճ մարդուն խելքը զլիսէն կ'երթար ու ժամերգու-  
թեանէն ետքը՝ շարունակ հոն հոս կը պտըտէր զանի  
տեսնելու յուսով: Տօն կամ կիրակի օրը երբ նա գի-



տէր թէ Մարիա եկեղեցի կը գտնուի, իր թուրքերուն բոլոր ուժովը ու ամենէ անուշիկ ձայնովը երգելու կ'աշխատէր, զանի համոզելու համար որ լաւ տիրացու էր, մինչդեռ երբ հոն չգտնուէր նա՝ մեր տէրտէրին ձայնը կը խորունկնար ու կ'անհամար գրեթէ անտանելի բլաւրու շափ։ Բայց որքան որ իր սէքը սաստիկ էր, տէր ժաքօպ այնքան վարպետ էր որ՝ ոչ ոք կը հասկընար կամ կը դուշակէր զայն։ Մարիան հաճելի բլաւրու համար շարունակ պզտիկ բնձաններ կ'ընէր անոր, երբեմն քանի մը կապ թարմ՝ սոխ կամ խատոր, երբեմն ուրիշ բանջարեղէններ, երբեմն ալ ծաղիկներու փունջ մը կամ նշխարք մը կը գրկէր. եթէ ճամբան անոր հանդիպէր՝ աչքին պոչովը կը նայէր անոր, ինչպէս որ խածան շուն մը ուրիշ շան մը կը նայի. բայց խեղճ դեղջուհին չը տեսնելու կը զարնէր ու իր ճամբան կը շարունակէր։ Այս արհամարհանքը մեծապէս կը վշտացընէր մեր սրբաակեաց քահանան, բայց և այնպէս անոր այս բնթացքէն չէր վհատեր, վասն զի սէքը խորունկ արմատներ ձգեր էր անոր սրտին մէջ։ Ինչ բնես, այս զգացումը անանկ անուշ բան մ'է, որ հաճելի է մեզ՝ նաև երբ զմեզ թշուառ կ'ընէ։

Օր մը՝ երբ տէր ժաքօպ երկու ձեռքը ետին կապած մտախոհ կը պտըտէր, դիպումաձք բերաւ որ կիւղէբբէ դիմացը ելաւ զանազան բանջարեղէններով բեռնաւորուած իշու մը վրայ հեծած.

— Ո՛ւր բարի, հարցուց անոր տէրտէրը։  
 — Քաղաքը կ'երթամ, տէր հայր, պատասխանեց դեղջուկը, կարևոր գործի մը համար, և այս բանջարեղէններն ու պտուղները քաղաքը կը տանիմ դատաւորին բնձայ տալու համար՝ որ իմ մէկ գործս պիտի նայի։

— Շատ լաւ կ'ընես, տղաս, ըսաւ անոր տէր ժաքօպ՝ սրտէն ուրախանալով, Աստուած բարի ճանապարհ տայ ու շուտ վերադառնաս. եթէ ծառաս ճամբան դիմացդ ելնէ, բո՛ւ իրեն որ ժամին համար քիչ մ'ալ խոռնկ առնէ։» Կիւղէբբէ աղբարը ըսածը կատարելու խոստացաւ ու ճամբան շարունակեց։

Նա բաւական հեռացած ին պէս՝ տէր ժաքօպ առիթը յարմար դաստերով՝ ելաւ անոր տիկինը տեսնելու՝ և անոր մտա փորձ մ'ընելու զնայ։

— Ողջոյն, օրհնած, ըսաւ ներս մտնելով. ինչ կ'ընես, կ'աշխատիս, Աստուած կարողութիւն տայ։» Գեղջուհին որ ան միջոցին վերի յարկը կը գտնուէր.

— Օրհնեա՛ տէր, ըսաւ, բարի եկար, տէր հայր, ինչպէս եղաւ որ այս տաքուն այս կողմերը ինկար։

— Տեսայ որ, պարոն կիւղէբբէ քաղաքը կ'երթար, պատասխանեց երէցը, ու քիչ մը դքեզ տեսնելու եկայ։

Մարիա վար իջնելով՝ տէր հայրը նստեցուց ու իր գործը շարունակեց բակլայ յտակելով։ Տէր ժաքօպ այս միակուրթենէն օգուտ քաղել ուզելով՝ այսպէս խօսք բացաւ։

— Աղջիկ, աս մինչև ե՞րբ պիտի տանջես զիս, Աստուծմէ չես վախնար դուն։

— Ե՛ս կը տանջեմ դքեզ, տէր հայր, և ինչ կ'ընեմ.

— Իբրաւ բան մը չես բներ, բայց միթէ շատ բան ընել չէ՞ զիս ուզածս բնելէ արդիւնել։

— Միթէ քահանաները անանկ բան կ'ընեն, տէր հայր։

— Անշուշտ, օրհնած, և ուրիշ մարդերէ ալ աւելի աղէկ։ Ինչո՞ւ պիտի չընենք, Տէր ողորմեա՛, միթէ Աստուած մեզի ալ կատարեալ չէ ստեղծեր, մանաւանդ որ մենք միւս մարդերէ աւելի ճարպիկ ենք այդ մասին, վասն զի կուսակրօնութեան դատապարտուած բլաւրով՝ քիչ անգամ առիթ ունեցած ենք։ Այդ առիթը՝ այս անգամ քեզմէ կը պահանջեմ և կը հաւատեմ՝ զքեզ որ դժգոհ չես բլաւր։

— Տէր հայր, կուսակրօնութեան ուխտը բնողը պէտք է կուսակրօն մնալ, ես կարգացող չեմ, բայց իմ կնիկի խելքով անանկ կը դատեմ.

— Ա՛խ, բսելը դիւրին է, բնելը դժուար. եթէ ուխտը ինք մեղաւոր չեղանք ա՛, թէ որ Աստուած քեզի համար ունեցած սիրոյս հակառակ բլաւր, այդ զգացումը չէր ծներ ներս, ասկէ զատ հաւատոս որ դքեզ լաւ



կը վարձատրեմ, օրհնէնքս ալ վրայէդ պահաս չբլար :  
—Ձեր օրհնէնքը աժանէ, տէր հայր, և ուրիշ վարձատրութեանդ ալ չեմ հաւատար, վասն զի ամենքնիդ ալ սատանայի պէս ազահ էք :

—Միթէ բան մ'ուզեցիր ու ես մերժեցի. ինչ որ կ'ուզես խնդրէ իզմէ և ապահով եղիր որ պիտի ընդունիս. զոյգ մը մուճակ կ'ուզես, փօշի մը, ժապաւէն մը և այլն :

—Ըստմենրդ ունիմ, պատասխանեց գեղջուհին, բայց քանի որ զիս այդքան կը սիրես, ուրիշ ծառայութիւն մ'ըրէ ինձ և ես ուղածդ կը կատարեմ :

—Հսէ, կ'աղաչեմ, ինչ կ'ուզես, վրայ բերաւ երէցը աշխուժեւ, քեզի հաճելի եղածն ընելու պատրաստ եմ :

—Գալ շարաթ քաղաքը պիտի երթամ, բոա Մարիա, մանած բուրդ տանելու ու ոօքս շիակելու համար՝ և եթէ ինձի սակի մը փոխ տաս, կրնամ վաշխառուի մը քովէ իմ հարսութեան հազուասա, որ իրբև գրաւական ձգած եմ, ես առնուլ : Նայէ թէ որ սա սաակը տարւ միաքունիս, փափաքածդ կրնաս ստանալ :

—Արաս ստակ չունիմ, բայց շարաթէն առաջ ուկիդ կու տամ :

—Չէ, չէ, դուք ձեր խոստումը չէք բռներ, ես անանկ գիրաւ խաբուող կնիկներէն չեմ, թէ որ վրադ ստակ չունիս, դնա դախր ու բեր :

—Խնդրեմ, հիմակ զիս այս տաքուն մինչև սենեակս մի գրկեր, սակէ զատ մտածէ որ առանձին ենք, ու վերադարձիս կարելի է քովդ մարդ գանուի, այս պատեհ առիթը չխախտցնենք :

—Ինչ որ բան, պարտալ է, բոա Մարիա, խօսքով չեմ խաբուիր :

Տէրտէրը տեսնելով որ Մարիա գործին գէմ գործով վարձատրուիլ կ'ուզէր.

—Քանի որ, բոա, չես հաւատար որ սակիդ կը բերեմ, ահա վերարկուս առ էրբև գրաւական. գաղգիական գեղեցիկ չախայէ է ու գեռ 13 օր չկայ որ գերձակ Մարքօէն առի երկու սկիի, թէև շատերը կը պնդեն որ երեք սակի կ'արժէ :

—Քիչ մը դժուարահաւատալի կ'երևի ինձ, բայց առ այժմ իրբև գրուական կ'ընդունիմ զայն, նայինք խօսքիդ տէրն եմ :

Տէր ժաքօլ. որ իր տուփանքը դօճ ընելու ցանկութեամբ կ'եփէր՝ իր վերարկուն յանձնեց անոր, ու ողորմելի կ'ինք զայն սնտուկի մը մէջ գոցելէն ետք՝ տէրտէրը յարգնոց հրաւիրեց, քսելով որ հոն մարդ չէր գար : Քահանան փութաց յարգնոցը երթալու ու կուսակրօնութիւնը յարգին տակ թողելէն ետք՝ պարզ էնթարիով իր սենեակը վերադարձաւ գրացիի մը տունէ դառնալու պէս, հոն համներով՝ իր անառակութեամբը աղքատ կ'ինք զլիսէ հանելէն ետք՝ անոր չքաւորութեան իրբև գարման խոստացած վարձքին վրայ մտածեց ու տեսաւ որ երկու ամուսն ժամոցները պիտի չբաւէին այդ գուժօրը լեցընելու, ուստի վերարկուն ետ առնելու սատանութիւն մը մտածեց :

Երկրորդ օրը, որ տօն էր, իր դրացիներէն մէկուն տղան Մարիային գրկելով՝ աղաչեց որ իր մարմարէ սանդը (հալան) տայ, պատրուակելով թէ ճաշի հիւր պիտի ունենար : Տիկինը հաճութեամբ առաւ զայն. երկու օր ետք՝ տէր ժաքօլ նոյն սանդը ժամկոչին հետ կու օր ետք՝ տէր ժամուն որ կը կարծէր թէ էրիկ կնիկ ետ գրկեց այն ժամուն որ կը կարծէր թէ էրիկ կնիկ մէկտեղ սեղանի վրայ պիտի գանուին :

—Տէր հայրը բարև ունի և շնորհակալ է ձեզմէն, բոա ժամկոչը կնոջ ուղղելով խօսքը, ու կը խնդրէ որ իր վերարկուն՝ զոր իրբև գրաւական ձգած է սանդը առնելուն՝ հաճիք իրեն վերադարձնել :

Մարիա ունքերը կախելով՝ պատասխան տալու վրայ էր, երբ էրիկը զինքն ընդմիջելով՝ բարկութեամբ բոա :

—Մեր երէցէն գրաւական ստանելը սրկէ հանեցիր, կնիկ, հիմա լաւ ազատի մը կ'վայելէր քեզի մեր բարի տէրտէրին չխոտահելուդ համար. չուտ եիր սա վերարկուն տուր, և եթէ ուրիշ անգամ բան մ'ուզէ՝ չբլայ կուս տուր, և եթէ ուրիշ անգամ բան մ'ուզէ՝ չբլայ որ գրաւական ուզես, սա ինչ ամօթ բան է, անոր օրհնէնքը կ'օգտէ մեզի :

Խեղճ կ'ինք որ կրկին սխալներու մէջ ինկած էր՝ լեղապատաւ եղաւ, ու վերարկուն ժամկոչին տարով՝ բոա անոր :




— Կ'աղաչեմ, բռնք կողմէս տէր ժաքօպին թէ քանի որ այսպէս կը վարուի՝ մէյ մ'ալ իմ սանդիս երեսը պիտի չտեսնէ:

Կիւղէրբէ ամենեւին ուշագրութիւն չըբաւ իր կնոջ խօսքերուն՝ զանոնք իր յանդիմանութեանց արդիւնքը կարծելով, բայց երբ ժամկոչը տէրտէրին հաղորդեց՝

— Տեսած ատենդ, ըսաւ քահանան, դուն ալ Մարիային բռնս որ ինքն ալ ուրիշ անգամ իմ սանդիտուն (էլ) պիտի չտեսնէ բնաւ:

Եւ իրօք այս երէցին ու առժամանակեայ երէցկիւնին յարաբերութիւնները դադրեցան, թէև պզտի բարեկամութիւն մը միշտ մնաց: Մարիա համոզուեցաւ որ տէրտէրը թէ կուսակրօնութեան և թէ չքաւորութեան օգնութիւն մ'ընելու համար տուած ուխտերը ու խոստումները կը դրժէր ու միտքը դրաւ ինք իր ամուսնոյն հաւատարիմ մնալու ուխտը ուրիշ անգամ չմտնալ:



ՌԻՂՂԵԱԼ ՆԱԽԱՆՁԱՏԸ

Ասենօք Արեցցօ քաղքին մէջ Թոֆանօ անուն հաբուստ մարդ մը կար որ ձիտա անուն նորատի ու գեղեցիկ աղջկան մը հետ կարգուած էր: Այս մարդը առանց պատճառք գիտնալու իր կնիկէն սարսափելի կերպով կը նախանձէր: Կինը այս բանը գիտելով սաստիկ կը վշտանար ու իրեն դէմ նախատինք կը համարէր զայն: Ետ անգամայդ նախանձուն առիթը ինչ ըլլալը կը հարցընէր, բայց երբէք որոշ պատասխան մը չէր կրնար ստանալ, վասն զի իր երկը ասիեղջրփեղ պատճառներ յառաջ կը բերէր, ինչպէս որ շատերը այսպէս

կ'ընեն ասանկ պարագաներու մէջ: Ըիտա վերջապէս իր երկան այս մտային հիւանդութենէն ձանձրանալով՝ միաքը դրաւ զանի պատժել, անոր տալով այն եղջիւրէ քնձանձ որմէ իր երկիւր այնքան սաստիկ կը վախնար:

Այս միտքով շատ սիրուն աղայ մ'ընտրեց որ իրեն համար համակրութիւն ցոյց կը տար և զոր ինքը միշտ չև այն ատեն բանի տեղ դրած չէր: Ետ մը անոր հետ յարաբերութեան մտաւ ու դորժերը անանկ մը կարգադրեց որ միայն յարմար առիթ մը կը պակսէր իրենց՝ կատարելապէս երջանիկ ըլլալու համար:

Ըիտա դիտած էր որ իր երկիւր ուրիշ պակասութիւններու հետ՝ արբեցողութիւն ալ ունէր, ուստի ոչ միայն թողուց որ նա իր այս միտումին հետեւի, այլ և ձեռքէն եկածին չափ ալ զայն խման բնելու աշխատեցաւ, որպէս զի անոր գիտութեան ժամերուն ազատութիւնը ի նպաստ իր սիրոյն դորժած է: Նախանձատամնութիւնը կամաց կամաց այնքան վարժեցաւ դիմիկն՝ որ ձիտա ուզած ատենը զան կը գիտակցընէր և գիտակցընելէ անմիջապէս ետքը իր տեղը կը պառկեցընէր:

Այդ կերպով յաջողեցաւ նա իր սիրականը տեսնել ու անոր հետ երջանիկ ժամեր անցընել, այս վարպետութեան յաջողութենէն այնքան համարձակութիւն ստացաւ նա՝ որ երիտասարդը չէ թէ միայն իր տունը կ'ընդունէր՝ այլ և նոյն ինքը կ'եկնէր անոր տունը կ'երթար և գիշերուան մեծ մասը հոն կ'անցընէր. վասն զի աս ալ յիշենք որ իրենց տուները իրարու շատ մօտ էին:

Սակայն քանի մ'անգամ Պարոն Թոֆանօ՝ դիտելով որ իր կնիկը իրեն գինի խմցուցած ատեն ինքն ալ չէր խմեր, սկսաւ կասկածիլ: Իր կասկածները սուտ գելու համար, անգամ մը օրուան մեծ մասը տունէն դուրս անցուց առանց բան մը խմելու, ու իրիկունը տունը վերադարձաւ պատէ պատ զարնուելով ու ճշմարիտ վիճակի մը պէս օրարուելով: Իր դերը այնքան լաւ խախմբընելու հարկ չկար և զան տեղը պառկեցուց անմիջապէս: Պ. Թոֆանօ անկողինը մտածին պէս, սկսաւ քնանալ կեղծել ու խալ, որով ձիտա կարծեց թէ



կրնար համարձակ իր սիրականին տունը երթալ ու մինչև կէս դիշեր հոն մնալ:

Թօֆանօ փողոցի դրան ձայնը լսելով՝ անկողնէն ելալ իր կինը սիրահարի մը հետ բռնելու կասկածով, բայց մեծապէս զարմացաւ երբ տեսաւ որ դուրս ելած էր նա՝ ու բնականաբար կրցաւ հասկընալ որ եղջիւրի գործարան մը գացած էր, ուստի դուռը լաւ մը կղպեց ու դնաց պատուհանը նստաւ անոր վերադարձը տեսնելու և հասկըցնելու թէ ամեն բան տեսեր էր:

Թէև ձմեռուան սկիզբն էր, մինչև իր կնոջ վերադարձը սպասելու համբերութիւնը ունեցաւ նա: Տիկինը փողոցին դուռը կղպուած դանելով՝ ինչ ընելիքը չէր գիտեր. պարապ տեղ կաշխատէր զայն բռնի բանալու: Եր երկիւր քանի մը վայրկեան համբերելէն վերջը

— Պարապ տեղ ժամանակդ կ'անցընես, ներս պիտի չկրնաս մտնել, ըսաւ. աւելի աղէկ է որ եկած տեղդ վերադառնաս, վասն զի ապահով կրնաս ըլլալ որ եթէ այս տունը ոտք կոխես, զքեզ, ինչպէս որ արժան է կը խայտառակեմ, բոլոր ազգականներուդ ու մեր գրացիներու ներկայութեանը:

Տիկինն աղաչեց, պաղատեցաւ որպէս զի դուռը բացուի, բողբոջեց որ երեկոյթը իր գրացիներէն մէկուն տունը անցուցեր էր, վասն զի գիշերներն երկայն էին և առանձնութենէ կը ձանձրանար. բայց բողբոջ ու աղերս անարդիւն մնացին. այս երկիւր պարոնը իր պարապ գլխովը որոշած էր աշխարհքին յայտնել իր կնոջ անկարգ ընթացքը ու բուն խոյ իր անպատուութիւնը: Ճիտա տեսնելով որ իր աղաչանքը բանի մը չէր օգտեր, սկսաւ սպառնալ.

— Եթէ դուռը չբանաս, հաւաստի եղիր որ կը զղջացընեմ զքեզ ու անխնայ կերպով քու յամառութեանդ վրէժը կը լուծեմ:

— Ինձ ինչ կրնաս ընել, ըսաւ երկիւր:

— Զքեզ կրնամ ի կորուստ մատնել, պատասխանեց կինը, որու անվրիպելի հնար մը ներշնչեր էր սէրը, դուռը բանալ տալու համար . . . այո, ի կորուստ

մատնել, վասն զի այդ անիրաւ խայտառակութենէն, որ ինձի ընել կ'ուզես, պրծելու համար պիտի երթամ ինքզինքս հիմակ սա հորը նետեմ. և որովհետև իրաւամբ բիրտ ու խման ձանչցուած ես, անպատճառ պիտի բռնեմ որ գիտնալութեանդ մէջ դուն զիս հոն նետած ես: Այն ատեն կամ պիտի ստիպուիս հայրենիքէդ հեռանալ ու բոլոր ինչքերդ ձգել, կամ թէ արժանի հատուցումդ կ'ընդունիս իբրև կնոջդ սպանիչը գլխատուելով՝ և իրօք ալ խման հուան պատճառ եղած պիտի ըլլաս:

Բայց առաջուան աղաչանքներուն պէս այս սպառնալիքն ալ թօֆանօյի վրայ տպաւորութիւն չբերին:

Կինը տեսնելով որ նա անսասան կը մնար, «Վերջին ժամն է, պօռայ, Աստուած իմ, դուն ողորմէ ինձ. մնաս բարև, նախանձնտ էրիկ»:

Գիշերը մութ էր, հազիւ թէ փողոցի առարկաները կարելի էր նշմարել: Կինը շիտակ հորը կ'երթայ ու ահագին քար մը կ'առնէ ու զայն հորը կը նետէ բոլոր ուժով, «Աստուած իմ, ողորմէ ինձ» պօռալով. քարը շուրին մէջ կ'յնալով անանկ աղմուկ մը հանեց որ թօֆանօ չտարակուսեցաւ որ իրօք կինն ինքզինքը շուրը նետած չէ: Վախէն սկսաւ գողալ ու վազեց չուանով դոյլ(դօլ) մ'առաւ, փութով դուրս ելաւ տունէն ու շիտակ հորը գնաց զան աղատելու համար. բայց ճիտա, որ դրան քով պահուած էր, իր երկան դուրս ելնելը տեսած ին պէս ներս կը մտնէ, դուռը կ'զոցէ ու զայն կղպելով կ'երթայ պատուհանը կ'նստի և կ'ըսկսի անկէ պօռալ այնպիսի ձայնով մը՝ որ իբր թէ իր սրտնեղութիւնը կը յայտնէր:

— Դիւին խմելու ատենդ պէտք էիր մէջը շուր դնել և չէ թէ գինին խմելէ ետք կէս գիշերին շուր վնասուել: Ընթերցողին կը թողունք երևակայել թօֆանօյի զարմանքը: Իսկոյն ետ դարձաւ նա ու դուռը գոց գտնելով իր կինը աղաչեց որ զայն բանայ. բայց ճիտա մտիկ չբրաւ ու թողուց որ ան ալ իրեն պէս ցուրտին քիչ մը մտի, այնպէս որ թօֆանօ սկսաւ կատղիլ և սպառնալ որ դուռը պիտի կոտրէ. այն ա.



անն կնիկը սկսաւ մէկ ձայնի պօռալով բսել. «Անի-  
 ծեալ գինով, սրիկայ մարդ, ես քեզի ուղղութեան  
 պիտի բերեմ. այս գիշեր տունդ պիտի չմտնես. վասն  
 զի գէշ վարքէդ ձանձրացած եմ, ալ չեմ կրնար գիմա-  
 նալ. կ'ուզեմ որ բոլոր թագեցիք տեսնեն թէ ժամք  
 քանիին տուն կը դառնաս. տեսնենք թէ երկուքնէս  
 որն աւելի մեղացրելի է.

Թօֆանօ՝ կնոջը իրեն խաղացած խաղին վրայ  
 ինքնիրմէ ելած՝ նախապէնք չմնաց որ չբսէ, ու այն-  
 քան պոռպուաց որ հանած աղմուկէն դրացիք ար-  
 թընալով պատուհանն ելան եղածը հասկընալու: Ծի-  
 տա անոնց հարցախորձը լսածին պէս՝ լալով պատաս-  
 խանեց.

— Ահա՛ այս չարաոյ մարդն է այս աղմուկին  
 պատճառը, այս ողորմելին՝ որ ամեն օր կ'գինովնայ ու  
 գինեատուններուն մէջ քնանալէն վերջը, դրեթէ ամեն  
 գիշեր այս ժամուս տունը կու գայ: Երկար ատեն  
 համբերեցի ու անուշութիւնով խօսեցայ, բայց որով-  
 հետեւ իմ խրատներս օգուտ մը չբրին, ու իմ համբե-  
 րութիւնս հատուց նա, այսօր ուղեցի զինքը գուրս  
 ձգել, տեսնելու համար թէ արդեօք այս պատիժն  
 աւելի արդիւնաւոր պիտի ըլլայ:

Թօֆանօ ինքզինքն արդարացընելու համար բոլոր  
 եղածը յիմարաբար պատմեց, ու կնոջը սպառնացաւ  
 ծեծին տակ սկընները կտարել, եթէ չուտով զինքը ներս  
 չառնէ:

— Նայեցէք ինչ աներես է, պօռայ կինը, դրա-  
 ցիներուն ուղղելով. արդեօք ինչ պիտի բսէր եթէ  
 ինքը տանը մէջ և ես փողոցն ըլլայի. ձեզի կը թո-  
 ղում՝ դատել իր ճշմարտախօսութիւնը: Իր բրածները  
 իմ վրաս կը ձգէ, որովհետեւ զիս փախցընելու համար  
 քարը հօր նետողն ինքն էր. բայց ես այս վարպե-  
 տութենէն չխաբուեցայ, ինչպէս դուք ալ իր պօգալի  
 սուտերէն պիտի չխաբուիք: Երանի թէ իրօք հօրը  
 նետուէր, ու ես ալ իր բռնութիւններէն ազատէի: Ալ  
 չեմ գիմանար . . . հետը կարգուելէս ի վեր զիս խա-  
 չը կը հանէ, մեղք ինձի . . . :

Ամեն դրացիները երեւթներու վրայ դատելով՝ Թօ-  
 ֆանօն մեղադրեցին ու սկսան երեսը վար առնել կնո-  
 շը վրայ այսպէս գէշ խօսելուն համար: Աղմուկն այն-  
 քան մեծցաւ որ տունէ տուն մինչև ճրտայի ճնո-  
 ղաց ականջը հասաւ, որք անմիջապէս հոն եկան այս  
 կուռոյն վերջ տարու համար, ու դրացիներէն ճշմար-  
 տութիւնը իմանալով՝ խեղճ . . . իննվեցին վրայ ինկան  
 ու անանկ ձեծեցին որ չեմ կրնար պատմել: Ծեծէն  
 վերջը տունը մտան ու ճիտայի հրամայեցին որ ու-  
 նեցածը չունեցածը հաւքտէ ու իրենց հետ տունը  
 դառնայ, ինչպէս որ բրաւ նա . . . :

Խեղճ Թօֆանօ կերած ձեծէն հիւանդացաւ, ու  
 իմացաւ թէ և շատ ուշ, թէ նախանձը զինքը շատ  
 հեռու մղած էր. և որովհետեւ իր կինը շատ կը սի-  
 րէր, ձեռքէն եկածը բրաւ հետը շուտով հաշտուելու  
 համար: Իր բարեկամները մէջ դրաւ, որք իր խոտ-  
 ման վրայ թէ ալ նախանձոտ պիտի չըլլայ ու կինը  
 պիտի յարգէ, առին տունը բերին դարձեալ:

Հաշտութենէ վերջը Թօֆանօ շատ թոյլտու էրիկ  
 մ'եղաւ, և թողուց որ իր կինը ուղածին պէս ապրի,  
 միայն թէ բնելիքը դաղանի բնէ, ու այսպէսով ինքը  
 պատճառ եղաւ անառակութեան վարժեցընելու իր  
 կինը՝ որ միայն անոր նախանձէն շարժած այդ ճամ-  
 բան մտեր էր:



ԽՈՍՏՈՎԱՆՆԷՆՍԵՐ ԷՐԻՊԸ

Փամանակաւ՝ Բիմենիի մէջ շատ հարուստ վաճա-  
 ռական մը կար, որու կինը ծաղիկահասակ ու գեղանի  
 էր: Այս մարդը իր կնիկէն սաստիկ կը նախանձէր՝



զանի չափէ դուրս սիրելուն պատճառաւ, և անոր դեղեցկութիւնը և ինքզինքն իրեն սիրցնելու փափաքը տեսնելով՝ կարծէր թէ ուրիշներէ ալ սիրուիլ կ'ուզէր նա, և իրօք ամեն մարդ ալ զանի կը հաւնէր ու դեղեցկութիւնը կը դուլէր. նախանձը տեսակ մը հիւսանդութիւն է նեղու վատառօջը բղեղներու յատուկ խեղճ մարդը այս հիւսանդութիւնով բռնուած՝ իր կնոջ ամեն բրածը կը քննադատէր ու անոր վրայ կը հսկէր շարունակ, այնպէս որ այդ թշուառուհին մահապարտ յանցաւորի մը պէս տան մէջ գոցուելու դատապարտուած էր: Իրեն համար ոչ հարմարիք կար ոչ հանդէս և ոչ շրջագայութիւն, մինակ մեծ տօնի օրերը կրնար եկեղեցի երթալ. փողոցի վրայ նայող պատուհան մը ելնելու անգամ հրաման չունէր: Մէկ խօսքով՝ իր վիճակը անտանելի էր, բայց ինքն ալ բոլորովին անմեղ բլլալուն համար ալ աւելի անտանելի ու ծանր կ'երևէր իրեն:

Չկայ բան մը որ զմեզ այնքան գէշութեան տանի՝ որքան մեր մերձաւորներու մեր վրայ ունեցած գէշ դաղափարը. այս կիներն ալ տեսնելով որ անիրաւ տեղ իր ամուսնոյն նախանձին զոհ կ'ըլլար, մտածեց որ եթէ իրօք նախանձու պատճառ տար, իր տառապանքն անկէ աւելի պիտի չըլլար. գործը՝ միայն էրիկին անվատահոլութեան վրէժը լուծելու միջոց մը գտնելուն վրայ էր: Ճան պատուհանները միշտ զոյց էին, ու նախանձառը՝ սիրուելու արժանի որ և է մէկը տունը չէր բերեր: Ուստի խեղճ կիներն ընտրելու ազատութիւնը չունենալուն, և գիտնալով որ պատկից տանը մէջ շորհքով ու բարկիթ երիտասարդ մը կը բնակէր, սաստիկ կը փափաքէր որ երկու տուները բաժնող պատը, որ շատ բարակ էր, ճեղք մ'ունենար ուրիշ կարենար զանի տեսնել, հետք խօսիլ և իր սիրտն անոր ընծայել, ապահով ըլլալով որ յետոյ աւելի մօտէն տեսնուելու և քաշածները փոխարինող հեշտութիւններ վայելելու՝ ճամբան գիւրաւ պիտի գտնէր մինչև որ էրիկը իր կիրքէն բժշկուի:

Այս մտքով սկսաւ նա պատը ամեն կողմէն քննել,

դայն ծածկող թափեալիւն հանելով վերջապէս պզտիկ ճեղք մը գտաւ. աչքերը այդ ճեղքին մօտեցնելով՝ միւս կողմը քիչ մը լոյս նշմարեց, ու քիչ շատ տեսաւ որ սենեակ մ'էր այն: Այս բանին վրայ վարպետութեամբ մը տեղեկանալը նա իր սպասուհին յանձնեց:

Այս հաւատարիմ աղջիկը որ բարի ու կարեկցող սիրտ մը ունէր, տեղեկացաւ որ պզտիկ ճեղքը ճիշտ երիտասարդին սենեկին վրայ կը նայէր և թէ հոն միւսակ կ'պառկէր նա: Այն վայրկեանէն ի վեր՝ տիկինն իրեն բան գործ բրաւ պզտիկ ծակին այցելութեան երթալ, մանաւանդ երբ կը կարծէր որ Ֆիլիպ հոն պէտք է գտնուի: Օր մը անոր հազարը լսելով ինքն ալ հազայ՝ ու անմիջապէս պզտիկ փայտով մը սկսաւ ճեղքը քերթել, և այնչափ բրաւ որ երիտասարդը ծակին մօտեցաւ գործին եղելութիւնը հասկնալու: Այն ատեն տիկինը կամացուկ մը երիտասարդը կանչեց, և Ֆիլիպ զայն իր ձայնէն ճանչնալուն ու քաղաքավարութեամբ պատասխանելու վրայ՝ տիկինը փութաց իր զգացումները անոր յայտնել:

Երիտասարդն այս յաջող արկածէն չափազանց դոհ եղած՝ իր կողմէն ալ ճեղքը մեծցնելու աշխատեցաւ՝ սենեկէն ելած ատենը թափեալիւն զայն ծածկելու հօգ տանելով: Քիչ ատենէն ճեղքը՝ զերսր տեսնելու և իրարու ձեռք սեղմելու չափ լայնցաւ, բայց երկու սիրահարները ասկէ աւելի բան մը չէին կրնար բնել նախանձառ տանտիրոջ հսկողութեան պատճառաւ՝ որ քիչ անգամ տունէն դուրս կ'ելնէր ու իր բացակայութեան միջոցին փողոցին դուռը կը կղպէր:

Ծնունդին շարաթը, առաւօտ մը կիներն իր էրիկին բաւ որ խոտովանուիլ կ'ուզէ Փրիկի ծննդեան օրը հազօրգութիւն տանելու համար, ինչպէս որ ամեն բարի Բրիտանեանները կ'ընեն:

— Ինչ պէտք ունիս խոտովանուելու, պատասխանեց նա, ինչ մեզք բրած ես:

— Միթէ զիս սուրբ կը կարծես, վրայ բերաւ կիներ, միթէ ես ալ ուրիշ մահկանացուներու պէս մեզք չեմ գործեր. բայց զանոնք չեմ կրնար քեզի բռնել:



վասն զի դուն տէրտէր չես և չես կրնար ինձի արձա-  
կում տալ:

Այսքանը բաւական եղաւ նախանձութիւն մտքին մէջ  
հազար տեսակ կասկածներ՝ ու իր կնոջը մեղքեր  
իմացներու փափաքն արթնցնելու. ուստի իր նպա-  
տակին հասնելու հնարք մը գտած ըլլալ կարծելով՝  
իր կնոջը պատասխանեց թէ խոստովանուելու հրաման  
կու տար, այն պայմանաւ որ այս ինչեկեղեցին երթայ  
առտու կանուխ ու խեղոյն վերադառնայ նոյն խակ իր  
խոստովանաճօրը խոստովանուելով: Մատանայ տիկինը  
այս պատասխանին մէջ մասնաւոր դիտաւորութիւն մը  
գուշակեց, բայց բան մը յայտնի չընելով պատասխա-  
նեց թէ՛ պատրաստ էր ուղածին պէս ընելու:

Իրօք, Մնուկդին օրը կանուխ ելաւ նա հազուե-  
ցաւ ու շիտակ որոշեալ եկեղեցին գնաց, ուր տարբեր  
ճամբէ մը իր էրիկն իրմէ առաջ հասաւ. այս պարու-  
նը խոստովանաճայրը շահելով՝ անոր հետ համաձայ-  
նած էր իր յատակադժին նկատմամբ. ուստի խեղոյն իր  
ահանային պէս պարեգօտ մը ու կնդուղ մը հազնե-  
լով՝ որ իր դէմքը կը ծածկէր, գնաց դասը նստաւ:  
Տիկինը եկեղեցի մտածին պէս՝ իր խոստովանաճայրը  
կանչեց և աղաչեց որ զինքը խոստովանեցնէ. խոստո-  
վանաճայրը պատասխանեց թէ նոյն միջոցին չէր կրնար  
զինքը խոստովանեցնել, որովհետև շատ զբաղած էր,  
բայց, եթէ կուզէր, իր պաշտօնակիցներէ մէկը կրնար  
զրկել որ հաճութեամբ կը խոստովանեցնէր զինքը և պահ  
մը ետքը տեսաւ որ իր էրիկը վերոյիշեալ հազուատով իր-  
բև խոստովանաճայր դէպ ի իրեն կու գար, և թէև իր  
դէմքը ծածկելու կ'աշխատէր, բայց կինն արդէն գոր-  
ծը քիչ մը գուշակած ըլլալուն՝ անոր ձեռն ու մօրու-  
քէն շուտ մը ճանչցաւ զանի:

— Տէր Աստուած, բոաւ նա, չէի կարծեր որ իմ  
նախանձոտ այրս կրնայ խոստովանաճայր ըլլալ, բայց  
քանի որ այդպէս է, նայիւք երկուքնէս ո՞վ աւելի  
վարպետ պիտի փրկի:

Նախանձոտն իր ձայնէն չճանչցուելու համար բե-  
րանը պզտիկ քարեր առեր էր, կինը զայն ամենեւին

չճանչնալ ձեացնելով՝ անոր ոտքը ինկաւ ու օրհնու-  
թիւնը առնելէ վերջը՝ սկսաւ իր թեթև մեղքերն ը-  
սել. յետոյ աւելցուց թէ ամուսնայեալ էր բայց քա-  
հանայ մը կը սիրէր որ ամեն գիշեր կու գար իր հե-  
տը կը պառկէր: Այս խօսքերը խոստովանաճօր էրի-  
կին համար՝ մէյ մէկ դանակի հարուածներ եղան, և  
իր բարկութեան մէջ ամեն բան երևան պիտի հանէր՝  
եթէ անկէ աւելին իմանալու փափաքը զինքը չարգի-  
լէր. ուստի

-- Միթէ, տիկին, էրիկդ քեզի հետ չըպառկեր,  
հարցուց:

- Կը պառկի, տէր հայր:
- Ուրեմն տէրտէրը ինչպէս կրնայ պառկիլ:
- Չգիտեմ ինչպէս կ'ընէ պատասխանեց ապաշխա-  
րուհին. բայց տան ամեն գուները շատ գեղբաւ կը  
բանայ, ու բսած է որ սենեակս չեկամ՝ աղօթք մ'ալ  
կ'ընէ որով էրիկս կը կապէ կամ կը թմրեցընէ ու բան  
մը չլսեր նա:

— Ատիկա քրէական յանցանք մ'է, տիկին, և լաւ  
կ'ընես հողոյդ փրկութեանը համար, եթէ այդ  
թշուառական քահանան մէկ մ'ալ չընդունիս:

- Չեմ կրնար չընդունիլ, և զինքը շատ սիրելուս  
չեմ կրնար խոստանալ որ ատորմէ ետ կրնամ քաշուիլ:
- Ուրեմն ես ալ չեմ կրնար քեզի արձակում տալ:

— Կը ցաւիմ, տէր հայր, բայց հոս սուտ ըսելու  
չեկայ, եթէ ձեր խրատներուն հետեւելու կարողու-  
թիւնն ունենայի՝ յօժարութեամբ կը խոստանայի ձեզի:

— Ստուգիւ, տիկին, կը ցաւիմ որ այս կերպով քու  
հողին կը կորսնցընես յաւիտենապէս, ու եթէ այդ  
մեղօտի յարաբերութենէդ չզաւրիս, ուրիշ բան չեմ  
կարող ընել՝ բայց եթէ վստուած աղաչել որ զքեզ  
դարձի բերէ, յուսամ որ իմ ջերմ աղօթքներս մտիկ  
կ'ընէ նա. Ատեն ատեն ժամկոչը կը զրկեմ՝ քեզի  
տեղեկանալու համար թէ տարբերութիւն մը կը տես-  
նես թէ ոչ, եթէ տարբերութիւն մ'ըլլայ՝ աւելի առջև  
կ'երթանք, և կրնամ զքեզ արձակել:

— Քաւ լիցի, տէր հայր, տունը մարդ մի զրկեր,



վան զի էրիկս այնչափ նախանձոտ է որ եթէ այդ բանը տեսնէ՝ պիտի կարծէ թէ գէշութեան համար կու գայ, ու զիս աւելի պիտի չարչրէ, արդէն զիս կը տապկէ:

— Հոգ մի բներ, տիկին, գործը անանկ կը կարգադրեմ որ բերանը չբանար նա:

— Ս.յգ պայմանով, վրայ բերաւ ապաշխարուհին, հաճութեամբ կ'ընդունիմ:

Խոստովանանքը լինելէն ետքը՝ տիկինը ոտք ելաւ ու պատարագը մտիկ ըրաւ: Պարոն խոստովանահայրը իր փիլոնը հանեց ու տունը վերագարծաւ սիրտը վրէժխնդութեամբ և անհամբերութեամբ լի, որպէս զի իր կիներ սիրող քահանայն ձեռք ձգէ անդամ մը: Գեղանի վարպետորդին տունը դառնալուն՝ էրկանը դէմքէն գիւրաւ հասկըցաւ որ փուշի վրայ էր նա. հետք խօսք չէր ըլլար՝ թէ և ձեռքէն եկածին չափ կ'աշխատէր յայտնի չընել: Երկրորդ գիշերը նախանձոտը միտքը դրաւ իր տան գրանքով խցիկի մը մէջ պահուրեւով՝ պահպանութիւն ընել, տեսնելու համար թէ՛ քահանայն պիտի գայ. անոր համար իր կնոջը բաւ որ նոյն գիշերը բարեկամի մը տունը պիտի ընթրէ ու ճաշէ, և թէ կ'աղաչէ որ դռները, պատուհանները, սանդուխին՝ և մանաւանդ իր ննջարանին դռները դոյ պահէ. իսկ փողոցի դուռը՝ ինքը դուրսէն կ'զգեւրով բանալիները հետք պիտի տանէր:

Տիկինը տեսնելով որ գործը իր ուղած ճամբան կը մտնէր, հաղորդակցութեան ծակը երթալու յարմար վայրկեանը դռներով պէտք եղած նշանը տուաւ, Ֆիլիպ մտեցաւ անտիջապէս ծակին՝ ու տիկինը նոյն առաւօտ ըրածը պատմեց անոր ու յետոյ իր ամուսնոյն ուրիշտեղ ընթրելու ու պառկելու սուտը խմբողներով աւելցուց թէ ինքը անով չէր խարուած և թէ ընդհակառակը ապահով էր թէ նա տունէն շատ պիտի չհեռանայ:

— Իսոյ հոգ չէ, բաւ, քանի որ փողոցին դրանքով պիտի ըլլայ բոլոր գիշերը, սիրելի բարեկամ, աշխատէ տանիքին վրայ ելնելով տամայիէն

(պաճա) հոս դարու մութը կոխածին պէս, բայց նայէ որ տանիքէն վար չբերիս:

— Մի վախնար, սիրուհիս, պատասխանեց երիտասարդը ինքնամուռ, տանիքը այնչափ ցից չէ:

Գիշերը նախանձոտը մնաս բարե բսելով մեկնեցաւ, ու ոտքէն մինչև գլուխ զինուած՝ գնաց դրանք քովի խցիկը պահուրեւեցաւ, իր կողմէ տիկինն ալ իր դուռը լաւ մը փակել ձեացուց, և սանդուխն դուռը իրօք լաւ մը փակել ձեացուց, որպէս զի էրիկը չկրնայ վեր ելնել, ու յետոյ տամայիէն Ֆիլիպը ներս առնելով անոր հետ իր էրկան եղջիւրէ պսակ մը շինեց մինչև առտու, և կը հաւտացընեմ զձեզ որ մեծ ցաւով իրարմէ բաժնուելու և գործելէ դադրելու ստիպուեցան:

Նախանձոտը, ինչպէս որ բսինք, ոտքէն մինչև գլուխ զինուած՝ բարկութենէն, ցուրտէն և անօթութենէն կը դողար, վան զի մոռցանք բսելու թէ այնչափ կատղած էր նա՝ որ առանց ընթրելու խցիկին մէջ պահուրեւեր էր քահանային գալուտը սպասելու ու դռն բռնելու համար: Լոյս դէմ՝ քանի մը ժամ հոն քնանալէն վերջը խեղճ մարդը դուռը բանալով՝ դուրսէն գալ ձեացուց, ու իրիկունն ալ ժամկոչը իբր թէ խոստովանահօր կողմէն գալով՝ կնոջ հարցուց թէ քահանան եկած է: Կինը որ գործը լաւ հասկըցած էր, պատասխանեց թէ եկած չէր նա և եթէ խոստովանահայրը հաճէր իր աղօթքները շարունակել ժամանակ մը ևս՝ պիտի կարենար մոռնալ այն անձը, որու համար տակաւին քիչ մը համակրութիւն ունէր: Սնհաւատալի կերևայ, բայց ճշմարիտ է որ նախանձոտը իր կիրքէն կուրացած շարաթներով պահանջորդութիւն ըրաւ դռան քով քահանան բռնելու համար, աւելորդ է բսել նաև որ իր կինը անոր բացակայութիւններէն օգուտ քաղելով՝ իր սիրահարին հետ արդիւուած պտուղը շատ անգամ ճաշակեց և նախանձոտ մը խափելու հաճոյքին վրայ խօսեցաւ անոր հետ:

Վերջապէս էրիկը այս անարդիւն խնջէնքէն ձանձրացած ու իր կնոջը անհաւատարմութիւնը ստուգելու յոյսը կորսնցուցած՝ միանգամայն չկրնալով իր նա-



խանձի զգացումները պահել, որոշեց անոր հարցքները թէ իր խոստովանահօրը ինչ բաժն էր ո՞ր ամեն օր ժամ կոչը կը դրկէր նա: Տիկինը պատասխանեց թէ ատ բանը իրեն հասկըցընելու պարտաւոր չէր: Երեկը դարձեալ պնդեց, բայց տեսնելով որ անօգուտ էր,

— Դրուժան զքեզ, աւելցուց մոլեգին. դուն չբասած՝ ես խոստովանութիւնդ գիտեմ և անպատճառ կ'ուզեմ ճանչնալ այն ժպիւրհ քահանան որ իր հմայքովը կու գար հետդ կը պառկէր և որու դու այնքան սիրահարուած ես. անոր անունը բսէ ինձի թէ ոչ կը խղզեմ զքեզ:

Այն ատեն կինը քահանայի մը սիրահարուած բլլալը ուրացաւ:

— Ի՞նչպէս կ'ուրանաս, թշուառական, միթէ Ծնունդին օրը զքեզ խոստովանեցընող քահանային դուն չբսիր որ քահանայ մը կը սիրես և թէ անիկա գրեթէ ամեն գիշեր կու գար հետդ կը պառկէր իմ քուն մտած ատենս, ուրացիր նայիմ:

— Ձեմ ուրանար ամենեւին, պատասխանեց տիկինը, բայց, խնդրեմ, բարկութիւնդ զսպէ քիչ մը որպէս զի ամեն բան իմանաս: Միթէ կարելի է, յաւելցուց նա ժպտելով, որ ինձի պէս պարզմիտ կին մը քեզի պէս արթուն մարդու մը քիթէն կարենայ բռնել: Չարմանալին ան է որ առանց պատճառը գիտնալու ինքզինքդ նախանձու մտանելէդ 'ի վեր՝ աւելի անխոհեմ եղած ես: Միթէ իրօք կը կարծես թէ քու մտային կուրուժեանդ չափ ես ալ մարմնային կուրուժիւն ունիմ՝ քանի մ'ատենէ 'ի վեր: Կը սխալիս, ես այնքան լաւ ու պայծառ կը տեսնեմ որ վերջին անգամ զիս խոստովանեցընող քահանան շատ աղէկ ճանչցայ: Այո՛, տեսայ որ անձամբ դուն էիր, բայց զքեզ քու հետաքրքիր նախանձէդ բուժելու համար, փնտռածդ գտնել տալ ուզեցի և յաջողեցայ. սակայն եթէ քիչ մը խելացի բլլայիր, եթէ զքեզ տանջող այդ սոսկալի նախանձով ատենօք ունեցած խելացութիւնդ կորսնցուցած չբլլայիր. կնոջդ վրայ այդքան գէշ կարծիք պիտի չունենայիր և զգայիր թէ խոստովանուելու ատեն

քսածները իրաւ էին և ինքն ալ անհաւատարիմ չէր: Խոստովանանքի ատեն քեզի բսիր որ քահանայ մը կը սիրէի և իրօք՝ միթէ նոյն միջոցին քահանայ մը չէիր: Աւելցուցի թէ այդ քահանան հետս պառկելու ուզած ատեն իրեն համար ամեն դռները կը բացուէին և քստուգիւ ո՞ր դռուք դոց կը գտնէիր երբ քովս պառկելու կու գայիր: Ըսի նաև թէ յիշեալ քահանան ամեն գիշեր հետս կը պառկէր և ճիշդ է, ո՞ր գիշեր քովս պառկած չես, և երբ վերջին օրերը քովս չէիր պառկեր և քու կարծեցեալ ժամկոչը կը դրկէիր՝ անոր կը պատասխանէի թէ քահանան եկած չէ: Հիմակ բսէ նայիմ, միթէ այս բսածներուս միտքը հասկընալ այդքան դժուարին էր. միայն նախանձէն ապուշ դարձած մարդը կրնար խաբուել: Եւ արդարև միթէ ապուշութիւն չէ գիշերները դրան քով պահպանութիւն բնելով լուսցընելը. իբր ինձ կլլեցընելով՝ թէ ուրիշ տուն հիւր էիր: Ասկէ ետքը այս անօգուտ աշխատանքները մի առնուր, խելքդ գլուխդ ժողվէ, առաջուան կասկածները ու նախանձդ մէկ դի բրէ ու քու խենդութիւնդ հասկըցողներուն խաղալիք մի բլլար: Հաւատա որ եթէ զքեզ խաբելու կամք ունենայի ու քեզի հետ վարուէի այնպէս, ինչպէս որ կը վայելէ քեզի նման նախանձոտի մը, եթէ հարկւր աչք անգամ ունենայիր չէիր կրնար տեսնել ու զիս արդիւնէլ: Այո՛, բարեկամ, քեզի կրնայի կաւատի տամուհինդ բորդ պատուանչանք տալ, առանց ամենափոքր կասկած մը տալու, հեռեաքար անօգուտ զգուշութիւններդ վերցուր, որոնք թէ կնոջդ և թէ քեզի համար ամօթ են:

Չարամիտ նախանձոտը՝ որ վարպետութեամբ մ'իր կնոջ գաղտնիքը իմացած բլլալ կը կարծէր, այսպէս խայտառակուելով՝ պատասխան մը չկրցաւ տալ: Խաբուած բլլալուն համար Աստուծոյ փառք տուաւ, ու իր կինը երբև առաքինութեան և իմաստութեան օրիւնակ նկատելով՝ նախանձոտ բլլալէ դադրեցաւ ճիշդ այն կէտին ուր նախանձելու պատճառ ունէր, այս փոփոխութիւնը տիկնոջ աւելի ազատութիւն տալով՝ ալ պէտք



չունեցաւ նա իր սիրականք կատուի պէս տանիք-  
ներու վրայէ անցընելու, և քիչ մ'զգուշութեամբ կ'ըն-  
դունէր զայն ու հարիւրապատիկ կերպով իր վրէժք  
կը լուծէր:



ԱՐԲԵՍՈՒՆԻՒՆ ԳԳԱԿԸ

Լուսարտալայի մէջ իր սրբութեամբ համբաւաւոր  
կոյսերու վանք մը կար, ուր իրքե կոյս մտած էր Ի-  
զապօ անունով ազջիկ մը՝ որու գեղեցկութիւնը ու  
առողջութիւնը զինքը բնականօրէն աշխարհային կեան-  
քի համար ստեղծած էին. բայց բարեպաշտութիւնը  
մղած էր զինքը կուսական քօյն առնելու, առանց յա-  
ւաճուց լաւ մը խորհելու թէ՛ պիտի կարենա՞ր իր կու-  
սութեան ուխտը պահել բնական պէտքերուն գիմադրե-  
լով: Փորձք և դէպքերը հակառակը հաստատեցին: Օր  
մը իր ազգականներէն մէկը բարեկամի մը հետ զինքը  
տեսնելու եկաւ վանքը: Այս բարեկամը երիտասարդ ու  
շատ գեղեցիկ էր:

Մեր գեղանի կոյսը զանի տեսաւ ու այն վայրկե-  
սէ՛ ի վեր սաստիկ սիրահարեցաւ անոր. նոյն օրինակ  
համակրութիւն մ'ալ երիտասարդը իրեն համար զգաց  
ու ինչպէս որ Իզապօ զինքը հաւնէր էր, ինքն ալ ա-  
նոր հաւնած ըլլալով՝ անզսպելի միտում մ'զգաց դէպ  
ի անոր. սակայն երկար ատեն այս երկու սիրահար-  
ները իրենց փոխադարձ սէրէն ուրիշ պտուղ մը չբա-  
ղեցին, բայց եթէ տասնապանք ու զրկում:

Բայց որովհետեւ երկուքին ալ խելքն ու միտքը  
զիրար տեսնելու և միայն իրենց ցանկութեան յագուրդ  
տալու հնարք մը գտնելու ետեւէ էին. երիտասարդը ա-  
ւելի ճարպիկ գտնուելով՝ իր սիրուհին խցիկը մտնե-

լու ապահով միջոց մը գտաւ, որով երկուքն ալ ի-  
րենց երկար համբերութեան փոխարէն սիրոյ հեշտու-  
թիւնները վայելեցին անարգել: Բայց նախանձու բաղ-  
դը իրենց այս երջանկութիւնը երևան հանեց: Իզապօ  
շատ գեղեցիկ ու իր սիրականք խիստ շնորհքով ըլլա-  
լուն միւս կոյսերուն նախանձը շարժեցաւ: Շատերը Ի-  
զապօի վրայ հսկելով՝ իր յարաբերութեան վրայ կաս-  
կածեցան, ու շարունակ զանի կը լրտեսէին: Ի մէջ այ-  
լոց, գիշեր մը, հաւատուհի մը տեսաւ որ սիրահար  
պարօնն Իզապօի սենեկէն դուրս կ'ենէր գաղտուկ՝ և  
իր այս գիւտը միւս հաւատուհիներու հազորդեց նա,  
որոնք իրենց բնկերուհին ուղեցին արքատուհին մատ-  
նել: Այս արքատուհին իր ձագուկներու ու զինքը ճանչ-  
ցողներու առջև ամենասուրբ ու ամենաբարի կնոջ մը  
համարումն ունէր: Հաւատուհիներըս ուս չեղնելու հա-  
մար՝ և որպէս զի Իզապօ չկարենայ ճշմարտութիւնը ու-  
րանալ, խօսք ըրին արքատուհին իմաց տալ անանկ ա-  
տեն մը, որ ասիկա զանոնք մէկտեղ պառկած գտնէ:  
Այս յատակադիժք շինելէ ետքը հաւատուհիները սկսան  
լրտեսել, դռնէն ականջ դնել խեղճ Իզապօն բռնելու  
համար և իրիկուն մը որ իր սիրահարը ներս առած էր  
նա, մասնաու պահանջողութիւնները տեսան զանի, բայց  
ձայն չհանեցին ու թողուցին որ իրենց գործը տեսնեն.  
յետոյ երկու մասի բաժնուեցան, կէսը Իզապօի դրան  
առջևը սպասեց և միւսները Արքատուհին վազելով՝  
դուռը ձեռք առին:

—Աղէ, տիկին, հասիր, թռչունը վանդակին մէջ  
բռնեցինք, Իզապօ քոյրերնիս իր սենեակը մարդ մ'ա-  
ռած է:

Այս աղմուկին ու ձայներուն վրայ՝ արքատուհին զար-  
հուրած և վախնալով որ հաւատուհիները իրենց ե-  
ռանդէն մղուած՝ իր դուռը կտարելով չտեսնեն այն  
քահանան որ իր անկողնոյն մէջ առած էր, և զոր  
մտտուկի մը մէջ պահած միշտ վանքը կը մոցընէր, ոտք  
ելաւ աճապարանօք, աղէկ գէշ վրան հաղուեցաւ, ու  
իր կուսական քողը գլուխը դնել կարծելով՝ նոյն քա-  
հանային վարտիքը գլուխն անցուց: Այս խայտառակ



հագուստով, զոր կոյսերը շատ զբաղած բլրալուն ճշմարտեցին, արբասուհին սկսաւ պոռալ, — Ատ անիծեալ աղջիկը ո՞ւր է նայիմ, Աստուծո՞ւմէ չվախցող ստտանային տա ձագը —: Ամենը մէկէն դրան առջևը հասան ու զայն կտորելով ներս մտան ու երկու սիրահարները դտան այն վիճակի մէջ ուր կը գտնուէին մեր բարի նախահայրերը Ադամն ու Եւան, օձին խրատը մտիկ բնէն վերջը:

Չարմանքը, չփոթութիւնը և ամօթը անոնց ձեռքերն ու լեզուն կապեր էին. բայց կատաղի հաւատուհիները իրենց Իզապօ քոյրը հագուեցուցին շուտ մ'ու ժողովաբան տարին: Երիտասարդը խցիկին մէջ մինակ մնաց և այս արկածին վերջը սպասեց, միաքբ դնելով որ և թէ կարելի է, քանի մ'ատենէ ետքը Իզապօ քոյրը գողնալով միասին վախչին:

Արբասուհին ժողովարանը համներով իր ամուսին վրայ կը բազմէ, ամեն հաւատուհիները հոն էին, աչքերնին Իզապօի վրայ սեւեռած: Արբասուհին իր յանդիմանական ճառը սկսաւ, զայն ամենէ կծու նախատինքներով քամահրեց և իրրև ուխտադրուժ կոյս զայն պեղծ անուանեց իր գարշելի գործերով վանքին սրբութեան համբաւը արատաւորելուն համար:

Իզապօ՝ սլաղանձուն կը մնայ բնականօրէն ու ամօթէն աչքերը վեր վերցընելու չհամարձակիր, այնպէս որ նոյն իսկ իր թշնամիներու գութը կը շարժէ: Արբասուհին իր նախատինքները կը շարունակէ այն աստիճանի որ Իզապօ՝ համբերութիւնը հատած՝ համարձակութիւն կ'առնէ աչքերը քիչ մը վեր վերցընելու ու անգամ մը արբասուհին նայելու և կը տեսնէ որ քահանային վարտիքը անոր գլխին երկու կողմերէն կը կախուի: Այս տեսարանը գինքը բոլորովին կը քաջալեզէ և հազիւ խնդուքը բռնելով՝

— Տիկին, կ'ըսէ անոր, Աստուած օգնական, ուղած դըսէ ինձի, բայց խնդրեմ գդակդ շտկէ:  
 Արբասուհին որ այս խօսքէն բան մը չհասկընար.  
 — Ինչի՞ գդակ, լիբը աղջիկ, կ'ըսէ, դեռ ծագրելու երես ունիս, միթէ բրածդ խնդալու բան կը կարծես:

— Տիկին, դարձեալ կ'ըսեմ, ուղած դըսէ ինձի, բայց խնդրեմ գդակդ շտկէ:

Այս տարօրինակ աղաչանքը որ տարբեր եղանակաւ մը եղեր էր, ամենուն ակնարկը անոր վրայ դարձուց և նոյն իսկ արբասուհին տախտուեցաւ ձեռքը գլուխը տանելու: Ան ատեն հասկցուեցաւ թէ ինչու ան կերպով խօսեր էր ուխտադրուժ կոյսը: Արբասուհին լեզապատառ եղած, և զգալով որ պատրուակ մը գըտնել անկարելի էր, լեզուն փոխեց ու իր յանդիմանութիւնները վերջացուց, ցուցունելով թէ ինչ դժուար բան էր շարունակ մարմնային բաներու դէմ դնելը: Իր խօսքը՝ սկսած ատեն որչափ խիստ եղած էր, այնքան մեղմացաւ ետքը և հրաման տուաւ իր ձագուկներուն գաղտնի զուարճանալու առիթներէն օգուտ քաղել: Իզապօի ալ ներում չտրհեց՝ ու իր սենեակը քաշուելով զղջաց որ իր աչքի գերանը չտեսած՝ ուրիշին աչքին չլուզը տեսեր և այնպէս խայտառակուեր էր:

---

ԱՐԲԱՅՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

Հսած եմ որ ժամանակաւ Սէն—Բրանգաս վանքին մօտ՝ բարի և հարուստ մարդ մը կը բնակէր Ռէնիէրի անունով: Այս մարդը ինքզինքը ամենէ ծայրայեղ ջերմեամանդութեան մը տուած բլրալուն՝ Սան—Ֆրանչիսկոյի կարդին մէջ մտած էր: Իրրև բնտանիք՝ մինակ կին մը ու ծառայ մ'ունենալուն և իր նիւթական վիճակը գոհացուցիչ բլրալուն համար՝ ինքզինքը հոգևոր կրթութեանց տալու առատօրէն ժամանակ ունէր, ուստի եկեղեցիէն դուրս չէր ելներ, և որովհետև տգէտ ու խիստ պարզմիտ էր, իր բոլոր ջերմեամանդութիւնը «Հայր



մերոնք բռնելու, քարոզ ու պատարագ մտիկ ընելու վրայ կը կայանար, չմոռնամ բսելու որ ամեն օր ալ պահք կը բռնէր: Իր Իզապէլ անուն՝ սիրուն ու գիրուկ իկնր որ գեռ երեսուն տարու չկար՝ իր էրկան շերմեռանդութենէն գոհ չէր ամենեկին, վասն զի ստիպուած էր քիչ մ'երկար ճոմապահուածիւններ բնել, որոնք նոյն տարիքին մէջ գտնուող կիներու համար անտանելի են: Երբ նա վայրկեան մը իր էրկան հետը անցընել կ'ուզէր, բարեպաշտ մարդը միակ հայր թորոսի քարոզներուն, խաւարումի ողբին՝ կամ ասոնց նման բաներու խօսքը կ'ընէր, որոնք տիկնոջ հաշուին չէին դար բնաւ:

Ան ատենները Սէն—Բրանդասի միաբաններէն մէկը՝ Բարիզէն վերագարծաւ. այս վանականը որ երիտասարդ, աղւորկեկ, գիտուն ու արթուն մէկն էր, եղբայր Ռէնիէրի հետը ծանօթանալով՝ քիչ ատենէն այս երկուքը սերտ բարեկամութեամբ մը կապուեցան, վասն զի վանականը միւսին կրօնական ամեն տարակոյսները կը փարատէր անոր բոլոր հարցումներուն պատասխանելով, հաւատոյ խորհուրդները բացատրելով և այլն: Այս բարեկամութիւնը կամաց կամաց աւելնալով՝ մեր բարեպաշտ բարեկամը սկսաւ զանի տունը տանիլ, երբեմն երբեմն անոր շիշ մը լաւ գինի կը հրամցընէր և այլն: Իզապէլ շատ սիրով կ'ընդունէր զանի իր էրկանը սիրոյն համար: Վանականը այցելութեանց միջոցին կը զարմանար այս կնոջ թարմութեան ու գիրութեան վրայ և շատ չգնաց հասկըցաւ որ նա շատ գոհ պէտք չէր ըլլալ իր ամուսնական կեանքէն . . . կամ ընդհանուր ճոմապահութենէն. ուստի իբր ողորմած մարդ՝ ուղեց ատոր դարման տանիլ և պակասը լեցընել: Գործը դժուարին՝ բայց անկարելի չէր երևեր իրեն. Առին մը անոր հետ աչք—ունքով խօսեցաւ այնքան վարպետութեամբ որ իր զգացածը կնոջ ալ զգացընելու յաջողեցաւ: Ատոր վրայ լաւ մը ապահովցածին պէս՝ անոր հետ առանձին խօսելու առիթը գտաւ ու ազաչեց որ իր սիրոյն պատասխանէ: Իր ուղածը իրեն շնորհելու տրամադիր գտաւ զան. բայց գէշն ան էր որ՝ տունէն

դուրս ժամադիր ըլլալ չէր ուզեր նա վրան խօսք չըրելու համար, և գործը հոն տեսնելն ալ անկարելի էր, վասն զի Ռէնիէրի եղբայրը դուրս չէր ելներ գրեթէ: Ուստի խեղճ վանականը՝ թէև մէկ կողմէ կնոջ իր սիրոյն նկատմամբ անզգայ չգտնելուն ուրախ՝ բայց միւս կողմէ ալ զան գգուել չկարենալուն համար ախոր և յուսահատ էր ու այս վիճակէն ինչպէս ելնելիքը չէր գիտեր: Վանականները իրենց շահերուն համար ճարգիտեր: Վանականները իրենց շահերը անտակուպիկ են սակայն՝ մանաւանդ երբ ինչորիսակ հնարք թեան վրայ է. մեր վանականն ալ տարօրինակ հնարք մը մտածեց որ իրօք եկեղեցականի մը արժանի էր:

Ահա ինչ սատանայական ճամբայ բռնեց իր սիրուհին վայելելու համար նոյն իսկ անոր տան մէջ և էրկանը աչքին տակ առանց անոր ամենապզտի կասկած մը տալու: Օր մը՝ որ անբան բարեպաշտօնին հետ կը պտըտէր,

—Քաջ կը տեսնեմ, սիրելի Ռէնիէրի, որ ուրիշ մը տածում չունիս, քսաւ, բայց եթէ հոգւոյդ փրկութիւնը. և զքեզ շատ կը գովեմ ատոր համար, բայց երկար ու դժուարին ճամբայ մ'է բռնածդ: Սրբազան Պապը, կարտինալները և առաջնորդները աւելի հեշտ ու կարճ ճամբայ մ'ունին, բայց չեն ուզեր զայն հաւատացեալներուն սորվեցընել, վասն զի այն կրնայ միտաւ կրօնաւորներուն՝ որոնք՝ ինչպէս որ գիտես արդէն, միայն ողորմութեամբ կ'ապրին: Եթէ մասնաւորները զայն գիտնային՝ ալ քահանայի արհեստը ստակ մը չէր ընէր ու մենք ալ անօթութենէ կը մեռնէինք: Բայց որովհետև դուն իմ բարեկամն ես ալ կ'ուզեմ ըրած քաղաքավարութեանցդ փոխարէն ես ալ կ'ուզեմ քեզի բան մ'ընելով՝ իմ երախտագիտութիւնս յայտնել, զայն շատ սիրով կը սորվեցընեմ քեզի եթէ ապահով ըլլամ որ մարդու բան մը չես բեր:

Եղբայր Ռէնիէրի, այս աղւոր գաղտնիքը իմանալու սաստիկ անհամբեր ըլլալուն՝ ստիպեց իր բարեկամն զայն իրեն սորվեցընելու, ամենէն ուղիական բանին վրայ երգում ընելով որ մէկու մը չյայտներ զայն:

—Այդ պայմանով քենէ բան մը չեմ պահեր. պա.



տախաննեց տէր Յէլիէ, գիտնաս ուրեմն, բարեկամդ իմ, որ երանելեաց աշխարհքք հասնելու ամենէ կարճ ու անվրիպելի ճամբան՝ բաս եկեղեցւոյ սուրբ Հայրապետաց, իմ քեղի բսելիք ապաշխարութիւնն բննն է: Մի կարծեր սակայն որ այս ապաշխարութիւնք բրածիգ պէս՝ մեղաւոր բլլալէ կը դադրիս, մարդս քանի որ աս աշխարհքիս երեսք կը գտնուի՝ մեղք կը գործէ, բայց կրնաս ապահով բլլալ որ մինչև ապաշխարութեանդ ժամը բոլոր բրած մեղքերդ պիտի ներուին, և անկէ ետև բնելիքներդ ալ միայն ներելի մեղքեր պիտի համարուին, հետևաբար՝ զքեզ չեն կրնար դժոխապարտ բնել և քիչ մը մատուցի ջուր կը բառէ զանոնք սբրբելու: Ուստի այս փրկաւէտ ապաշխարանքք բնելու համար՝ խղճի մտօք խոստովանուելու է նախ՝ յետոյ պահք և քառասուն օր ալ ժուժկալութիւն, յորում՝ ոչ միայն ուրիշի կնիկին բան մը պիտի չընես այլ քու կնիկիդ անգամ: Ասկէ զատ տանդ մէջ անանկ սենեակ մ'ունենալ պէտք ես ուրկէ կարենաս գիշերք երկինքք տեսնել: Երեկոյեան ժամերգութենէ ետքք հոն կը մտնես և լայն ու բարձրիկ սեղան մը կը դնես, այն կերպով որ կարենաս մէջքդ կռթնցքնել անոր ոտքերդ գետինք դրած: Կունակդ այդ սեղանին վրայ պտուկեցքնելէ վերջը՝ թեկերդ խաչաձև կը տարածես ու աչքերդ երկինք բւեռած մինչև առտու այնպէս կը մնաս առանց տեղէդ շարժելու: Եթէ գրող կարգացող բլլայիր քեզի աղօթքներ կը սորվեցքնէի բերնուց, բայց որովհետև կարդալ չես գիտեր բաւական է որ երեք հարիւր հայր մեր և երեք հարիւր ողջոյն Մարիամ բսես ի պատիւ Սուրբ Երրորդութեան: Աստղերը նայելով՝ միշտ կը յիշես որ երկինքն ու երկիրք Աստուած ատերժեց և ձեռքերդ միշտ խաչաձև տարածուած ունենալով՝ Տեառն մերոյ Փրկչին չարչարանացը վրայ խորհելու հոգ կը տանիս: Առաւօտեայ առաջին կոչնակը լսածիդ պէս՝ այդ ապաշխարական տեղէն երնելով՝ կըրնաս յոգնութիւն առնելու համար անկողինդ մտնել: յետոյ պիտի աշխատիս դարձեալ յիսուն հայր մեր և նոյնքան ողջոյն Մարիամ բսել ու անկէ ետև եթէ ժա-

մանակ ունիս գործերուդ ետևէն կ'ըլլաս: Կէսօրուան կերակուրէդ վերջք անպատճառ երեկոյեան ժամերգութեան պիտի երթաս, հոն շատ մը աղօթքք ընես, թէ ոչ բոլոր բրածներդ պարապք կ'երթան՝ ու անկէ վերադառնալով ապաշխարանքդ կ'սկսիս վերստին մինչև քառասուն օր: Այս ամենք ես բրի ժամանակաւ ու եթէ դուն ալ զանոնք ընելու կարողութիւնք կ'զգաս, կրնամ զքեզ ապահովցքնել որ քառասուն օրք չլրացած՝ յաւիտենական երանութեան ճաշակը պիտի զգաս ինչպէս որ ես ալ զգացի:

— Բանի շնորհատարտ եմ քեզ, հայր իմ պատուական, պատասխանեց Րէնիէրի, այդ բսած բաներուդ համար, որոնց մէջ մեծ դժուարութիւն մը և երկարութիւն մը չեմ տեսներ: Եկող կիրակի, Աստուծոյ շնորհքով, կը յուսամ այդ փրկաւէտ ապաշխարանքին սկսիլ: Եւ կրկին ու կրկին շնորհակալ բլլալով՝ անորմէ բաժնուեցաւ:

Րէնիէրի տունք երթալուն պէս՝ ամեն բան պատմեց իր կնոջք, որ իրեն պէս միամիտ չըլլալուն՝ հասկըցաւ որ վանականին մէկ վարպետութիւնն էր այն՝ հետք առանձին մնալու առիթք գտնելու համար: Այս հնարքք լաւդ տաւ նա՝ և ապուշ բարեպաշտի մը մտքին յարմար. ուստի էրկինք բսաւ որ շատ դոճ էր անթաւամ պտակին արժանանալու համար բնելիք յառաջադիմութենէն՝ և թէ ինքն ալ անոր ապաշխարանքին մասնաւոր կից բլլալու համար կ'ուզէր հետք պահք բռնել առ այժմ, մինչև որ յետոյ ինքն ալ նոյնք բնէ:

Հետեւեալ կիրակին, եղբայր Րէնիէրի իր ապաշխարութիւնք սկսաւ և հայր Յէլիէ կնոջ հետ համաձայնելով՝ անոր քով գնաց զուարճանալու այն միջոցին՝ որ էրիկ պարոնք հայեցողութեան մէջ էր: Մեր բարի վանականք ամեն գիշեր կու գար ապաշխարողն իր ապաշխարանքք սկսելէն մէկ վայրկեան ետքք: Շատ ունգամ անկողին չմտած՝ իր սիրուհին հետ կ'ընթրէր ու լուսնալու մօտ կը մեկնէր:

Եղբայր Րէնիէրի ապաշխարանքի սենեակը իր կնոջ ննջարանէն մինակ բարակ պատով մը զատուած բլլա-



լուն՝ պատահեցաւ որ գիշեր մը անառակ վարդապե-  
տը սովորականէն աւելի տրփտա գտնուելով ու իր գըռ-  
գըռութիւնը չկրնարով զսպել, տիկնոջ թեւերուն մէջ ա-  
նանկ կ'երերար ու կը տատանէր որ անկողինը ձայն  
կու տար և տախտակամածը կը շարժէր :

Եղբայր Բէնիէրի որ ջերմ եռանդով իր աղօթքնե-  
րը կը փսրտար, զարմանալով այս երկրաշարժին վրայ՝  
իր ապաշխարութիւնը բնդմիջեց ու առանց տեղէն շար-  
ժելու կնոջը հարցուց թէ ինչո՞ւ այդպէս կ'օրօրուէր իր  
անկողինն մէջ : Բարի կիմն որ զուարթ բնութիւն մ'ու-  
նէր, և որ այս միջոցին սանձարձակ կ'արշաւէր, անոր  
պատասխանեց թէ ձեռքէն եկածին չափ կ'երերար :

— Եւ ինչո՞ւ կ'երերաս, աւելցուց էրիկը, առ շար-  
ժումները ի՞նչ կը նշանակեն :

— Ի՞նչն առ հարցումը ի՞նչպէս կրնաս ընել ինձի,  
պատասխանեց կինը բոլոր սրտովը խնդարով՝ և իրօք  
ալ խնդարու շատ իրաւունք ունենալով, միթէ դուն իսկ  
հաղար անգամ բսած չես ինձի որ մարդ երբ ծով կը  
պահէ քունը չտանիր և բոլոր գիշերը կը դողդղայ :

Խեղճ մարդը իրաւ հաւտաց թէ իր սիրելի կողա-  
կիցը ծոմապահութենէ քունը վրդոված՝ անկողինն մէջ  
կը շարժէր, ուստի՝

— Հապա ես քեզի չբսի որ ծով չբռնես, վրայ բե-  
րաւ խկոյն, բայց քանի որ ծովը բռնեցիր նայէ որ քը-  
նանաս, վասն զի անկողինդ անանկ կը շարժես որ բո-  
լոր տունը կը դողայ :

— Ի՞նչն հոգի մի՞ ըներ, սիրելի էրիկ, ես բրածո  
գիտեմ, դու քու բանդ նայէ և թող որ ես իմն նա-  
լիմ :


Եղբայր Բէնիէրի ալ բան մը չբսաւ ու իր հայր մերը  
շարունակեց :

Սակայն մեր սիրահարները ապաշխարողին այսքան  
մտախի գտնուիլ չուզելով՝ անոր աղօթարանէն հեռի  
խցիկ մը փնտռեցին : Տիկինը իր անկողինը հոն գնել  
տուաւ և վստահանին հետ պատուական ժամեր ան-  
ցուց : Առտուան մտա ափ մեկնելուն պէս՝ Իզապէլ իր  
սովորական անկողինը կ'երթար ուր եղբայր Բէնիէրի ա-

կու դար իր դժուար ապաշխարութիւնը բնելէն վերջը՝  
Իործք քառասուն օր այսպէս տեւեց և Իզապէլ շատ  
անգամ՝ կ'ըսէր հայր Ֆէլիչէին .

— Տէր հայր, զարմանալի չէ՞ որ էրիկիս ապաշխա-  
րութիւն ընել կու տաս և արքայութեան աննման հեշ-  
տութիւնը վայելել մեզի կը պահես :

Եւ իրօք մինչդեռ եղբայր Բէնիէրի իր խիստ ապաշ-  
խարութիւնով արքայութիւն մտնել կը կարծէր, անոր  
ճամբան սորվեցնող վարդապետն ու իր կինը հոն կը  
մտնէին :



ՍՈՂՈՄՈՆԻՆ ԽՐԵՏՆԵՐԸ

Սողոմոն թագաւորին հրաշալի իմաստութիւնը բոլոր  
աշխարհք տարածուեր էր, ու ամեն մարդ գիտնալով  
որ նա իր խոհեմ խորհուրդները չէր զլանար իրեն գի-  
մողներուն, աշխարհիս չորս կողմէն կու գային շիթ  
ու կարևոր գործերու վրայ իրմէ խրատ առնելու :

Անգամ մը Լայածօ քաղաքէն Մելիս անունով ազ-  
նուական մը ճամբայ ելաւ զանի տեսնելու՝ ու ճամբան  
հանդիպեցաւ ուրիշ Յովսէփ անուն երիտասարդի մը՝  
որ նոյն նպատակով Երուսաղէմ կ'երթար : Մելիս ա-  
նոր մտաենալով՝ հետը ծանօթացաւ, բնտանիքը, հայ-  
րենիքը ու պաշտօնը և ուղևորութեան նպատակը հար-  
ցուց :

Յովսէփ պատասխանեց թէ Սողոմոնին կ'երթար խոր-  
հուրդ հարցնելու իր այլանդակ, անախորժ ու չար  
կնոջը վարմունքին նկատմամբ բռնելիք ընթացքին վը-  
րայ, վասն զի մինչև հիմա ամեն միջոց ձեռք առե-



էր զանի ուղղութեան բերելու, աղաչանքով, արտա-  
նայեօք, դգուանքով, շողքքորթութիւնով. բայց այս  
ամենը օգուտ մը բրած չէր անոր: Յովսէփ ալ բատ  
կարգի նոյն հարցումը Մելիսի բնելով՝ առ ալ պատաս-  
խանեց թէ. — Ես Լայածօ քաղաքէն եմ. ինչպէս որ  
կը տեսնես երեսասարդ, շատ հարուստ, առատաձեռն.  
տունս բաց է ամեն քաղաքակիցներու հիւրընկալու-  
թիւն բնելու և այլն. բայց ես ալ ընդի չափ դժբաղդ  
եմ, սրովհետև ըրած բոլոր ծախքերուս հակառակ՝  
տակաւին ինձի ճշմարիտ բարեկամ մը գտած չեմ:  
Ուստի Սողոմոնին կ'երթամ՝ հասկընալու թէ ինքզինքս  
սիրցնելու համար ինչ պէտք եմ բնել:

Երբ ճամբորդները Երուսաղէմ հասան, երկուքն ալ  
թագաւորին առջև տարուեցան: Նախ Մելիս ներկայա-  
նարով՝ իր պատմութիւնը պատմեց. «Միրէ» պատաս-  
խանեց իրեն Սողոմոն. և այս կարճ պատասխանն առ-  
նելէն վերջը դուրս ելաւ նա:

Ան ատեն Յովսէփը եկաւ իր թշուառութիւնը նկա-  
րագրեց:

— Սաղի կամուրջը դեմ, պատասխանեց Սողոմոն՝  
առանց ուրիշ բան մ'աւելցնելու:

Երկու բարեկամները իրենց ընդունած այս խոր-  
հուրդները իրարու հաղորդելով՝ բան մը չհասկըցան  
ու զանոնք անբուժելի հանելուկներ, կամ անորոշ խօս-  
քեր համարեցին, որոնք իրենց վիճակնուն հետ յարա-  
բերութիւն չունէին բնաւ. կը կարծէին թէ իմաստուն  
թագաւորը զիրենք ծաղրել ուզեր էր. հետևաբար ի-  
րենց ճամբորդութենէն բոլորովին դժգոհ՝ Երուսաղէմէն  
ելնելով՝ իրենց երկիրը վերադառնալու ճամբայ ինկան:

Քանի մ'օր քաղիէն վերջը՝ խորունկ գետի մ'առջև  
հասան, որու վրայ հիւսնալի կամուրջ մը կար. այս մի-  
ջոցին բեռնաւորուած ձիերու և ջորիներու կառապան  
մը կ'անցներ և բոլոր անցքը կը բռնէր. այնպէս որ՝  
երկու ճամբորդները ստիպուեցան սպասել: Ամեն շոր-  
քատանիները անցեր էին ու մինակ խրտչելով ջորի մը  
չէր ուզեր յառաջանալ: Զորեպանք գաւազան մ'առաւ  
ու նախ կ'ամաց մը զարկաւ անոր, բայց ջորին երբեմն

մէկ կողմ, երբեմն միւս կողմը կ'երթար, ու երբեմն  
ալ ետ կը քաշուէր, բայց քայլ մ'առջև չէր երթար:  
Զորեպանք նորէն կը զարն՝ բերիւ կողերուն, գլխին  
ու գաւաղիին, բայց պարագ պեղ:

Յովսէփ ու Մելիս, որոնք այս կենդանիներու անց-  
նելուն կ'սպասէին, կ'ըսէին մեղքընալով.

— Անգութ մարդ, միթէ ջորեդ սպաննել կ'ուզես,  
և չե՞ս կրնար աւելի քաղցրութեամբ վարուիլ, քանի որ  
այդ կերպով աւելի գիւրաւ խօսք մտիկ կ'ընէ:

— Պարոններ, պատասխանեց ջորեպանք, դուք ձեր  
ձիերը կը ճանչնաք, ես ալ իմ ջորիս. ուստի թողու-  
ցէք որ ես իմ գիտցածս ընեմ: Աս ըսելով՝ գաւազա-  
նի հարուածները կրկնապատկեց. ու այնքան ըրաւ որ՝  
վերջապէս ջորին կամուրջին վրայ յառաջացաւ: Այս  
կամուրջէն չանցած Յովսէփ հոն նստող ծերուկի մը  
հարցուց թէ այս տեղին անունը ինչ էր.

— Պարոն, պատասխանեց ծերուկը. Սագերու կա-  
մուրջ կ'ըսուի սաի: Այն ատեն Յովսէփ Սողոմոն իմաս-  
տունին խօսքերը յիշելով՝ — Հիմա կը հասկընամ, ը-  
սաւ իր բարեկամին, Սողոմոնին ինձ տուած խորհուր-  
դին իմաստը և դայն շատ լաւ կը դանեմ, մինչև հի-  
մա կինս լաւ ձեծել չգիտցայ, բայց այս ջորեպանն ին-  
ձի դաս մը տուաւ որմէ օգուտ պիտի քաղեմ:

Երբ երկու ճամբորդները Աստիօք հասան, Յովսէփ  
Մելիսը քանի մ'օր վար դրաւ, որպէս զի նա քիչ մը  
յոգնութիւն առնէ: Յովսէփ շատ լաւ ընդունուեցաւ  
իր կնիկէն՝ որու ապապրեց ճաշ մը պատրաստել իր  
բարեկամին հաճելի եղած կերպով: Մելիս այս քաղա-  
քավարութիւնը ընդունելով՝ իր ուղած կերակուրները  
ապասրեց:

Բայց երեկոյին այդ կերակուրները չպատրաս-  
տուեցան ամենևին և ընթրիքը բոլորովին տարբեր  
ուտելիքներով ներկայացաւ: Յովսէփ իր կնոջը դէմ  
բարկանալով՝

— Միթէ չպատուիրեցի քեզ որ այս ինչ կերակուր-  
ները պատրաստես իրիկուան, պօռայ կնիկին:

— Աս ինչ ըսել է, պատասխանեց կինը դառնօրէն,



ուրիշի տուած հրամաններն ինչո՞ւս են պէտք, ես ուզածս բրի և հողս անգամ չեմ բներ եթէ դուն կերակուրները հաւնիս կամ չհաւնիս:

Մելիս այս կնոջ տուած պատասխանին վրայ զարմանալով՝ չկրցաւ զանի չպարտաւել, բայց Յովսէփ աւելի նեղանալով քան թէ զարմացած բտաւ:

—Կնիկ, զքեզ ձգածիս պէս կը գտնեմ, բայց գիտցած եղիր որ այս անգամ քու բնութիւնդ փոխելու պիտի յաջողիմ:» Յետոյ Մելիսին դառնալով՝

—Բարեկամ, աւելցուց, կեցիր հեզմբ նայիմ, Սողոմոնին խրատը աղէկ է թէ ոչ. կ'աղաչեմ, ներես որ քու առջևդ ի գործ դնեմ զայն՝ առանց զիս արգելելու, յիշելով շորեպանին մեզի տուած պատասխանը, երբ մենք իր շորին կը մեղքընայինք:

—Քու տունդ կը գտնուիմ, պատասխանեց Մելիս, և միտքս դրած եմ՝ քեզի անհաճոյ բան մը չքնել:

Յովսէփ պատուական գաւազան մ'առնելով՝ դնաց սենեակը ուր իր կինը իբր թէ քեննալով՝ քաշուած էր, անոր մազերէն բռնեց գետինը զարկաւ, ու մոլեզին ծեծեց: Կինը նախ պոռաց, յետոյ սպառնացաւ, բայց ոչ ձայները և ոչ սպառնալիքը արդիւնք մը չունենալուն՝ սկսաւ աղաչել, ու ապագային մէջ կատարեալ հնազանդութիւն խոստանալ ու երդնուլ: Աս զղջումներուն հակառակ գաւազանը չարունակ կ'ենէր ու կ'իջնէր անոր գլխին, ուսերուն, ոտքերուն, մտտ և ոսկրուտ տեղերուն հաւասարապէս, մինչև որ յոգնութիւնը այս փառաւոր հանդիսին վերջ տուաւ:

Յովսէփ Մելիսի քով դալով՝ —Նայինք, բտաւ, վաղը ինչ հրաշք պիտի բնէ Սողոմոնին Սաղերու կամուրջը երթալու համար տուած խրատը:

Յետոյ վայրկեան մը յոգնութիւն առնելէն ետքը ձեռքերը լուաց ու սեղանը նստաւ. և քիչ մը ետքն ալ՝ հանգստեան ժամուն՝ դացին տեղերնին պառկեցան:

Գանակոծ կինն ալ կերած ծեծէն ոսկորները կալուղցած անկողին մը մտաւ ու կրցածին չափ քնացաւ: Երկրորդ օրը՝ սուտու կանուխ ելաւ էրիկին քովը դնաց

ու հարցուց թէ ինչ կերակուր կ'ուղէր: Յովսէփ՝ Մելիսի հետ իր տուած դեղին պատուական ներգործութեան վրայ խնդալով՝ ուզածն ապասրեց. ու իրօք սեղանին վրայ ապասրուած կերակուրները գտնուեցան. հետեւաբար երկու բարեկամները միանալով՝ գովեցին այն խորհուրդին իմաստութիւնը՝ զոր նախ չէին հասկըցեր:

Քանի մ'օր ետքը Մելիս ալ իր քաղաքը վերադառնալով՝ Սողոմոնին իրեն տուած պատասխանը խելացի մարդու մը հաղորդեց, որ իրեն պատասխանելով՝

—Սողոմոնն ատկէ լաւագոյն խրատ մը չէր կրնար տալ քեզի, բտաւ, վասն զի դուն ալ գիտես որ աշխարհքի վրայ մէկը չես սիրեր, տուած հանդէսներդ ու զուարճութիւններդ բարեկամութեան արդիւնք չեն, ու զուարճութիւններդ բարեկամութեան արդիւնք չեն, այլ քեզի՝ մինակ քեզի՝ և քու ունայն փառասիրութիւնդ գոհ բնելու համար: Հետեւաբար Սողոմոնին քսածին պէս սիրէ որ սիրուիս և բարեկամ ունենաս:

Եւ իրօք Սողոմոնի խրատին անալով՝ Յովսէփ կըրցաւ իր կինը ուղղութիւն բերել ու Մելիսն ալ բարեկամներ ունենալ:



ԽԱՅՏԱՌԱԿԵԱՆ ԶՐՊԱՐՏԻՉԸ

Անգամ մը՝ մէկ քանի Իտալացի վաճառականներ, իրենց գործերու համար Բարիզ եկած բլալով՝ միեւնոյն օթեանը իջեր էին և միշտ բնկերութեամբ կը պտըտէին ու կ'ընթրէին: Իրիկուն մը բնթրիքէն վերջը ամենքն ալ սովորականէն աւելի ուրախ գտնուելուն՝ սկսան



սիրահարական պատմութիւններ պատմելով զուարճա-  
նալ: Անզգայարար խօսքը նոյն խակ իրենց կնիկներուն  
վրայ եկաւ, վասն զի ամենքն ալ ամուսնացած էին:

— Իմ կինս չգիտեմ ինչ կ'ընէ, բսաւ մէկը, բայց  
սա գիտեմ միայն որ ես՝ օտար կերակուր մ'ուտելու  
առիթք գտած ատենս կուշտ մը կ'ուտեմ:

— Ես ալ նմանապէս, վրայ բերաւ ուրիշ մը, ու  
շատ հաւանական է որ իմ կինս ալ նոյն դրութեան  
կը հետեւի:

Երրորդ մը գրեթէ միևնոյն լեզուն բանեցուց՝ և ա-  
մենքն ալ համոզուած երևցան թէ իրենց կնիկները՝ է-  
րկինուն բացակայութենէ օգուտ կը քաղեն: Միայն  
Պէրնար անունով ձենովացի մը ասոնց հակառակ կար-  
ծիք յայտնեց, ապահովեցնելով թէ Աստուծոյ շնորհ-  
քովը՝ իր կնիկը Խաչիոյ ամենէ առաքինի ու կատա-  
րեալ կնիկներէն մէկն էր: Յետոյ անոր բարի յատկու-  
թիւնները յիշեց. գեղեցկութիւնը, երիտասարդութիւ-  
նը, աշխուժութիւնը, հասակին նրբութիւնը, աշխատա-  
սիրութիւնը, սեղանի վրայ բրած լաւ մեծարանքը,  
չէնքը շնորհքը գովեց՝ աւելցնելով որ քաջ ձիավարու-  
թիւն ալ գիտէր, ուտեալ ու քաջ տօմարագէտ էր ևն:  
Ասոնք մի առ մի յառաջ բերելէ վերջը՝ նոյն խակ խըն-  
դրոյն գարով՝ պնդեց թէ անորմէ առաքինի և համեստ  
կնիկ մը չկար, և քաջ համոզուած էր որ եթէ տաք-  
տարի շարունակ իր քաղաքէն բացակայ գտնուէր՝ ա-  
նիկա երբէք անհաւատարմութիւն չէր բներ իրեն:

Այս վերջին խօսքերը՝ նոյն քնկերութեան մէջ գրա-  
նուող Ամբրոսիոս անուն Բլէզանացի երիտասարդի մը  
ծիծաղը շարժեցին, որ Պէրնարը ծայրելու համար ա-  
նոր հարցուց թէ՝ արդեօք կայսրը ատանկ նորօրինակ  
արտօնագիր մը տուած էր իրեն: Ձենովացին քիչ մը  
վշտանալով՝ պատասխանեց թէ այս շնորհքը չէ թէ կայ-  
սրէն՝ այլ Աստուծմէ բնագունած էր՝ որ կայսրէն աւելի  
կարողութիւն ունէր:

— Տարակոյս չունիմ որ, վրայ բերաւ իսկոյն Ամ-  
բրոսիոս, դուն բռածիդ կը հաւտաս անկեղծօրէն, բայց  
ներէ ինձ բտել որ այդպէս խօսելը մեր խօսակցութեան

Երկրին բնութիւնը չճանչնալ է: Եթէ կինը քննա-  
բլլայիր, ուրիշ կերպով պիտի խորհէր: Մի կարծեր  
սակայն թէ մենք ալ այնպէս խօսելով՝ քենէ աւելի  
գանգատի տեղի մ'ուէինք մեր կիներէն, այլ այնպէս  
խօսեցանք՝ բնդ-հանրապէս գեղեցիկ սեռին վրայ մեր  
ունեցած ծանօթութեան կռիւնելով: Բայց եկն այս  
խնդրին վրայ քիչ մը արամարանենք: Միթէ սոյգ՝ չէ  
և ամեն մարդ ալ չքգիտեր թէ էրիկ մարդը Արարչին  
ծեռքէն ելած ամենէ կատարեալ արարածն է. հետե-  
ւաբար կինը երկրորդականն է. անոր համար ամենքը  
կ'ընդունին թէ մարդս աւելի քաջատուութիւն, զօրու-  
թիւն և հատատամտութիւն ունի, մինչդեռ կինը երկ-  
շոտ ու փոփոխամիտ է: Այս տեղ կնիկի այս տարբե-  
րութեան պատճառները բացատրել քեզ, բայց սակայն  
հիմակ աւելորդ է այդ վիճարանութեան մէջ մտնել,  
որ զմեզ շատ հեռի կը տանի: Երրակացքնենք միայն  
թէ մարդս աւելի ուժեղ, զօրուոր և անյողպտի բլ-  
լլով անգամ՝ շիրնար դիմադրել չէ թէ զինքը գրե-  
գուող կնիկ մը՝ այլ նոյն խակ իրեն հաճելի երեցող կնի-  
կին մըղ ջանկութեանը միայն. արդ՝ եթէ մարդը եւք-  
ղինքը շիրնար արգիլել իր նպատակին հասնելու ա-  
մեն միջոցները փորձելէ, եթէ նա ամեն ներկայացող ա-  
ռիթներու մէջ յաղթահար կ'ընկճի, բնականօրէն տը-  
կար ու գիւրաբեկ կինը ինչպէս կ'ընայ ինքզինքը գրե-  
պել, աղաչանքներու, շողօքորթութեանց, բնծաներու  
և մէկ խօսքով ամեն տեսակ մեքենայութեանց առջև՝  
որոնց կը դիմէ եռանդուն սիրահար մը: Միթէ կըկար-  
ծես որ երկար ատեն կը դիմանայ անի: Թէև դու հա-  
մոզուած կ'երևիս, ես դժուարաւ կը հաւատամ որ այս  
մասին անկեղծ բլլալու չափ պարզամիտ ես: Կինդ որ-  
բան ալ համեստ ու պարկեշտ բլլայ, միւսներու պէս  
միտ ու ոսկորէ շինուած է, միևնոյն կրից ու միևնոյն  
հարածանքին ենթակայ: Ուտի, որովհետև փորձառու-  
թիւնը ամեն օր կը հատատէ թէ միւսները կը յաղ-  
թուին, շատ կարելի և նոյն խակ շատ հաւանական է որ  
քուկինդ ալ կ'ընայ բնկճիլ որբան ալ առաքինի բլլայ՝  
եւ եթէ այդ բնկճումը կարելի անգամ չբլլայ, պէտք



չես այդքան յամառութեամբ մերժել և ուրանալ զայնս  
 — Ես վաճառական եմ ու չէ թէ փիլիսոսիայ, պա-  
 տասխանեց Պէրնար. իբրև վաճառական կը պատաս-  
 խանեմ թէ ըսածներդ կրնան պատահիլ անպատիւ կի-  
 ներու, բայց կը պնդեմ որ պատիւ ունեցողները աւե-  
 լի զօրաւոր, աւելի հաստատամիտ և աւելի անդրդուե-  
 լի են էրիկ մարդերէն, որոնք ինչպէս որ դիտես, շա-  
 րունակ անոնց առաքինութեան թակարդներ լարելու  
 զբաղած են, և համոզուած եմ որ իմ կինը այս վեր-  
 ջիւններու կարգէն է:

— Եթէ ամեն անգամ որ կիները՝ իրենց էրիկներէ  
 տարբեր մարդերու շնորհատու կ'ըլլան, իրենց ճակատը  
 եղջիւր մը բուսնէր, չեմ տարակուսիր որ անհաւատա-  
 քիմ կ'իններու թիւը շատ փոքր կ'ըլլար, բայց որովհե-  
 տև պարկեշտ կին մը անպարկեշտ կնիկէն զատող նշան  
 մը չկայ՝ իրենց պատիւը ՚ի վտանգի չէ երբէք. այդ  
 անպատուութիւնը մինակ գործին լուսելէն յառաջ կու  
 գայ. Անոր համար՝ տարակոյս չկայ որ գործին գաղտ-  
 նի մնարուն վրայ ապահով եղողները՝ իրենց միտումին  
 կը հետնին, և եթէ այդպէս չընէին՝ իրենց կողմէ յի-  
 մարութիւն մը պիտի ըլլար. Որմէ կ'եզրակացնեմ թէ  
 համեստ ու հաւատարիմ այն կիներն են՝ որոնք հա-  
 մակրութեան առարկայ չեն եղած, ու եթէ երբէք ա-  
 ռաջարկող եղած են՝ մերժուած են: Թէպէտ ամենուն  
 կարծիքն է այս՝ սակայն ես ալ այդքան համոզուեմով չէի  
 խօսեր եթէ հազար անգամ անձամբ փորձը տեսած չըլ-  
 լայի: Համարձակապէս կ'աւելցնեմ որ եթէ քու կնոջ  
 մտ գտնուէի, այն կնոջդ՝ որ այդքան համեստ ու ա-  
 ռաքինի է, շատ ժամանակի պէտք չէի ունենար զին-  
 քը համոզելու այն բանին՝ զոր բրած եմ շատերու հետ՝  
 որոնք քու կնիկդ պէս չտեսնուած առաքինութիւն մ'ու-  
 նենալ կ'երևային:

— Այս հակաճառութիւնը, վրայ բերաւ Պէրնար,  
 զմեզ շատ հեռու պիտի տանի. երկու կողմէն ալ ա-  
 ռարկութիւններ, հերքումներ և այլն պիտի ըլլան՝ զորս  
 Էրբէք պիտի չկրնանք լմնցնել: Բայց քանի որ անոնց  
 առաքինութեան դէմ այնքան հաստատ համոզում ու-

նիս և կը կարծես թէ՝ կին մը չկրնար քեզմէ չյաղ-  
 թուիլ, գլուխս գրաւ կը դնեմ որ քու բոլոր տաղանդը  
 իմ կնոջս առջև, յօդս կը ջնդի, իսկ եթէ դու կորսնցնես  
 ինձի հազար վնե՛սակի ոսկի՝ տաս:

— Գլուխդ թնչ ընեմ ես. եթէ գրաւը վատը կիմ,  
 պատասխանեց Ամբրոսիոս, որ կ'սկսէր տաքնալ, եթէ  
 կ'ուզես քաջ համոզուիլ որ գործադրել չկրցած բանս  
 չեմ խոստանար, դուն հինգ հազար ոսկի գրաւ դիր,  
 (որոնք գլխեդ նուազ թանկագին են) ու ես հազար  
 ոսկի կը դնեմ: Թէպէտ դու պայմանաժամ ալ չէիր  
 որոշեր. ես այս օրուքնէ սկսեալ երեք ամիս կը պա-  
 հանջեմ կինդ որսալու համար: Եթէ առաջարկութիւնս  
 կ'ընդունիս, իմ ձեռնարկութեան յաջողութեանը մա-  
 սին քեզի անանկ ապացոյցներ կը բերեմ՝ որ լիօրէն  
 կը համոզուիս: Բայց քեզմէ ալ կը պահանջեմ որ ձե-  
 նովա չի գաս և գրաւ դրած ըլլալդ ալ կնոջդ չիմա-  
 ցնես:

Պերնար պատասխանեց որ այդ պայմանները կ'ըն-  
 դունէր, այլ միւս վաճառականները վախնալով որ այս  
 գրաւը ցաւալի հետևանքներ կ'ունենայ՝ ունայն ջանքեր  
 բրին զայն արելու: Երկուքն ալ այնքան տաքցած է-  
 ին որ խօսք մտիկ բնել չէին ուղեր՝ և օրինաւոր դաշ-  
 նագրով մը իրենց գրաւը հաստատեցին:

Երկրորդ օրը Ամբրոսիոս Բարիզէն ելաւ ձենովա եր-  
 թալու: Հոն հասածին պէս՝ տիկնոջ տունը ներ ըլլա-  
 լուն՝ և անոր վարուցը վրայ տեղեկութիւն ստանելով՝ Ի-  
 մացաւ որ նա իր էրիկին ըսածէն աւելի համեստ, ա-  
 ռաքինի և գրեթէ վայրենի էր, անանկ որ յանդուգն  
 ձեռնարկութեան մը՝ զոր գլուխ պիտի չկրնար հանել  
 ձեռք զարնելուն զղջաց: Սակայն և այնպէս՝ պառաւ  
 ձեռք զարնելուն կ'երթար և զոր շատ կը սիրէր նա,  
 ստեպ ոյցելութեան կ'երթար և զոր շատ կը սիրէր նա,  
 միտքը դրաւ գործը աւելի առջև բշել: Պառաւ զաս-  
 տը կ'իլն ալ յուսացածին չափ դիւրին չեղաւ, բայց վեր  
 ջապէս կրցաւ ստակով զանի ձեռք բնել:

Այս պառաւը մեր տարվածուին համար մինակ աւ-  
 կրցաւ բնել որ վարպետ հնարքով մը զանի տիկնոջ



սենեակը մտցուց : Որոշուեցաւ որ Ամբրոսիոս իր ուզածին պէս մատուկ մը շինել տալով՝ անոր մէջ գոցուի և պառաւը ճամբորդութեան պատրուակով մը՝ տիկիներ աղայէ պպահովութեան համար զոյն քանի մ'օր ննջաբանին մէջ պահելու : Խօսքը գործ եղաւ . կէս գիշերին երբ տիկիներ խորունկ քուն մտած էր, Ամբրոսիոս ելաւ մատուկէն՝ որու կըպանքը ներսն ու դրսէն բացուող տեսակէն էր, և վառուած կանթեղին շորհիւ սենեկին ձեք, Թափիսարիաները, պատիկերները և ուրիշ զարդերը քննելով՝ բոլոր այն առարկաներու գաղափարը մտքին մէջ տարադրեց : Յետոյ անկողնոյն մօտեցաւ . տիկիներ պզտիկ աղջկան մը հետ պառկած էր և անոնց խորունկ քունը տեսնելով՝ մեծ գգուշութեամբ մօրը վրան բացաւ և գիտեց որ անոր ամենէ գաղտնի հրապոյրները գէմքին գեղեցիկութեան կը համարատախանէին : Նա բոլորովին մերկ ըլլալուն ուզածին պէս նկատեց զայն անարգել, տեսնելու համար թէ արդեօք մարմնոյն վրայ մանաւոր բան մ'ունէր, այսպէս մանրազնին կերպով, անոր զանազան մասերը քննելու ատեն՝ անոր ձախ բտաին լին տակ պզտիկ կոծիծ մը գտաւ ոսկիի նման դեղին մագերով ծածկուած : Զայն կուշտ մը զննելէն ետքը՝ կրան ծածկեց մեղմիկ և մեծ յուզմունքով, ու հազիւ իրզնքը կարենալով զսպել . . . վասն զի Նւան խարոյ օձը իր բոլոր ճարտասանութեամբը կը խօսէր իրեն, և նորէն սենեկին ամեն անկիւնները այցելեց . բաց պահարան մը գտնելով՝ մէջէն քսակ մը, գօտի մը, մատնի մ'առաւ և նորէն իր մատուկին մէջ մանելով կամացուկ մը գոցեց զայն : Ինչպէս որ որոշուած էր՝ երկու գիշեր ևս հոն անցուց : Երրորդ օրը պառաւ կենք ներկայացաւ իր մատուկն ուղելու և զայն առնելով իր սուռը տարաւ : Ամբրոսիոս իր նեղ բանտէն ելածին պէս՝ զանի վարձարեց ու դեպ 'ի Բարիզ ճամբայ ելաւ գողցած առարկաները հետք առնելով : Պայմանաժէն շատ յառաջ հասաւ հոն ու իր գրաւին վկայ եզող վաճառականները դարձեալ նոյն օթեւանին մէջ խմբուած գտնելով՝ Պերնարի ներկայութեանք բաւաւնոնց թէ իր դրաւը չահած էր, վասն զի բեղունած

պաշտօնը կատարել էր . իր սուտ չքովը հաւատացնելու համար սկսաւ տիկին Պերնարի ննջարանին նկարագրութիւնը քնել, մանրամասնաբար այն տեղի պատկերները յիշելով՝ և 'ի վերջէ գողցած բաներն ալ ցուցնելով բաւա թէ տիկիներ զանոնք իրեն քնծայ բերել էր :

Պերնար սիջ մը շփոթած՝ պատասխան տուաւ թէ ննջարանը Ամբրոսիոսի ըսածին պէս էր, խոտազանեցաւ նաև որ այն գոհարները իր կնոջն էին, այլ ուրիշ ապացոյցներ կ'ուզէր, քսելով որ Ամբրոսիոս կրնար զանոնք ծախու առած ըլլալ ծառայէ մը՝ որ միևնոյն ատեն կարելի է ննջարանին, անկողնոյն և կնոջը ուրիշ կարասիներուն ձեին վրայ տեղեկութիւններ ալ տուած էր :

— Ասոնք պէտք էին բաւել, պատասխանեց Ամբրոսիոս, բայց որովհետև աւելի շօշափելի ապացոյցներ կ'ուզես, կեցիր զքեզ գոհ քնեմ, քու պատուական տիկինը ձախ ստինքին տակ խոշորկեկ կոծիծ մ'ունի որու բոլորտիքը՝ իրենց գոյնովը ոսկիէ թելի կատարելապէս նմանող մազեր կան :

Այս խօսքերը Պերնարի սկտք կարեվէր խոցեցին և իսկոյն Բարիզէն մեկնելով՝ ձենովայի տաւը մղոն մտա իր ամարանոցը կանգ տաւ : Անկէ նամակ մը գրեց իր կնոջ զանի հոն հրաւիրելու համար և իրեն խիտ հաւատարիմ մէկ ծառան երկու ձիով անոր դրկելով : Ծառային ապսպրեց որ իր կնոջը հետ՝ ճամբուն այս ինչ ամայի տեղը հասածին պէս՝ զանի անխնայ սպաննէ՝ ու սպաննելէն վերջը անմիջապէս վերադառնայ :

Այս ծառան ձենովա հասածին պէս՝ նամակը յանձնեց տիկին Պերնարին, որ իր առուանոյն գաղուտը իմանալով՝ զանի մեծ ուրախութեան ցոյցերով ընդունեցաւ ու երկրորդ օրը նոյնին հետ ճամբայ ելաւ իր երկին քով երթալու . սրկէ նըկէ խօսելով՝ երկու ճամբորդները խորունկ ձոր մը հասան որ անտառախարքը լուրներով շրջապատուած էր, Ծառան այս տեղը իր տիրոջ հրամանները կատարելու յարմար գտնելով՝ սու-



բը քաշեց ու խեղճ կնոջը թևէն բռնելով՝ — Տիկին, ըսաւ, հոգիներդ Աստուծոյ յանձնեցէք, աւելի հեռու չգացած՝ հոս սխալի մեռնիք:

— Աստուած իմ, պոռաց տիկինը զարհուրած, քեզի ինչ բրի որ զիս սպաննել կ'ուզես, վայրկեան մը դուրս ունեցիր, և Աստուծոյ սիրուն ըլլայ, զիս չմեռցուցած՝ ըսէ թէ ինչ բանի մէջ վշտացուցի զքեզ կամ թէ զիս սպաննել ուզելուդ պատճառն ինչ է:

— Զիս վշտ սցուցած չէք, տիկին, պատասխանեց ծառան, չգիտեմ նաև թէ ձեր ամուսինը վշտացուցած էք թէ ոչ, բայց ան հրամայեց ինձ զձեզ մեռցընել անխնայ՝ և սպառնացաւ իսկ զիս ալ սպաննել տալ՝ և թէ իր հրամանները չկատարեմ. Արդէն գիտէք թէ ինչ աստիճանի իրմէ կախում ունիմ, և թէ որքան անկարելի է ինձ անոր հրամանէն դուրս ելնել. Աստուած վկայ սակայն, որ այս բանը ակամայ կ'ընեմ և ձեր ճակատագրին վրայ կը ցաւիմ. բայց ինչ ընեմ, տիրոջս հրամանին պէտք եմ հնազանդիլ:

— Ահ, տէր Աստուած. բարեկամդ իմ, ըսաւ տիկին Պերնար լալով, իմ պաշտպան հրեշտակս և բոլոր սուրբերը վկայ ըլլան որ այս տեսակ խիստ պատիժի մը արժանի ըլլալու բան մ'ըրած չեմ էրկանս: Խնդրեմ, պարոն, կեանքս չնորհէ ինձի և տիրոջդ հաճելի ըլլալու համար, ձեռքերդ անմեղի մ'արեան մէջ մի թաթխեր: Երանի թէ սրտիս խորը կարեանայի քեզի կարդացընել, եթէ անոր անմեղութիւնը տեսնայիր կը խղճայիր վրաս: Բայց առանց ինքզինքս արդարացընել աշխատելու՝ կ'աղաչեմ, հաճէ մտիկ ընել քեզի ըսելիքներուս: Առանց զիս սպաննելու կրնաս տէրդ գոհ ընել, ահա այս հազուստներս առ և քու կիներուդ մէկ մասը տուր ինձի, զանոնք տեսնելով՝ էրիկս դիւրաւ պիտի հաւտայ թէ զիս սպաննած ես: Այո՛ քեզի պարտաւորեալ արևիս վրայ կ'երդնում որ այս երկրէն այնքան հեռու կ'երթամ՝ որ ոչ դուն, և ոչ մեզի ծանօթ մէկը իմ անունս կը ըլլէ այսուհետէ:

Մառան՝ որ արդէն իր ընելիք գործէն զզուանք կ'զգար, համոզուեցաւ դիւրաւ այս խօսքերուն, ու

կնոջը հազուստներուն մէկ մասը առնելով՝ գլխակ մը ու վերարկու մը ձգեց, ու իր ունեցած քիչ մը ստակն ալ անոր տալով՝ զանի թողուց այս ձորին մէջ՝ պատուիրելով որ կրցածին չափ անկէ հեռանայ: Իր տիրոջը քով վերադառնալուն՝ անոր ըսաւ որ իր հրամանները կատարել և թէ ճամբան գայլեր տեսած էր ու ըոնք իր կնոջը թաղման հոգը անշուշտ տարած էին արդէն:

Քանի մ'որ վերջը Պերնար ձենովա գնաց, ուր իր կնոջ աներևութանալը իր վրայ կասկածներ յարուցած ըլլալով՝ ամեն պատուաւոր մարդերը զզուանքով իրմէ կը հեռանային:

Ողորմելի տիկինը մահուանէ ազատուելուն վրայ քիչ մը մխիթարուելով՝ իր վիշտերը մեղմացան, և մինչև մթննալը ծածուկ տեղուանք պահուբտեցաւ: Յետոյ գիշերը կոխածին պէս՝ ատ դժնդակ ձորէն ելնելով հեռու գեղ մը գնաց, ու բարի գեղջուհիի մը տունը մտնելով՝ անոր դուրսը շարժեց, և պէտք ունեցած օգնութիւնը դտաւ:

Այդ գեղացի պառաւը՝ իրեն ասեղ, գերձան ու մկրատ տուաւ, որպէս զի զինքը ծածկող վերարկուին ծակտիքը կարկտէ. տիկինը՝ ծառային իրեն տուած վերարկուն իր հասակին յարմարացուց, իր հագած կիկի շապիկին՝ նաւաստի շապիկի ձև տուաւ, ու իր գեղեցիկ ու երկայն մազերը կտրելով՝ երկրորդ օրը այսպէս ծպտած ճամբայ ելաւ դէպ ի ծովուն կողմը: Ծամբան ժէրօլի անուն ազնուականի մը հանդիպեցաւ որ Ալպա քաղքին մօտիկ նաւահանգստին մէջ նաւ մ'ունէր: Ժէրօլի նաւէն ելած էր՝ նաւահանգստէն քիչ հեռի աղբիւրէ մը զովանալու համար, տիկինը զան տեսածին պէս քովը գնաց քիչ մ'ատեն խօսեցաւ ու աղաչեց որ թեամբ ընդունեցաւ զան՝ իբր նաւաստի, վասն զի անոր արթնութենէն և համեստ գիրքէն գոհ եղած էր, ու զինքն առնելով՝ նաւը տարաւ, ու շնորհքով լաթեր հազցունել տուաւ անոր: Դիւրին է երևակայել թէ տիկինը իր անունը ու սեռը մեծ հոգ տարաւ անորմէ:



գաղտնի պահելու, ինքզինքք Ֆինալ անուանելով: Նա  
ւապետը կամաց կամաց անոր ծառայութենէ այնքան  
զու՛ եղաւ, որ գիշուածով ասանկ բարի ծառայ մը  
գտնուին համար Աստուծոյ փառք կու տար:

Նաք Աղեքսանդրիա կերթար ու ժերոյի որ դայն  
տեսակ տեսակ ապրանքներով լեցուցաւ էր՝ հետոյ կը  
տանէր նաև շատ մը բաղէներ՝ Սուլթանին նուիրելու  
համար: Այս իշխանը մեծ պատուով բնդուներցաւ զժե-  
րոյի՝ և զանի քանի ս'անգամ իրեն հետ ճաշելու հը-  
րաւիրեց. սոյն առիթներու մէջ Սուլթանք՝ Ֆինալի ա-  
շարջրութիւնն ու խոհեմութիւնը շատ հաւնելով՝ զանի  
Պ. ժերոյիէն ուզեց, և ժերոյի չհամարձակեցաւ իշխա-  
նին խնդիրքը մերժել: Բիշ ատենէն Ֆինալ ինքզինքք  
Սուլթանին ալ սիրելի բրաւ ինչպէս որ աղնուականին  
բրած էր՝ ու գրեթէ որ չէր անցներ որ անորմէ նոր շը-  
նորհք մը չբնդունի:

Ամեն տարի տօնավաճառ մը կըլլար Աքնա քաղա-  
քին մէջ՝ որ այս Սուլթանին հպատակութեան տակ էր,  
և ուր կու գային բազմաթիւ քրիստոնեայ և սարակի-  
նոս վաճառականներ: Բաղաքին անդորրութիւնն պահե-  
լու համար, պահակներէն և ոստիկաններէն զատ իշ-  
խանը սովորութիւն ունէր նաև տօնավաճառի ատեն հա-  
ւատարիմ մարդու մը հրամանատարութեան տակ ըն-  
տիր զօրաբաժին մը որդիել վաճառականներու և վա-  
ճառքներու ապահովութեան համար: Այս տօնավաճա-  
ռի ժամանակն եկած ըլլալով Ֆինալ որ արդէն երկ-  
րին լեզուն գիտէր, հրաման տալու իբրև հրամանա-  
տար հոն եթալու և խիստ գոհացուցիչ կերպով կա-  
տարեց իր պաշտօնը՝ որ իրեն առիթ կ'ընծայէր ստէպ  
տեսնուիլ վաճառականներուն հետ որոնց մէջ սիկիլիա-  
ցիներ, բիզացիները, ճենովայիներ և վենետիկցիներ  
կային. և որովհետև միշտ իր հարկներք կը սիրէր նա  
մասնաւորապէս իտալացոց հետ կը խօսակցէր: Սր մը  
վենետիկցի վաճառականներու խանութ մը գտնուելով՝  
ուրիշ գոհարներ մէջ գօտի մը և քսակ մը տեսաւ՝  
որոնց կրնէ վերաբերած ըլլալը յիշեց: Ասոր վրայ շատ  
զարմացաւ, բայց առանց բան մը յայտնի ընելու հար-

ցուց թէ որոնն էին և թէ արդեօք ծախու էին անոնք:  
Ամբողջիտ որ վենետիկեան նաւով մը այս տօնավաճա-  
ռը եկած էր շատ ապրանքներով՝ պահանջողներու հը-  
րաման տալին ճայքը լսելով՝ մտնեցաւ ու

— Ինչ են, բաւ կեղտը, և թէ ծախու չեն,  
բայց եթէ հաւնեցաք հաճեցէք ինչ ընծայ ընդունիլ  
զանոնք:

Ֆինալ՝ դիտելով որ Ամբողջիտ իր հետք խօսելու  
ատեն կը ժպտէր, վախճաւ որ իր սեռը յայտնի բրած  
չըլլայ, բայց և այնպէս համարձակ հով մ'առնելով՝ Ը-  
տաւ խտաւրէն:

— Չէ՛ մի որ զինուորական գտնուելով ատանկ կնիկի  
մտտիքներով զբաղելուս կը խնդաս:

— Չէ, պարոն, պատասխանեց Ամբողջիտ, զանոնք  
ինչ կերպով ձեռք ձգելու յիշելուս է ո՛ր կը խնդամ:

— Արդեօք անխոհեմութիւն է հարցընել թէ ինչ  
կերպով ձեռք ձգեցիք զանոնք, վրայ բերաւ անմօ-  
րուս հրամանատարը:

— Պարոն, պատասխանեց Ամբողջիտ, ուրիշ շատ  
մը գոհարներու չեմ՝ այս գոհարները ընծայ եղած  
են ինձ ճենովացի գեղեցիկ կնիկէ մը, որ սիկին Պեր-  
նար կը կոչուէր և որու հետ գիշեր մը պատկեցայ:  
Այդ կինը զիս աղաչած ըլլալուն որ զանոնք իր սիրոյն  
իբրև յիշատակ պահեմ, պահել կ'ուզէի, բայց քանի  
որ դուք քիչ մը հաւնեցաք զանոնք, խնդրեմ որ իր-  
բև ընծայ ընդունիք: Տեսած ատենս իմ խնդուքս կու  
բև զայ, վասն զի երկին յիմարութիւնը կը յիշեմ որ հա-  
զայ, վասն զի երկին յիմարութիւնը կը յիշեմ որ հա-  
զարի գէմ հինգ հազար ոսկի գրաւ գրած էր, պնդե-  
լով թէ իր հաւատարիմ կնոջը շնորհները ես պիտի  
չկարենայի վայելել բնաւ: Սակայն գործը գլուխ հա-  
նեցի, գրաւը վատաբեկեցայ՝ և յետոյ լսեցի թէ՛ այդ  
տխմար մարդք որ իր տխմար հաւատարմութեանը հա-  
մար պէտք էր ինքզինքք պատժել իր կնոջ պարսա-  
ւելու տեղ՝ ձենովա վերադառնալուն պէս զանի սպան-  
նել տուեր է:

Ֆինալ ան ատեն հասկեցաւ իր երկան կատու  
թեան շարժառիթը, և որոշակի տեսաւ որ իր դժբաղ-



դուժեան միակ պատճառը Ամբրոսիոս եղած էր, ուստի այս աննման ոճրագործը անպատիժ չթողլու համար՝ այս արկածին վրայ շատ զուարճանալ կեղծեց, այն վայրկենէ անոր հետ շատ մտերմանալով՝ համոզեց զանի որ տօնավաճառը լինելէն ետքը՝ մնացած ապրանքներն առնելով Աղեքսանդրիա երթայ ուր շատ բնական կրնար շահիլ, քսաւ:

Իր լուծելիք վրէժը աւելի ապահովցնելու ու պէտք եղած դպուշութիւնները լաւ մը բնելու ժամանակ ունենալու համար՝ յորդորեց զանի որ քանի մը տարի հոն մնայ և ամեն դժուարութեանց առաջն առնելու նպատակաւ՝ անոր ուրիշ նիւթական ու դրամական օգնութիւններ ալ բրաւ:

Ամբրոսիոս հաւանեցաւ, վասն զի արդէն այս տօնավաճառէն ալ բաւական շահեր էր: Մինալ ինքզինքը իր էրկան առջև արդարացնելու մտքով՝ ամեն հնարին միջոցներ մտածեց զանի ալ Աղեքսանդրիա բերելու համար, և յաջողեցաւ նոյն քաղքին մէջ բնակող ձենովացի վաճառականներու միջամտութեամբ: Պերնար որ իր կանուելուն պատճառը չէր գիտեր՝ թշուառ վիճակի մէջ Աղեքսանդրիա հասնելով՝ Մինալի մէկ բարեկամէն ընդունուեցաւ ու անոր մօտ մնաց մինչև որոշեալ ժամը:

Գործերը պատրաստելու համար մինալ Ամբրոսիոսի պատմութիւնը նոյն իսկ Ամբրոսիոսի պատմել տուեր էր Սուլթանին առջևը՝ որ իրօք շատ զուարճացեր էր Ուստի երբ իր էրկիք Աղեքսանդրիա հասաւ՝ նա իշխանին ազաչեց որ Պերնարի ներկայութեանը Ամբրոսիոս նոյն պատմութիւնը անգամ մ'ևս ընէ, յաւելցնելով թէ՛ քանի մ'օրէ՛ ի վեր նոյն իսկ Պերնար հոն պիտի դառնաւ, և թէ շատ կը վախնար որ Ամբրոսիոս իր պատմութեան մէջ ճշմարտութիւնը պահած՝ և ձենովացին ալ իր կինը դատապարտելու պէտք եղածէն աւելի ահապարած էր:

— Բայց եթէ Ձեր Բարձրութիւնը, քսաւ, հաճի հրաման ընել անոր՝ գործին էութիւնը եղածին պէս պատմելու՝ տարակոյս չունիմ որ Ամբրոսիոս պիտի հնազան

դի, թէ ոչ ճշմարտութիւնը բնել տալու՝ ես ուրիշ ապահով միջոց մ'ունիմ:

Ամբրոսիոս և Պերնար երբ Սուլթանին առջևն ելան՝ այս իշխանը խիտ կերպարանք մ'առաւ, և գործին ամէն պարագաները դիտնալ ձեւացնելով՝ Ամբրոսիոսին հրամայեց պտտմել առանց ճշմարտութիւնը ծածկելու, թէ ինչպէս հինգ հազար ոսկին շահած էր, սպառնալով որ եթէ ճշմարտը չբտէ զինքը անլուր տանջանքներու պիտի դատապարտէ:

Ամբրոսիոս այս սպառնալիքէն զարհուրած և կարծելով թէ իշխանը ամեն բան գիտէ, որոշեց Պերնարի և բոլոր արքունեաց ներկայութեանը՝ գործին ինչպէս եղած բլլալը պտտմել ճշդիւ՝ կարծելով թէ շահած հինգ հազար ոսկին, գողցած գոհարները և այլն ետ տալով պիտի ազատի: Երբ ամեն բան քսաւ նա, միւսալ իրբև նորին Բարձրութեան պաշտօնեայ՝ Պերնարի ուղղելով՝

— Եւ դուն, քսաւ, այսպիսի զրպարտութենէ մ'ետքը կնիկդ ինչ բրեր:

— Բարկութենէս ու նախանձէս ինքզինքէս ելած՝ պատասխանեց նա, և ստակս ու պատիւս կորսնցնելուս վրայ յուսահատ՝ անոր մահը երգութեայ ու իմ ծառայիս ձեռքով սպաննել տուի զան:

— Եւ մարմինը ինչ բրեր:

— Գերիիս տուած տեղեկութեանց նայելով՝ կնոջս մարմինը իսկոյն գայլերու կնի եղաւ: Սուլթանին պաշտօնեայն որ այս երկու վաճառականները անոր առջև հանելուն պատճառը մինչև ցայն կէտ անորմէ պահեր էր՝ ան ատեն անոջ դատնալով՝ քսաւ:

— Կը տեսնէք, տէր իմ, որոշակի թէ ատ խեղճ կինը որքան դժբաղդ եղեր է թէ իր սիրահարին՝ և թէ իր էրկին կողմէն: Նախ իր կեղծ սիրահարը ամեն ինչ անիտիղճ զրպարտութիւնով անոր պատիւը սպաննելու երկիք թայլեր է, և յետոյ դիւրահաւան էրկին ալ ու էրկիք թայլեր է, և յետոյ դիւրահաւան էրկին ալ զան սպաննել տալով՝ գայլերու կերակուր բրեր է: Ահա փախկասիրտ ու խղճահար էրկի ու սիրահար: Գը-



բաւ կը դնեմ, որ եթէ այս պարոնները այդ թշուառ կինը նորէն տեսնեն՝ իրենց սէրը այնքան մեծ եղած է՝ որ երկուքն ալ չեն ճանչնար զանի. բայց դուք արդարաւոր էք, տէր իմ. ու գիտէք թէ երկուքնին ալ ինչի արժանի են: Պէտք չունիմ խաբեքան պատժելու ազաւել զձեզ, իր սճիրը չափազանց մեծ է, անոր կենաց շնորհումը չեմ կրնար խնդրել, այլ խաբուողք թէև ներումի անարժան, այդ շնորհքը կը խնդրեմ իրեն համար, և եթէ կը հաճիք զայն ընել, ես ալ յանձնառու կ'ըլլամ իր կինը հոս բերելու:

Սուլթանը՝ որ իր այս պաշտօնեայն շատ կը սիրէր՝ անոր կամքը կատարել խոստացաւ, ու հրամայեց Պերնարի կինն ալ հոն բերել:

Իւրիւն է երեակայել թէ որքան զարմացաւ Պերնար որ կը կարծէր թէ իր կինը մեռած էր՝ և ինչպէս ապշեցաւ Ամբրոսիոս՝ որ այս անգամ կը հասկընար թէ ստակները ետ տալով պիտի չտգատէր: Սոյն միջոցին թինալ յանկարծ թագաւորին ոտքը ինկաւ և իր կամեցողութեան զօրութեամբ առնական ձայնը կորանցընելով՝

— Ես եմ, տէր, բաւ լալով, ես եմ Պերնարի կինը, որ վեց տարի աշխարհք շրջեցայ էրիկ մարդու հագուստով, այս զրպարտիչ Ամբրոսիոսի զրպարաութեամբ և իմ անգութ էրիկիս անգթութեամբը ծառայի մը սիրասպան սուրին և գիշակեր գայլերու սկզաններուն մատնուելուս համար:

Այս խօսքերը արտասանելէն ետքը իր հագուստը պատուելով՝ կուրծքը բացաւ նա, ու բոլոր հանդիսականներու առջև իր կնիկի ճշմարիտ կերպարանքով երևցաւ:

Վերջը Ամբրոսիոսին դառնալով՝ թոթոակ լեզուով անոր խաբեքայութիւնը երեսին տուաւ. մինչդեռ նա այս առաքինի կնոջ առջև ամբէն և խայտառակութենէն պապանձած կը մնար: Իշխանը՝ որու մտքէն երբէք չէր անցած թէ թինալ կին էր, այս տեսածներուն ու լրածներուն վրայ այնքան կը զրգմանար որ երազ տեսնել կը կարծէր:

Երբ իր զարմանքն անցաւ ու բոլոր ճշմարտութիւնը իմացաւ, շատ դուժեց տիկին Պերնարի առաքինութիւնը, վարք ու բարքը՝ և պատուական հագուստներ, ու անոր ծառայելու համար շատ մը նաժիշտներ և այլն շնորհեց: Պերնարի ալ իր կնոջ սիրոյն՝ ներեց դիւրահաւանութեանը արդիւնք եղող բարբարոսութեանը համար. և աս մարդք, որ իր կեանքը՝ իր մահոտն դատապարտած կնոջը կը պարտաւորէր՝ երախտագիտութենէն ուրախութեան ու զղումի արտասուքներ թափելով՝ անոր ոտքն ինկաւ ու թողութիւն խնդրեց:

Առաքինի տիկինը անոր անիրաւութիւնը քաղցրութեամբ երեսին զարնելով՝ ըսաւ թէ կը մոռնայ զանոնք, և զանիկա վեր վերցընելով՝ խանդաղատանօք գրկեց իբր իր ամուսինը:

Ամբրոսիոս իր յանցանքին պատիժը կրեց: Սուլթանին հրամանովը՝ բոլորովին մերկանդամ՝ բարձր տեղ մը ցիցի մը կապուեցաւ իր մարմինը ոտքէն մինչև գլուխը մեղրով շիտելէ ետքը, որպէս զի հոն մնայ մինչև որ բոլորովին փտաի ու միջատներուն կեր ըլլայ: Իշխանը ուզեց որ բոլոր անոր ինչքը՝ իբրև 20 հազար ոսկի՝ տիկին Պերնարի տրուի իբրև հատուցում անորմէ կրած շարիքին, յետոյ փառաւոր խնջոյք մը պատրաստեց ուր հրաւիրեց տիկին Պերնարը իր էրիկին հետ մէկ տեղ: Սեղանին վրայ իր յարգանքը ու մեծարանքը յայտնելէն վերջը՝ շատ ընծաներ ու տասը հազար ոսկի տալով՝ դեղեցիկ նու մը պատրաստել տուաւ ու Պերնար հոն ընդունուեցաւ իբրև առաքինի կնոջ անմահ օրինակ մեծ պատուով՝ ու իր անունը մինչև հիմա ձենովայի մէջ կ'իշխուի:

Ամբրոսիոսի մարմինը իրօք քանի մ'օրուան մէջ պիտի ծակներու ու միջատներու կեր եղաւ ու կմախքը՝ որ երկար ատեն նոյն ցիցին կապուած մնաց՝ իր յանցանքը ու չարութիւնը անցորդներուն կ'իմացընէր: Իր արկածը մեղի կը սորվեցընէ թէ չարերն ու խաբեքաները վաղ կամ անագան կը խայտառակուին ու կը պատժուին նոյն իսկ իրենց զոհերէն:



Ինչպէս որ գիտէք՝ Մարտիրոս, Պրանսայի ամենէ հին ու վաճառաշահ քաղաքներէն մէկն է։ Այս քաղաքին վաճառականներու մէջ Արլո անունով վաճառական մը կար, որ թէև ստորին դասէ՝ բայց պատուաւոր մարդ մ'էր։ Եստ զաւակներ ունէր նա, ի մէջ այլոց երեք աղջիկ, որոնք մանչերէն աւելի մեծ էին։ Այս աղջիկներէն առաջին երկուքը՝ երկուորեակ ու տասնուհինգ տարու էին ու միւսը տասնչորս։ Զանոնք կարգելու համար մայրերնին իր էրիկը կ'ապասէր որ իր գործերով Սպանիա կը գտնուէր։ Երկուորեակներէ մին Նինէզ և միւսը Մատրէն կը կոչուէր, իսկ երրորդը Պէրթէլ։

Ռասթանեան անուն միջակ հարստութեամբ ազնուական մը՝ Նինէթի սաստիկ սիրահարած էր, և ասալզանի նմանապէս կը սիրէր անձնուէր կերպով ու անոր ամեն տեսակ շնորհներ ընելով։ Բայց վայելքը այս երկտասարդին սէրը նուազեցընելու տեղ զայն աւելի բորբոքեց։ Մինչդեռ ինքը այս երանութեան մէջ էր՝ ուրիշ երկու նորատի ասպետներ, որոնք որք՝ եղբայր՝ ու իրենց ծնողքէն մեծ հարստութիւն ժառանգած էին, մէկը Մատրէնին ու միւսը Պէրթէլին սիրահարուեցաւ։ Առաջինը Փուլզ կը կոչուէր ու կրտսերագոյնը Հիւկ։ Ռասթանեան Նինէթի սիրահարը՝ այս բանը քածին պէս՝ միաքը գրաւ անոնց միջոցաւ իր աղքատութենէն ազատիլ, ուստի անոնց հետ ծանօթացաւ ու փութաց անոնց օգնել իրենց տիրու հիներու հետ տեսնուելու միջոցը գտնելով, իր միջամտութեամբ ստացած ժամադրութիւններուն կ'ընկերանար, մէկ խօսքով զանոնք պարտաւոր

րելու առիթ մը չէր փախցընէր։ Երբ անոնց բարեկամութիւնը շահեցաւ, որ մը զանոնք իր տունը ճաշի հրաւիրեց ու զանազան խնդիրներու վրայ խօսելէն ետքը՝

— Բարեկամներ, ըսաւ, յուսամ կ'զգաք որ ձեզ ծանօթանալով մտերմանալուս խիստ դժեմ։ Զեռքէս եկածք պիտի ընեմ ամենէ անհերքելի ապացոյցներով, իմ ձեզի համար զգացած բարեկամութիւնս գործով ալ ցուցնելու։ Ես ալ չեմ տարակուսիր ձեր բարեկամութեան անկեղծութեանը վրայ, և այդ բարեկամութիւնը այսօր կը գրգէ զիս ձեզի առաջարկութիւն մ'ընելու որ զմեզ երեքնին ալ կրնայ երջանիկ ընել՝ եթէ ընդունուի։ Պէտք էք գիտնալ թէ որչափ որ դուք Նինէթի քոյրերը կը սիրէք՝ ես ալ նոյնքան կը սիրեմ Նինէթը և թէ ամենքնիս ալ զիրար տեսնելու սրբան դժուարութիւն կը քաշենք։ Ես մեր երջանկութեան բոժուարութիւն կը քաշենք։ Ես մեր կ'առնում, եթէ ընլը արգելքներու յաղթելը վրաս կ'առնում, եթէ ընլը գունդ է իմ ձեզի ընելիք առաջարկութիւնը։ Դուք հարուստ էք ու ես աղքատ. արդ՝ եթէ զիս ձեր հարստութեան մասնակից ընել և հետո համաձայնելով կ'ուզէք տեղ մը քաշուելու, ուր ընկերութեամբ եղբոր պէս կ'արենանք ապրիլ՝ այն երեք քոյրերը մեզի հետեւելու համոզելը վրաս կ'առնում, եթէ սակայն դուք ալ կը հաւանիք ասոր։ Մտածեցէք թէ ինչ երջանիկ մարդիկներ պիտի ըլլանք և ըստ այնմ որչուն մը սուտէք։

Երկու եղբարք որ իրենց սիրուհիները մոլեգին կը սիրէին, կը տեսնէին որ աս կերպով անոնց հետ ազատ համարձակ պիտի կրնային ապրիլ ու վայելել զանոնք, այս առաջարկութիւնը ընդունելու վայրկեան մը չդեղեցան։

— Բնակելիք տեղերնիս դուն ընտրէ, ըսին անոր, և մենք պատրաստ ենք դալու, բաւական է որ մեր սիրուհիները հետերնիս ըլլան։

Ռասթանեան՝ ինչպէս որ գիտրին է երևակայել՝ այս պատասխանէն շտապանց գոհ եղաւ։ Քանի մ'օր ետքը իր սիրելի Նինէթին հետ տեսակցութիւն մ'ունե-



նարով՝ երկու եղբարց հետ ըրած որոշումը անոր իմացուց և խնդրեց որ անոր դորժադրութիւնը դիւրացընէ: Նորատի Նինէթը հաճութեամբ հաւանեցաւ. վասն զի իր սիրովառ սրտին մղումներուն հետեիլ կ'ուզէր անարգել, և ապահովուցուց զանի թէ իր կամքը կատարելու պիտի յաջողի իր քոյրերը համոզելով, միայն թէ, բաւ, մեր ճամբորդութեան պէտք եղած պատրաստութիւնները ժամ՝ յառաջ բրէք:

Ռաօթանեան փութաց երկու եղբարքը գտնել այս յաջող սկզբնաւորութիւնը անոնց խնայքներու: Ասոնք ալ իրենց բնակութեան տեղ կրետէ կղզին համաձայնութեամբ ընտրելէ ետքը՝ իրենց ունեցածը չունեցածը ծախեցին առուտուր բնելու պատրուակաւ, նաւ մը գնեցին ու զայն պատրաստելով՝ յաջող հովի մը սպասեցին ճամբայ ելնելու համար:

Նինէթ ալ իր քոյրերու սաստիկ սէրը դիտնալով այն երիտասարդներու վրայ՝ անոնց պլուխը այնչափ տաքցուց որ խեղճ աղջիկները չափազանց անհամբերութեամբ երթալու ժամին կ'սպասէին: Այս փափաքելի ժամը հասնելով՝ երեք Մարտելուհիները իրենց հօրը արկղը բանալու միջոց մը գտան ու կրցածնուն չափ ստակ առնելով՝ իրենց սիրականներու հետ կ'իջնէին դիւր գիշերով:

Նաւը ճամբայ ելաւ շատ նպատաւոր քամիով մը ու իրիկունը ձենովա հասաւ, ուր երկու եղբարք առաջին անգամ փետայ եղան անպսակ, ինչպէս նաև Ռաօթանեան:

Քիչ մը ատեն ձենովա կենալէ, ու հոն իրենց պետքացու բաները առնելէ վերջը՝ այս երեք նորակազմ ընտանիքները կրետէ հասան ու Քանտիա անունով քաղաքին մօտ հաստատուելով՝ շատ գեղեցիկ երկիրներ ու ամարանոցներ գնեցին: Շատ լաւ կ'ապրէին հոն ձիւրով, բազմաթիւ ծառաներով, և ամեն օր նոր մէկ հանգէս մը կամ իրեն սիրուհիներու նոր զուարճութիւն մը կ'ընծայէին, մէկ խօսքով ուրախութեան ու զուարճութեան մէջ կը լողային:

Բայց որովհետև մարդ ամեն բանէ կը ձանձրանայ, նոյն իսկ երջանկութենէ, և ամենէ դեղանի ու սկզուն

կինն անդամ իր յատկութիւնները կորսնցուցած կ'ըլլայ զայն ազատօրէն վայելողին համար, պատահեցաւ որ Ռաօթանեան իր տիրուհիէն այն աստիճանի պաղեցաւ, որ անոր անհաւատարմութիւնն ընել ուզեց: Հանդէսի մը մէջ գտնուելով՝ բարձրաստիճան ու մանկահաս օրերորդ մը տեսաւ ու այնքան հաւանեցաւ՝ որ սիրահարեցաւ, ու թէև իր այս նոր զգացումը ամենէն՝ մանաւանդ Նինէթէն պահելու աշխատեցաւ, բայց այն աղջկան բրած յաճախ այցելութիւնները, ի պատիւ անոր տուած հանդէսները ու անոր գտնուած տեղը գտնուելու եռանդը՝ կասկածներ տուին Նինէթին որ իր սիրականը սաստիկ կը սիրէր:

Նոյն վայրկեանէն ի վեր Ռաօթանեան ո՛ր որ երթար՝ Նինէթ ալ անոր կը հետեւէր կամ զայն լրտեսելու տար, յետոյ կը յանդիմանէր: Իր նախանձը այնքան աւելցաւ որ տան մէջ ամեն օր մեծ փոթորիկներ կը վրթէին, ասանկով գործը աւելի կը բորբոքէր, վասն զի յայտնի բան է որ գժուարութիւնները միշտ ցանկութեանց հովհարներ են: Չեմ գիտեր թէ Ռաօթանեան կրետէի օրիորդին շնորհները վայելց կամ ոչ. բայց Նինէթ զանազան նշաններէ համոզուեցաւ թէ գործը ըմբոստ էր: Ասոր վրայ զգացած բարկութենէն սաստիկ մեղամաղձութեան մէջ ինկաւ և յառաջ որքան որ իր սիրահարը սիրած էր, սկսաւ զայն նոյնքան աւելի սիրելու: Իր կատարութեան ու ռիսկալութեան տեղ ու ինքզինքը իր կատարութեան ու ռիսկալութեան տալով՝ միտքը դրաւ զանի սպաննել: Այս նպատակով տեղափոխուեց յայն պառաւի մը դիմեց որ վարպետ թռնաւորիչ մ'էր, և ստակով ու աղաչանքով համոզեց զանի որ իրեն մահատու ըմպելի մը պատրաստէ, զոր Ռաօթանեանի խնայուց գիշեր մը: Թոյնին արդիւնքը շատ արագ եղաւ, ու անհաւատարիմ երիտասարդը նոյն գիշեր իր հոգին աւանդեց: Այս յանկարծաւ կան մահուան լուրը երկու եղբարց և երկու քոյրերուն՝ որոնք անոր պատճառը չէին գիտեր, սաստիկ վիշտ պատճառեց. Նինէթ ալ միտնեցուն պէս ցաւիկ կեղծեց իր ոճիբը ծածկելու համար, որն որ երեւան ելաւ սակայն:



Ասկէ քանի մ'ատենեաքք՝ արդարն Աստուած թողուց որ թոյն պատրաստող յոյն պառաւք բռնուի իր բրած ուրիշ մէկ՝ գէշ գործին համար, և նա հարցափորձի միջոցին բրած այլ և այլ խոստովանութեանց մէջ յայտնեց թէ Ռաֆթանեանի մահուան ալ մասնակից եղած էր իր պատրաստած թոյնովք, զոր Նինէթի տուած էր: Այս խոստովանութենէն ետքք՝ Կրեաէի դուքսը իր բնելիքը առանց մէկու մը յայտնելու շատ մը զինուորներու գլուխք անցած՝ դիշերով գնաց Մարսիլիացիներուն բնակած պալատը պաշարեց ու Նինէթը ձերբակալ բռաւ: Այս աղջիկը առանց հարցափորձի սպասելու՝ ամեն բան խոստովանեցաւ: Դիւրին է երեւակայել թէ Փուլք և Հիւկ սրբան զարմացան իրենց սիրուհիներուն քրոջը ձերբակալութեան պատճառը իմանալով: Մատըլէն և Պէրթէլ նմանապէս մեծ զարմանք ու վիշտ զգացին և ամենքը մէկ եղած աշխատեցան Նինէթը իր արժանաւոր պատիժէն ազատելու. բայց պարսպ տեղ, վասն զի դուքսը զան պատճելու յամառ որոշում մը բրած կ'երևար:

Մատըլէն, որ Պէրթէլէն աւելի գեղանի ու պղտիկ էր, յուսաց թէ դուքսին հետ ընտանութիւն հաստատելով, կարող կ'ըլլայ իր քոյրը ազատել, վասն զի դուքսը երբեմն հանդէսներու մէջ իրեն սիրոյ յայտարարութիւններ կայն բրած էր: Այս նպատակաւ բարեխօս մը զրկեց անոր ու իմացուց թէ իր փափաքները կատարելու պատրաստ էր եթէ իր քրոջը ազատութիւն չնորհէ և իրեն գործը բոլորովին գաղտնի պահէ:

Այս առաջարկութիւնը շատ հաճութիւն պատճառեց դուքսին, և թէպէտ գեղեկեցաւ նա ընդունելու, բայց վերջապէս սէրը արդարութեան յաղթելով՝ հրաման տուաւ (Մատըլէնի հաւանութեամբ) որ Փուլք և Հիւկ ձերբակալուին, պատրուակելով՝ թէ անոնք ալ հարցափորձել պէտք է հասկընարու համար թէ արդեօք Նինէթի հետ մեղաակից չեն, և ինքը հետեւեալ դիշերը գաղտնի Մատըլէնի քով գնաց: Ասկէ յառաջ հոգ տարած էր ձայն հանելու թէ ոճրագործ Նինէթը ասպրակի մը մէջ դնելով՝ ծովը նետել տուած էր, և զան

նոյն դիշեր իր շնորհատու և ողորմաւէր ձեռքը յանձնեց ասպրակով որ իսկոյն հեռացնեն զանի Կրեաէէն, թէ ոչ պիտի ստիպուէր իրօք զան պատճել եթէ փախած չըլլայր երևան ելնէր:

Երկրորդ օրը երկու եզրաքր բանտէն արձակուեցան և որովհետեւ կը կարծէին թէ Նինէթ խեղդուած է՝ սկսան իրենց սիրուհիները մխիթարել: Սրբան որ Մատըլէն կ'աշխատէր Նինէթը պահել, Փուլք հասկըցաւ որ հոն էր նա ու շատ զարմացաւ, մտնաւ անդ դիտելով որ՝ անոր ազատումը գաղտնի պահել կ'ուզէին: Իսկոյն յիշեց նա երբեմն դուքսին Մատըլէնի համար ունեցած սէրը՝ և չտարակուսեցաւ թէ իր սիրուհին շնորհներով անոր փրկութիւնը ծախու առնուած էր: Իր աս կատկածները բացաւ նա Մատըլէնի որ ճշմարտութիւնը պահելու համար երկար ճառ մ'ըսաւ անոր: Աս ճառէն ոչ միայն չհամոզուեցաւ Փուլք, այլ և աւելի կասկածելով՝ սկսաւ սպառնալիքներ ընել: Մատըլէն ասոնցմէ վախցած՝ իր քրոջը համար ունեցած սիրոյն պատճառաւ բրած յանցանքը խոստովանեցաւ: Այս խոստովանութիւնը գաշտնի հարուած մ'եղաւ իր սիրականին որ միայն իր բարկութիւնը ու կատաղութիւնը մտիկ ընելով՝ իր սուրբ քաշեց ու իր սիրուհին սիրաբ խօթեց, որ իր առջև ծնկան վրայ եկած էր ներում խնդրելու համար: Աս բրածին վրայ դուքսին բարկութենէն վախնալով՝ Փուլք գնաց Նինէթը գտաւ ու առանց բան մը յայտնի ընելու ըսաւ թէ եկած էր իսկոյն զինքը փախցնել դուքսին ձեռքէն ազատելու համար: Նինէթ՝ որ իրօք փախչելու պատճառներ ունէր, կարծելով թէ յանկարծ զինուորներ եկած էին զինքը բռնելու, իր քոյրերուն մնաք բարեւ չքսած ճամբոյ երաւ անոր հետ՝ ձեռքին տակ գտնուած բոլոր ստակը առնելէն վերջը:

Երկու փախտատականները ամենամօտիկն առահանց խառ երթալով՝ նաւ հեծան ու անկէ 'ի վեր աներկեցիկ եղած են: Դուքսը Մատըլէնի մահը իմանալով՝ Հիւկն ու անոր սիրուհին բռնել տուաւ: Թէ և անոնք Փուլքի ու Նինէթի փախտատեան մասին բոլորովին անմեղ ըլլալուն շատ բարեբեցին, սակայն հարցափորձի են:















Մարտիկ ձեռքերը, թևերը և սրունքները այնպէս գալարեց՝ քիթը, բերանը ու աչքերը անանկ ծուեց որ յանկարծ զարհուրելի կերպարանք մ'առաւ։ Զինքը տեսնողը գրաւ կը դնէր թէ նա բոլոր անդամներով հաշմէր։ Յետոյ իր երկու ընկերները զինքը բռնեցին ու առին եկեղեցին տարին, սկսան լալազին անդաչել և Աստուծոյ սիրուն պաղատել որ ժողովուրդը իրենց ճամբայ բանայ, որպէսզի սուրբին մտնենան։ Բաղնութիւնը իրօք բացուեցաւ այս երեք սատանաներուն ճամբայ տարու համար, որոնք ամենուն նայուածքը իրենց վերայ գարձուցած էին, «ճամբայ տուէք, հիւանդին ճամբայ տուէք» պոռալով, մինչև որ սուրբ Արինօփ մարմնոյն քովը հասան։

Ան ասուն եկեղեցւոյն մէջ խորին լուծիւն մը կը տիրէ, բոլոր հանդիսականները գերբնական դէպք մը տեսնելու ակնկալութեամբ անշարժ կը մնան իրենց նայուածքը Մարտիկին վրայ սեւեռած։ Ասիկա որ խիստ վարպետ գերատան մ'էր, ինքզինքը սուրբին մարմնոյն վրայ դնել կու տայ և քանի մը վայրկեան այնպէս կենալէ վերջը կ'սկսի կամաց կամաց իր մէկ մատը՝ յետոյ միւսը, անկէ վերջ ձեռքը, հուսկ յետոյ թևերը և անդդայաբար միւս բոլոր անդամները շարժել։

Ասոր վրայ բոլոր եկեղեցին հանդիսականներու ազդակներով կը թնդայ. բխրաւոր մարդիկ սուրբ Արինօփ գովեստը կը հռչակեն միաձայն և աղմուկը այնչափ կը մեծնայ ու կը բազմապատկուի որ ահեղ որոտումի ձայնն անդամ լսելի չէր կրնար ըլլալ։

Սակայն գոթազգաբար սուրբին մարմինէն քիչ հեռու կը գտնուէր նաև ուրիշ Թլորանացի մը որ շատոնց ի վեր Մարտիկը կը ճանչնար, բայց այն միջոցին չը կրցած էր որոշել զայն անոր կեղծ հաշմատութեանը պատճառաւ, բայց քիչ մը վերջ զան իր նախկին բնական կերպարանքով տեսածին պէս. «Յանկարծակ մահու դաս, պոռայ, Աստուծմէ չվախցող թշուառական, միթէ Թլորանոէն մեր սուրբը հեգնելու եկա՞ր հաշմանդամ ձեւանալով։

— Ի՞նչ կ'ըսես, հարցուցին քանի մը Թրէփիցիներ

այս խօսքերը լսելով, միթէ այս մարդը իրօք անդամալոյծ չէ՞ր։

— Զէ, պատասխանեց Թլորանացին, թշուառականը մեզմէ ալ քաջառողջ է, և միանգամայն ճարպիկ խեղկատակ մը՝ որ ուզած ձեք կ'առնէ 'ի հարկին։

Հազիւ թէ այս խօսքերը կ'արտասանէր նա՝ երբ բազմաթիւ Թրէփիցիներ առանց աւելի խօսք լսել ուզելու ամբոխը հրճեցնելով ճամբայ բացին ու մինչև Մարտիկի կայնած տեղը հասան, պոռալով՝ — Բռնեցէք առ ամբարիշտը որ ՂԱստուած ու անոր սուրբերը ճաղրելու եկած է հոս, ոչ անդամալուծութիւն ունի նա և ոչ փորլուծութիւն, քիթն ու բերանը յատկապէս ծամրկեր է մեր սուրբը և նոյն իսկ զմեզ հեգնելու համար։

Աս ըսելով վրան կը յարձակին, զանի գետինը կը զարնեն, մազերը կը վետտեն, վրան գլուխը կ'պատռեն, ու գլխին ծեծի սարսափելի տարափ մը կը տեղադրեն։ Ամեն մարդ այնքան զայրացած էր անոր դէմ՝ որ մտնուանդ չեղողները և ամենէ խելօքներն անդամ՝ անոր կից մը կամ բռնցի հարուած մը կ'իջեցնէին. մէկ խօսքով չկար հանդիսական մը որ աստուածահաճոյ գործ մ'ըրած ըլլալ չհամարէր գէթ ապտակ մը զարնել անոր։ Դարապ տեղ հարհք ու գլխութիւն կը խնդրէր նա. հարուածները իրարու կը յաջորդէին անդուր։

Սթէքի և Մարկոս անդամալուծութեան խաղին, աս լուծումը տեսնելով՝ հասկըցան որ գործերնին դէշ էր, և վախալով որ իրենց գլուխն ալ միևնոյն փորձանքը չդայ, չհամարձակեցան իրենց խեղճ բնկերին օգնել. ընդ հակառակն որոշեցին միւսներուն պէս պոռալ։

— Զախմարտեցէք թշուառականը։

Սակայն և այնպէս զանի ամբոխին ձեռքէն ազատելու ճար մը կը փնտռէին, առանց որոյ խեղճ Մարտիկը անպատճառ չարաչար պիտի մեռնէր։

Մարկոս գլխնալով որ եկեղեցւոյն դրան քովը ոտտիկաններ կային՝ փութով վազեց անոնց գլխաւորին քով ու ըսաւ,

— Արդարութիւն կը խնդրեմ, պարոն, հոս քսակահատ մը կայ որ հիմա քսակս դողցաւ, և որու մէջ



քսան ոսկի, ունէի. կ'աղաչեմ, պարոն, բռնեցէք զանի որ ստակս առնեմ:

Անմիջապէս երկու ոստիկաններ դժբաղդ Մարտիկին նահատակութեան տեղը վաղեցին և մեծ դժուարութեամբ զայն կատաղի ժողովրդեան ձեռքէն առնելով՝ կառավարութեան պալատը տարին:

Խել մը ջերմեռանդներ՝ որոնք կը կարծէին թէ Մարտիկը զիրենք ծաղրել ուղեր է, հետեւեցան անոնց և լսելով թէ իբրև քսակահատ բռնուեր էր նա, իրենց վրէժը լուծելու համար յարմար առիթ մը սեպեցին զայն: Հետեւաբար ամեն ոք սկսաւ սրուալ թէ Մարտիկ իրենց ալ քսակը գողցեր էր:

Աս գանգաւաններու վրայ՝ ոստիկանութեան տեղակալը, որ խիստ ու անաչառ մարդ մ'էր, Մարտիկը սենեակ մը խօթելով՝ անոր հարցափորձը սկսաւ: Մարտիկ աւանց իր բանտարկութիւնը հոգ ընելու՝ խեղկատակ պատասխաններ կը տար անոր. որու վրայ գատաւորը այնքան բարկացաւ որ զանի տանջանքի գնել տուաւ և բրած գողութիւնները խոստովանեցնել տարով՝ սպառնացաւ կախելու գատապարտել: Տանջանքէն ետքը գատաւորը դարձեալ իր հարցումները կրկնեց, բայց ողովմելի սղան տեսնելով որ լոկ ուրացում մը բանի մը չէր ծառայեր:

—Տէր խմ, բտաւ գատաւորին, պատրաստ եմ ճըշմարտութիւնը խոստովանելու, միայն թէ ամեն զիս ամբաստանողները հաճին բսել թէ ի՞նչ ատեն և ո՞ւր տեղ իրենց քսակը գողցայ, և անկէ ետք բրածներս ձեզի անկեղծօրէն պատմեմ:

Դատաւորը հաւանեցաւ ու ամբաստանողներէն մէկ քանին բերել տարով՝ զանոնք զատ զատ հարցափորձեց: Մէկը կ'ըսէր թէ ուժ օր առաջ գողցեր էր, միւսը վեց, երրորդը չորս և տմանք ալ կը սյնդէին թէ գողութիւնը նոյն օրը բրած էր: Մարտիկ անոնց պատասխանները մտիկ ընելէն վերջը՝

—Ամենքն ալ սուտ կ'ըսեն, բտաւ գատաւորին, և կրնամ ձեզի լաւ ապացոյցներով հաստատել բսածս, տէր խմ, վասն զի հազիւ թէ քանի մը ժամ կայ որ

այս քաղաքը եկայ առաջին անգամ, և երանի թէ չը գայի, վասն զի հոս հասածիս պէս՝ իմ սև բաղդս զիս տարաւ այն կեղեցին ուր նոր սուրբին մարմինը դրուած էր և ուր սեղ կերած ծեծիս քանակութիւնը վրաս գտնուած նշաններէն կրնաք հասկընալ: Եթէ բսածիս չէք հաւատար, կառավարութեան պաշտօնեաները որոնք ճամբորդներուն անցագիրը կը ընեն, և նոյն խնդ պանդոկապետս կրնան վկայել. եթէ այս տեղեկութիւններէն ետքը բսածիս ճշմարտութեանը համազուիք, հաւաստի եմ թէ այս զրպարտիչներու անսալով՝ զիս չէք գատապարտեր այնպիսի պատիժի մը որու արժանի չեմ, և զոր ձեր սրդարասիրութիւնը կը մերժէ անչուչաւ:

Այս միջոցին Մարկոս և Աթէքի՝ գատաւորին խոստութեանէն դող ելած՝ և գիտնալով որ Մարտիկը տանջանքի դրեր էր նա, մեծ հոգի մէջ էին իրենց ընկերին համար, ու չգիտէին թէ զանի ազատելու համար ի՞նչ ընեն. —Անճոռնի բան մ'ըրինք, կ'ըսէին մէջերին, և զանի աղբնոցէն հանեքով՝ կոյսնոցը նետեցինք—: Ասոր վրայ ելան իրենց պանդոկապետին գացին, ու եղբրութիւնը պատմեցին անոր: Պանդոկապետը բաւական խնդալէ վերջը՝ առաւ զիրենք քաղաքին մէկ երեւելի վաճառականին տարաւ որ կառավարչին վրայ մեծ ազդեցութիւն ունէր: Մարտիկին գլուխը եկած փորձանքը կէտ առ կէտ անոր պատմելէ ետքը զանի աղաչեցին որ ատ խեղճ տղուն վրայ դիտայ, և ձեռքէն եկած օգնութիւնը չխնայէ: Վաճառականն ալ այս պատմութիւնը լսելով շատ խնդաց՝ ու կառավարչին երթալով՝ Մարտիկը բերել տուաւ և անոր ազատութիւնը ստացաւ: Չանի բերելու գացողները մէկ շապիկով գատաւորին առջև ծնկան վրայ եկած գտան, վասն զի գատաւորը անոր բսածներուն ականջ չէր դներ, ու անպատճառ կախել կ'ուզէր:

Մարտիկ իր ազատչին առջևը ներկայացածին պէս իր երախտագիտական գգացումը չկրնալով լեզուով յայտնել գնաց անոր ոտքերու առջև խնկաւ որ իրեն կեանքը չնորհեր էր, այս արկածէն Մարտիկ խոհեմութեան մեծ գաս մ'առաւ իր բոլոր կենաց մէջ, և խեղկատակ ու



Ճաղրածու բնութիւնը փոխելով՝ միշտ ծանրաբարոյ ու հանդարտ բնութիւն մ'ունեցաւ:

ԿՐԿԻՆ ԳԼԸՏՈՒԹԻՒՆ

Վերոն սյի մէջ տտեհօք ծաղկահասակ ու դեղանի օրիորդ մը կար աղնիւ բնտանիքէ՝ որ տաղանդաւոր առաջատի մը հետ ամուսնացեր էր: Որովհետեւ մարդ շատ անգամ՝ կը ձանձրանայ շարունակ միւսնոյն կերակուրը ուտելէն, այս տիկինն ալ աչքը դուրս տնկեց ու սիրահարեցաւ Լիօնէ անուն աղնուականի մը՝ որ թէեւ շնորհքով ու երիտասարդ՝ բայց բնութեամբ քիչ մ'երկչոտ էր: Երկուքն ալ հաւատարմապէս զիրար կը սիրէին ուստի քիչ ժամանակէ ետքը սկսան իրենց սէրը փորձով հաստատել:

Բաւական ժամանակ երջանիկ կեանք մ'անցուցին անոնք, բայց դժբաղդարար Լամպերթին անունով առաջատ մ'եկաւ զայն բնդհատեց:

Լամպերթինի սատտիկ սիրահարուեցաւ նորատի կնոջ որ զայն քիչ մը տգեղ ու կոշտ գտնելով՝ չհամակրեցաւ անոր: Ասպետը դեռապանուհիի մը միջոցաւ շատ նամակներ ու բնծայներ դրկելէն ու պարագայ տեղ տառապելէն ձանձրացած՝ տիկնոջ իմացուց որ հազար տեսակ դէշ խաղեր պիտի խաղայ իրեն՝ եթէ նա իր անտարբերութեան մէջ հաստատ մնայ:

Տիկինը անոր բնութիւնը ճանչնալով՝ շտարակուսեցաւ որ իրօք բրած ոպտունալիքները կրնար ՚ի գործ դնել և անձնատուր բլլալով՝ անոր շնորհեց ինչ որ սիրով չէր ուզած շնորհել:

Տիկինը՝ որ Իզապօ կը կոչուէր, սովորութիւն ունէր ամառը գեղը ունեցած իր մէկ տունը անցնելու. ժամանակէ մը հետէ հոն էր նա, երբ իր էրիկը գործի մը պատճառաւ քանի մ'օր բացակայ բլլալու ստիպուեցաւ. նա մեկնելուն պէս՝ տիկինը լուր դրկեց Լիօնէին որ գայ հետը դուարձանայ: Ձեզ կը թողում երեւակայել թէ երիտասարդը ինչ հաճութեամբ այս հրաւերը ընդունելով՝ բացակայ էրիկին փոխանորդութիւնը բրաւ արժանապէս:

Միւս կողմէ Լամպերթինի ալ տիկնոջ էրկան բացակայութիւնը իմանալով՝ գեղանի Իզապօն տեսնելու գընաց: Դուռը զարկաւ: Այն ինչպատուհին տեսաւ զան, իսկոյն վազեց իմաց տալու իր տիրուհւոյն՝ որ նոյն միջոցին Լիօնէի հետ առանձին էր իր սենեկին մէջ: Կըրջոցին Լիօնէի հետ ամուսնակալ այցելութիւնը որ նաք՝ գուշակել թէ այս անակնկալ այցելութիւնը որչափ տիկնոջ սիրտը թունդ հանեց: Բողբովին կը փաշափ վաքէր զանի ճամբել, բայց սատանայէն վախնալու չափ կը վախնար սաստեանն ու բան մ'ըսելու չէր համարձակեր, հետեաբար որոշեց իր ճշմարտ սիրականը անկողնին տակ՝ կամ ուրիշ մէկ տեղ՝ պահել մինչև որ սաստեանն ձեռքէն ազատի: Բնութեամբ վեհերոտ Լիօնէն՝ Իզապօի խորհուրդին հաճութեամբ անաց, որմէ ետքը սպասուհին զնաց դուռը բացաւ: Լամպերթինի ետքը սպասուհին զնաց դուռը բացաւ: Լամպերթինի ձիէն վար իջաւ և զան բակին մէջ կապեց: Տիկինը մինչև սանդղին գլուխը զինքը դիմաւորելու զնաց հանդարտ ու զուարթ դէմքով մը ու բարեկէն վերջը՝ անոր այցելութեան նպատակը հարցուց: Լամպերթինի զանի գրկելէն վերջը պատասխանեց թէ էրկան բացակայութիւնը իմանալով՝ զինքը տեսնելու եկած էր, Տիկինը շնորհակալ եղաւ անորմէ ու վեր հրամցուց, և կինը շնորհակալ մարդ չէր, գուռը գոցելով՝ սաստեալ որ գանդաղ մարդ չէր, գուռը գոցելով՝ սկսաւ տիկինը ստիպել իր ցանկութիւնը գոհացնելու: Բայց կերևայ թէ այն օրը տիկնոջ համար անյաջող օր մ'էր, վասն զի յանկարծ իր էրիկը վրայ հասաւ. սպասուհին պատուհանէն անոր գալուստը տեսնելով՝ իր տիրուհիին սենեակը վազեց «Տիկին, պուալով, տէրս տիրուհիին սենեակը վազեց «Տիկին, պուալով, տէրս կու գայ, ձիւն ու կարկուտ, աս ինչ փորձանք է, հի-



մա բախը պիտի մտնէ, վասն զի շատ հեռու չէ արդէն։  
 Իդրացո տեսնելով որ երկու դանակի մէջ մնացեր էր, և զգալով թէ անկարելի էր ասպետն ալ պահել անոր ձիուն պատճառաւ, զոր իր էրիկը թերևս տեսած էր իսկ, քիչ մնաց որ մարի։ Այս նեղ դրութենէն ազատելու համար ինչ ճամբայ բռնելիքը չէր գիտեր, երբ վախէն իր միտքը աւելի ևս նրբանալով՝ հնարք մը գտնել տուաւ իրեն։

— Լամպերթինի, բաւ նա ասպետին, եթէ զիս իրօք կը սիրես և կ'ուզես իմ կեանքս ու պատիւը ազատել, քեզի բռնելիքս բրէ, անմիջապէս սուրդ քաշէ ու բարկացած երևցիր, յետոյ վար իջնելով՝ պօռն, «Ես զանի ուր գտնելիքս գիտեմ» ու ձիգ առնելով գնաւ։ Եթէ էրիկս զքեզ արգիլել ուզէ՝ կամ թէ հարցնէ որու դէմ զայրացած բլլալդ, մինակ ան բսած խօսքերս կրկնէ շարունակ։ Եթէ ձիուդ վրայ գտնուած ասանդ զարձեալ պնդէ նա, չլսելու զարնելով առ քայէ, և ինչ որ ալ բլլայ, մի պատասխաներ բնաւ, ահա մինակ այս շնորհքը կը խնդրեմ քեզմէ։

Լամպերթինի՝ տիկնոջ այս բսածները կէտ առ կէտ գործադրելու խօսք տուաւ։

Տիկնոջ էրիկը բակին մէջ կապուած ձի մը տեսնելով՝ կ'սկսէր ենթադրութիւններ բնել, ու գործին էութիւնը հասկընալու համար կնոջը սենեակը ելնելու վրայ էր, երբ սանդղին ոտքը Պարոն Լամպերթինիի հանդիպեցաւ որ կրակ կարած էր թէ յոգնութենէն և թէ գործին կիսկատար մնալէն։

— Ի՞նչ ունիս, ասպետ, բաւ նա, անոր դէմքէն զարհուրած։ Ասպետը պատասխանեց,

— Իժոխք ու անէժք, ան թշուառականք ուր գտնելիքս գիտեմ ես, յետոյ իր սուրբ պատեանք գնելով ձիուն վրայ ցատկեց ու կայծակի արագութեամբ դուրս պրացաւ։

Էրիկը այս տեսարանին վրայ զարմացած՝ վեր ելաւ, ու սանդղուն դուռը լեղապատառ կնոջը հանդիպելով՝ — Աս ի՞նչ աղմուկ է, կնիկ, Պարոն Լամպերթինի կրակ կարած ի՞նչ կ'փնտռէ հոս . . . :

Բարակմիտ Իդրացո անատեն իր ննջարանին դրան մօտեցաւ, որպէս զի Լիօնէ իր տալիք պատասխանը լսէ, ու բաւ։

— Աստուած իմ, աս ի՞նչ բան էր, կեանքիս մէջ ասանկ վախ մը քաշած չէի։ Քիչ մ'առաջ փողոցին դուռը բաց մնացեր էր էր, մէյ մ'ալ նայիմ որ ինձ անձանօթ երիտասարդ մը լեզուն դուրս ինկած հոս մտաւ Պ. Լամպերթինիի կատաղութեան դէմ ապաւեն մը դանելու, և եկաւ ուղղակի ննջարանս մտաւ ու սկսաւ պօռալ, «Աստուծոյ սիրուն, տիկին, զիս ազատեցէք»։ Իր ուժ բլլալը, վախնալուն պատճառը և այլն հարցնելու վրայ էի՝ երբ ետեէն Պ. Լամպերթինի հասաւ գոչելով. «Ո՛ւր է գարշելին, ո՛ւր է»։ Անմիջապէս ննջարանիս դուռը գոցեցի անոր ներս մտնելը արգիլելու համար և նա իր կատաղութեան հակառակ՝ բռնութիւն չբանեցընելու չափ քաղաքավարութիւն ունեցաւ և սենեակս չմտնելով՝ պօռալ կանչելէն վերջը վար իջաւ գնաց, ինչպէս որ տեսար։

— Շատ աղէկ վարուեր ես, կնիկ, պատասխանեց էրիկը։ Շատ ցաւալի բան պիտի բլլար եթէ Լամպերթինի մեր տանը մէջ սպաններ զանի և արդէն բրածը անվայել էր փախստականք մինչև քու ննջարանը հաւածելով։

— Չեմ ալ գիտեր թէ անձանօթը ո՛ւր պահուեցաւ, կրկնեց տիկինը . . .

— Ո՛ւր ես նայիմ, ո՛ւր ես, պօռաց անատեն էրիկը, հիմա կրնաս դուրս ելնել, պարոն, թշնամիդ դնաց։

Լիօնէ՝ որ ամեն բան լսած էր, աւելի իննքվեց էրիկին՝ քան թէ Լամպերթինի դարուստէն զարհուրած՝ անկողնին տակէն դուրս ելաւ։

— Պարոն Լամպերթինի հետ ի՞նչ է տարբերութիւնն իդ, հարցուց տիկնոջ էրիկը։

— Կ'ապահովընեմ զձեզ, պարոն, պատասխանեց Լիօնէ, որ ես ալ բան մը չեմ գիտեր ու իրեն բան մը բրած չեմ։ Կ'երևայ թէ զիս ուրիշի մը տեղ առած է, վասն զի ասկէ քիչ մ'առաջ փողոցին միւս անկիւնը վախն զի ասկէ քիչ մ'առաջ փողոցին միւս անկիւնը գիմացս ելաւ, ու մէկ երկու վայրկեան երեսս նայելէն



եւորք, յանկարծ սուրբ քաշելով՝ կատաղորէն վրաս յար-  
ձակեցաւ պօռալով՝ «Անդգամ, վերջին ժամդ է» այն-  
պէս որ ալ առանց իր այս բնթացքին պատճառք հար-  
ցնենլու՝ ոտքերուս բոլոր ուժով կծիկը դրի, ու հոս ա-  
պաւինեցայ ուր այս տիկինը կեանքս ազատեց:

—Արի, բանդ գնա, բաւ էրիկը, ալ վախու տեղ  
չունիս, եթէ կ'ուզես հետդ ես ալ դամ մինչև տունը  
քեզի բնկերանալու, և յետոյ եթէ պատշաճ կը դա-  
տես՝ կրնաս երթալ Լամպերթինին գտնել, ու բացատ-  
րութիւն ուղել իրմէ:

Բայց տիկինը քաղաքաւարական պարտք համարեց  
իրեն՝ կեղծ անձանօթը ճաշի վար դնել, որմէ ետքը  
տարփածուն ու էրիկը մինչև տունը գացին միատեղ:  
Նոյն իրիկունը իսկ Լիօնէ Լամպերթինիի հետ խօսեցաւ  
եղածին վրայ, ինչպէս որ նրբամիտ Իզապօն ապսպրած  
էր իրեն և այսպէսով էրիկը իր կնոջ անհաւատարմու-  
թեան վրայ կասկած մը չունեցաւ:

ՓԻԼԻՊՊՈՍ ՄԻԼԿԱՆԻ

Մօնֆէրա մարքիզը իր ժամանակին ամենէ մեծ ու  
ամենաբաջ գնդապետներէն մէկն էր: Իր արժանիքը  
զինքը եկեղեցւոյ վառակրութեան աստիճանին հասցու-  
ցած բլլալով՝ նա ստիպուեցաւ քրիստոնէից մեծ բանա-  
կով մը, որ Սուրբ Երկրին տիրելու կերթար՝ միանալ:

Օր մը՝ երբ Ֆրանսայի Փիլիպպոս Միականի թագա-  
ւորին առջև ասոր քաջագործութիւնները կը պատմէին՝  
պալատականներէն մէկը բաւ թէ աշխարհիս մէջ մար-  
քիզէն ու մարքիզուհիէն աւելի գեղեցիկ զոյգ մը չը

զանուիր. թէ որքան որ մարքիզը իր մեծ յատկու-  
թիւններովը միւս զօրականները կը գերազանցէր, նոյն-  
քան իր կինն ալ կը գերազանցէր միւս բոլոր կիները՝  
իր առաքինութեամբ և իր գեղեցկութիւնովը:

Այս խօսքերը թագաւորին մտքին վրայ անանկ ար-  
պաւորութիւն մ'ըբին որ առանց երբէք մարքիզուհին  
տեսած բլլալու, այն վայրկենէն սկսելով՝ սիրահարեցաւ  
անոր, և որովհետեւ ինքն ալ Պաղեստին երթալու վրայ  
էր, միաքը դրաւ ճենովայէն նաւ հեծնել, որպէս զի  
մինչև այն քաղաքը ցամաքէն երթալով՝ Մօնֆէրայէն  
անցնելու առիթ ունենայ և այս գեղանի անձը տեսնէ:  
Նա այս միջոցով կը յուսար թէ մարքիզին բացակայու-  
թեան չնորհիւ պիտի կրնար իր փափաքին համնիլ:

Թագաւորը իր յատակագիծը գործադրելու չուշա-  
ցաւ. իր ուղեկիցները և այն առջևէն դրկելէն ետքը՝  
քանի մը ազնուականներով ճամբայ ելաւ, և մարքի-  
զուհիին բնակած տեղին չմտեցած՝ լուր դրկեց անոր  
թէ երկրորդ օրը հետք պիտի ճաշէ: Տիկինը՝ որ խո-  
հեմ ու իմաստուն էր, պատասխանեց թէ իրեն եզած  
այս պատիւէն չատ չնորհակալ էր և ձեռքէն եկածը  
պիտի ընէր իշխանը լաւ ընդունելու: Բայց իներքուստ  
անհանգիստ էր նա մտածելով որ այս հզօր ինքնակա-  
լը անշուշտ իր ամուսնոյն բացակայութիւնը գիտէր, հե-  
տևաբար այս այցելութեան պատճառք չէր կրնար ի-  
մանալ՝ այլ լաւ մը խորհելէն վերջը չտարակուսեցաւ որ  
իր գեղեցկութեան համբաւը զինքը նոյն պահուին ար-  
ժանացուցեր էր: Սակայն իր աստիճանին արժանապատ-  
ւութիւնը պահելու համար որոշեց ամեն հնարին մե-  
ծարանքն ընել անոր, ուստի շրջականերու բոլոր առ-  
պետները ի ժողով գումարեց՝ այս պարագայիս մէջ  
իր ընելիքներուն վրայ անոնցմէ խորհուրդ հարցնելու  
համար, վասն զի մի միայն սեղանի հոգն ու կերակուր-  
ներու բնարութիւնն ինքը կ'ուզէր վրան առնուլ: Ասոր  
համար հրաման բրաւ շատ մը վառեակներ գնել ու իր  
խոհարարներու ապսպրեց որ կրցածնուն չափ ուրիշ ե-  
րևոյթներ տան անոնց ու նոյներով զանազան կերակուր-  
ներ պատրաստեն առանց ուրիշ միս խառնելու:



Երկրորդ օրը թագաւորը եկաւ ինչպէս որ իմացուցած էր, և մեծ պատուով բնդուներով՝ Մարքիզուհիէն չտփազանց դոհ եղաւ, և տեսնելով որ անոր գեղեցկութիւնը երեակայածէն ու լսածէն ալ գերազանց էր, իր սէրը աւելցաւ համեմատաբար: Սկսաւ զանի գովել սաստիկ՝ ու իր խօսքերը իր սիրտը վառող զգացման տկար մէկ արտայայտութիւնն էին միայն: Յետոյ՝ քիչ մը յոգնութիւն առնելու նպատակաւ մասնաւորապէս իրեն համար պատրաստուած սենեակը քաշուեցաւ և ճաշի ժամուն՝ Նորին Վեհափառութիւնն ու Մարքիզուհին սեղան նստան առանձին:

Համագամ՝ կերակուրները, պատուական գինիները և գեղանի կնոջ մը հետ ճաշելու հաճութիւնը՝ թագաւորը գինովացրեց էին: Սակայն նա դիտած ըլլալով որ ամեն մէկ նոր կերակուր բերելուն՝ դարձեալ հաւ կը հանէին իրեն, թէ և տարբեր կերպով պատրաստուած, քիչ մը զարմացաւ ասոր վրայ՝ վասն զի նշմարած էր որ նոյն երկիրը ուրիշ տեսակ թռչուններ ու նոյն իսկ երէներ կը պարունակէր և հասկըցաւ որ եթէ տիկինն ուզէր կրնար անոնցմէ ալ պատրաստել տալ: Բայց և այնպէս զինքը վառող տարփական ոգին արգիլեց զինքը սրեւէ դժգոհութիւն մը յայտնելու, մասնաւորապէս որ միւսնոյն միտով պատրաստուած այս խելմը կերակուրներուն մէջ՝ Մարքիզուհիին քանի մը փաղաքշական խօսքեր ուղղելու առիթը գտնելուն դոհ եղաւ, — Տիկին, քսաւ անոր խնդալով, միթէ միայն այս երկրին մէջ հաւերը առանց աքաղաղի կը ծնին:

Անշուշտ այս խօսքերովնա ակնարկելի ուզէր թէ այս քան հաւերու մէջ ոչ աքաղաղ և ոչ աքլոր մը գտած էր: Մարքիզուհին այս հարցման միտքը շատ լաւ հասկըցաւ և տեսնելով թէ իր տրամադրութիւնները հասկըցնելու վայրկեանն եկած էր, արիւղաբար պատասխանեց անիջապէս.

— Զէ, Վեհափառ Տէր, բայց այս երկրին կիները երբ միւս երկիրներու կանանց կը նմանին, թէ և հաւառուով և աստիճանով անոնցմէ տարբերին:

Թագաւորն այս խօսքին լողոր ոյժն զգալով՝ անա-

տեն հասկըցաւ թէ Մարքիզուհին ինչ նպատակաւ իրեն այնքան վառեակներ կերցուցեր էր միօրինակաբար: Եւ տեսնելով որ գործն աւելի երկնցնելը աւելորդ էր և թէ իր հոգատարութիւնները՝ այս տեսակ կնոջ մը քով անարգիւն պիտի մնային և այսպիսի պարադայի մէջ բռնութիւն բանեցնելն ալ յարմար չէր, իսկոյն խօսքին ուրիշ կերպարան տուաւ, և այնքան թեթեօրէն կնոջ սէրէն բռնուելուն զղջալով՝ մտածեց որ իր պատուոյն համար լաւագոյն էր իր զգացած սէրը մարելու աշխատիլ ու մնտի յոյսերով ալ չսնանիլ:

Ուստի ալ այս ազնիւ կնոջ հետ չինկաւ՝ անորմէ նոր ու կծու պատասխաններ չստանալու համար և սեղանէն ելածին պէս՝ իր այցելութեան նպատակը աւելի աղէկ ծածկելու համար՝ իսկոյն դէպ ի ճէնով ճամբայ ելաւ, իրեն եղած պատիւներուն համար Մարքիզուհիէն շնորհակալ ըլլալով:

Վ Ե Ր Զ Ա Ռ Ա Զ Ի Ն Հ Ա Տ Ո Ր Ե



Ներածութիւն . . . . .	4
Հրէի մը քրիստոնէութեան դառնալուն հետա- քրքրական պատճառները . . . . .	11
Մերունիններու տօնացոյցը . . . . .	15
Օրօրոցը . . . . .	20
Ակն ընդ ական, եղջիւր ընդ եղջեր . . . . .	25
Գանակոծ և գոհունակ կննքվեց էրեկը . . . . .	29
Հայ գերին . . . . .	34
Յնգիտաբար ԱՅութիւն ընող խոստովանահայրը . . . . .	40
Կուսանոցին պարտիզպանը . . . . .	49
Կծծի կնիկի խարդախ տարիածու . . . . .	56
Ակամայ փեսան . . . . .	59
Յանդուգն ձիապանը . . . . .	67
Խաբուած խաբեբան . . . . .	73
Գիւղին տերտերը . . . . .	85
Ուղղեալ նախանձոտը . . . . .	90
Խոստովանահայր էրեկը . . . . .	95
Աբբասուհին գդալը . . . . .	104
Արքայութեան ճամբան . . . . .	107
Սողոմոնին խրատները . . . . .	113
Խայտառակեալ զրպարտիչը . . . . .	117
Նախանձու դժբաղդութիւնները . . . . .	132
Վարպետ կնիկը . . . . .	138
Սրբակեաց բեռնակրին մահը . . . . .	142
Կրկին պարտութիւն . . . . .	148
Փիլիպպոս Միականի . . . . .	152



Handwritten text in the top left corner, possibly a page number or identifier.

« Ազգային գրադարան »



NL0109837



